

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

## Հայոց բանակ 25



# 219, Հունվար 2017 թ.

No 219, January 2017

شماره ۲۱۹ بهمن ماه ۱۳۹۵

# Այս համարում

## Հայերեն բաժին

- 1- Խմբագրական.....0
- 2- Հայաստանի Հանրապետություն.....1
- 3- Արևմտյան Հայաստան.....14
- 4- Սփյուռք.....19
- 5- Միջազգային.....22
- 6- Հասարակական.....23
- 7- Մշակույթ.....31

## Պարսկերեն բաժին

Արցախի պատմություն.....0-2

**Շապիկի առաջին էջում՝** Հայոց բանակ - 25

**Վերջին էջում՝** Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 219, Հունվար. 2017 No. 219, Jan.. 2017

ماهنامه لویس - شماره ۲۱۹ بهمن ماه ۱۳۹۵

## Մշակութային եւ հասարակական ամսագիր

### ԼՈՒՅՍ

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝  
**Էդ. Բաղդասարյան**  
Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան  
Թամ Ղարախանյան, Վաչիկ Վարդանյան  
Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Սաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խեչումյան  
Փոստարկղ **15875-9488** Թեհրան - Իրան  
Էլեկտրոնային փոստ՝ [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)  
Ինտերնետային հասցե՝ [www.louysonline.com](http://www.louysonline.com)

### LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

**Edic Baghdasarian**

[www.Edic-Baghdasarian.com](http://www.Edic-Baghdasarian.com)

WEB master: **Baruyr Baghdasarian**

**POBox 15875-9488 Tehran – Iran**

**E-mail : [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)**

**Internet : [www.louysonline.com](http://www.louysonline.com)**

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են  
չհամընկնել խմբագրության տեսակետներին:  
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին  
պարտադիր է:

### ماهنامه لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)

نشانی اینترنت: [www.louysonline.com](http://www.louysonline.com)

# Հայաստանը նշում է Բանակի կազմավորման 25-րդ տարեդարձը



Հայաստանում հունվարի 28-ին նշվեց Բանակի օրը, որը ամենակարեւոր եւ սիրված տոներից է:

1990թ. սեպտեմբերին Հայաստանի Գերագույն խորհուրդը ՆԳՆ կառուցվածքում «Հատուկ գնդի» ստեղծման որոշում ընդունեց, իսկ 1991թ. մայիսի 4-ին կառավարության որոշմամբ ստեղծվեց պաշտպանության կոմիտեն, իսկ դեկտեմբերի 5-ին ՀՀ նախագահի հրամանագրով պաշտպանության նախարար է նշանակվել Վազգեն Սարգսյանը:

1992 թվականի հունվարի 28-ին կայացվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության մասին» պատմական որոշումը, դրանով փաստելով Հայկական ազգային բանակի ստեղծումը: Հունվարի 28-ը տոն եւ ոչ աշխատանքային օր է հռչակվել արդեն 2001-ին:

Հայկական բանակի ձևավորման կարեւորագույն փուլ է համարվում 1988-1992 թվականները, որը համընկավ արցախյան պատերազմի ակտիվ փուլի հետ: Այդ շրջանում երկրի, ինչպես նաեւ ԼՂ-ի բնակչության անվտանգությունն ապահովում էին կամավորական ջոկատները:

Բանակի օրը հայ ժողովրդի համար հատուկ տոն է:

Հայոց բանակը հայրենիքի անվտանգության երաշխավորն է, անկախության խորհրդանիշներից մեկը: Հայաստանի հզոր Չինված ուժերի ստեղծումը եւ զարգացումը անկախության տարիների առանցքային ձեռքբերումներից մեկն է եւ ապագայում հայկական պետականության ամրապնդման գրավականը: Հայոց բանակի մասին խոսելիս մենք մեծ հպարտությամբ ենք համակվում՝ զինվորների եւ սպաների հերոսությունն ու խիզախությունը Հայաստանի պատմության մեջ ոսկե տառերով են գրված:

Հունվարի 28-ին Հայաստանը եւ ամբողջ աշխարհի հայությունը նշում են Հայոց բանակի կազմավորման 25-րդ տարեդարձը:

**Հայաստանի Հանրապետություն**

**Հայոց բանակը անկախ հայրենիքի անվտանգության երաշխավորն է  
Հայկական բանակ՝ Պատմական ակնարկ**

Հայոց բանակի ստեղծումն ու պատմությունն անքակտելիորեն կապված են հայոց պետականության ստեղծման պատմական իրողության հետ, քանզի պետությունն և բանակ հասկացությունները միմյանց պայմանավորող են, և դժվար է, եթե չասենք անկարելի, պատկերացնել մեկն առանց մյուսի: Ե՛վ մեկի, և՛ մյուսի համար ամեն ինչի սկիզբը եղավ 1988 թ. փետրվարը՝ սկիզբը Ղարաբաղի համար պայքարի, պետականության վերականգնման ու Ազգային բանակի ստեղծման: Հայոց բանակն իր կայացման ճանապարհին (ինչպես հայոց պետականությունն ինքը) անցավ մի քանի դժվարին ու առանցքային փուլ: Հիմնարար գործընթացների ու իր առջև դրված խնդիրների տեսանկյունից մեր բանակի անցած ուղին, ըստ իս, կարելի է բաժանել երեք փուլի:

Առաջին. 1988-ի փետրվար-1992 թվականի մայիս, երբ ղարաբաղյան շարժման ակտիվացման և հայ-ադրբեջանական հարաբերությունների ծայրաստիճան սրման պայմաններում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչության ռազմական անվտանգության ապահովումը դարձավ ավելի քան հրատապ:

Երկրորդ. 1992 թվականի հունիս-1994 թվականի մայիս, երբ արդեն անկախ Հայաստանի Հանրապետությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ միասին գտնվելով չհայտարարված, բայց փաստացի պատերազմի մեջ Ադրբեջանի հանրապետության հետ, միաժամանակ ձեռնամուխ եղավ նաև Ազգային բանակի ստեղծմանը:

Երրորդ. 1994 թվականի հունիսից մինչ օրս: Այս փուլը, կարելի է անվանել բանակաշինության, կայուն զարգացման, զորքերի մարտունակության բարձրացման, կարգապահության ամրապնդման, միջին և բարձր սպայական անձնակազմի պատրաստման ու վերապատրաստման, ինչպես նաև բանակ-հասարակություն հարաբերություններում առկա անջրպետի տարեցտարի վերացման փուլ, երբ հաստատված հրադադարից հետո երկրի իշխանություններն ու բանակի ղեկավարությունը հնարավորություն ստացան արդեն խաղաղ պայմաններում ջանքերը կենտրոնացնել բանակի, որպես ռազմապաշտպանական համակարգի, վերջնական ձևավորման, բոլոր անհրաժեշտ ստորաբաժանումներն ստեղծելու ու գործադրելու ուղղությամբ:

Այս փուլերից յուրաքանչյուրը, լինելով մեր բանակային պատմության շրջայի կարևորագույն օղակ, առանձնանում է իր յուրահատկություններով, զարգացման տրամաբանությամբ, տվյալ ժամանակում գոյություն ունեցող իրողություններով և մինչև իսկ հոգեբանությամբ: Ծիշտ չի լինի դրանցից որևէ մեկը որակել պակաս կամ ավելի բարդ, քանզի դրանք համեմատելի չեն մի շարք առումներով. համեմատելի չեն ժամանակները, քաղաքական իրողությունները, առկա ռեսուրսները:

1988 ից մինչև 1992 թվականի մայիս ամիսն ընկած ժամանակահատվածի հիմնական առանձնահատկությունն ու բնորոշիչը ինքնաբուխ հայրենասիրությունն էր, ավելի

խիստ, թերևս՝ տարերայնությունը: Առհասարակ, «բանակ» ասելիս, առաջին միտքը, որ կծագի ցանկացած բանական մարդու գլխում կլինի համազգեստով զինվորը, զորանոցն ու գորախաղերը, պատվո պահակախումբը, շքերթն ու երդման արարողությունը: Վերը հիշատակված տարիների պատմությունը թերթելիս նման բաներ հաստատապես չենք գտնի, ինչը սակայն, որևէ կերպ չի նսեմացնում դրանց կարևորությունը: Այդ շրջանի «բանակը» հայ քաղաքական նորելուկ միտքն էր և նրա ջղաձիգ (բայցև հաջող) ջանքերը՝ լուծելու պատմական այս ժամանակաշրջանում իր առջև դրված գերագույն խնդիրները. անկախ պետականության վերականգնում և Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության արդար դատի պաշտպանում: «Բանակ» էր հայ հասարակության մտածողության մեջ այն գիտակցության հասունացումը, թե միայն սեփական զինված ուժերը կարող են լինել ժողովրդի ու հասարակության անվտանգության երաշխիքը: «Բանակ» էին իրարից անկախ գործող կամավորական ջոկատները (թվով շուրջ 80), որոնք ռազմականացված հիմնարկություններից, հակակարկտային հրետանու կրակակետերից, ռազմագիտության դասարաններից ու բոլոր հնարավոր այլ վայրերից գենք հայթայթելով, կամավորաբար, հայրենասիրական ու բարոյական արժեքներից դրդված, մեկնում էին սահմանի ամենայնեժ կետերը՝ անհավասար կռիվ մղելու հակառակորդի դեմ: Հակառակորդ, որ Սումգայիթ, Բաքու, Կիրովբադ և հայերի զանգվածային տեղահանություն իրականացնելով՝ այլևս չէր խորշում ոչնչից և ողջ քաղաքակիրթ աշխարհի առջև բացահայտ ռազմարշավ էր սկսել Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի դեմ: Այս ամենն իրագործվում էր կոմունիստական վարչակարգի ակնհայտ թողտվությամբ, իսկ երբեմն նաև գործուն մասնակցությամբ: Դրա ամենավառ ապացույցը եղավ 1991թ. ապրիլ-մայիս ամիսներին իրականացված տիրահոչակ «Կոլցո» օպերացիան, որի արդյունքում հայաթափվեցին Գետաշեն և Մարտունաշեն գյուղերը: Դրան հաջորդեցին Հաղրոթի շրջանի մեկ տասնյակից ավելի գյուղերի ու Բերդաձորի ենթաշրջանի ողջ հայ բնակչության բռնի տեղահանումները: Բոլոր այս ճնշումների դեմ հանդիման կանգնած էին հայ կամավորական ջոկատները, որոնց գործողությունները, կրկնում են, տարերային էին, չկողորհնացված և տեղի էին ունենում Հայաստանի և Արցախի պաշտպանությունը համակարգող միասնական կենտրոն-կառույցի բացակայության պայմաններում: Եվ սակայն դրանք այն կենսունակ սաղմերն էին, որոնցից, անկախության հռչակումից անմիջապես հետո, պիտի ծնվեին հայոց փառապանծ բանակի ստորաբաժանումները:

Կամավորականները, որոնք որոշ ժամանակ անց արդեն սահուն կերպով իրենց տեղը պետք է գիջեին կանոնավոր զորամիավորումներին, փայլուն կերպով կատարեցին իրենց առջև, իրենց իսկ կողմից դրված խնդիրները: Նրանց մի մասը նահատակվեց սխրալի մարտերում. Մովսես Գորգիսյան, Թաթուլ Կրպեյան, Ջիվան Աբրահամյան... շատ ու շատ այլոք, իսկ մյուսները, արդեն 1992-ից սկսած, մասնակցելով նաև պատերազմական լայնածավալ գործողություններին, նորաստեղծ կանոնավոր բանակի հետ միասին կռեցին մեր առաջին ռազմական հաղթանակը: Ցավոք, շատերն իրենց կյանքի գնով:

1990-ի անկախության հռչակագիրը, որով ազդարարվեց Հայաստանի փաստացի անկախությունը, նոր իրավական և

գործնական հեռանկարներ բացեց ազգային բանակի ստեղծման հարցում: Նույն տարվա սեպտեմբերին կազմավորվեց Երևանի հատուկ գունդը, իսկ Արարատում, Գորիսում, Վարդենիսում, Իջևանում, Մեղրիում ձևավորվեցին հինգ վաշտեր: 1991թ.-ին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծվեց Նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության պետական կոմիտե: Նմանատիպ կառույց արդեն գործում էր Լեռնային Ղարաբաղում: Սրանով զգալիորեն հեշտացվեց բարդագույն պայմաններում Հայաստանի, Արցախի և Շահումյանի պաշտպանական գործողությունների համակարգման խնդիրը՝ միաժամանակ դառնալով այն հիմքը, որի վրա քիչ ավելի ուշ պետք է ստեղծվեր Պաշտպանության նախարարությունը:

1991թ. դեկտեմբերի 5-ին, հանրապետության նախագահի հրամանագրով առաջին պաշտպանության նախարար նշանակվեց Վազգեն Սարգսյանը, որն արդեն լինելով խորհրդարանի պաշտպանության հանձնաժողովի նախագահ՝ կազմավորականների մեծ մասի սիրված հրամանատարն էր:

1992թ. հունվարի 28-ին Կառավարությունը ընդունեց «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշում՝ դրանով իսկ իրավականորեն ազդարարելով Հայոց Ազգային բանակի ստեղծումը: Նորաստեղծ նախարարության ենթակայությանը հանձնվեցին Ներքին գործերի նախարարության միլիցիայի պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության օպերատիվ գունդը, քաղաքացիական պաշտպանության գունդը և հանրապետական զինվորական կոմիսարիատը: Քիչ ավելի ուշ հիմնվեց Պաշտպանության նախարարության կենտրոնական սպարատը՝ Գլխավոր շտաբը, վարչություններն ու առանձին բաժինները: 1992թ.-ի մայիսին պաշտպանության նախարարությունը սկսեց առաջին զորակոչը հանրապետության տարածքում՝ հիմք դնելով բանակը ժամկետային զինձառայողներով համալրելու կայուն ավանդույթին:

Այս պահից, ահա, սկիզբ է առնում մեր բանակի պատմության երկրորդ փուլը: Մի փուլ, որի խնդիրներն, իրենց բարդությամբ չզիջելով նախորդին, բնույթով այլ էին: 92թ-ին Հանրապետության ղեկավարությունը, Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, ընդունեց Հայաստանի, առաջին հերթին՝ նրա Չինված ուժերի համար չափազանց կարևոր և հեռատես որոշում. մենք բռնեցինք ո՛չ թե Խորհրդային գործի սպառազինության բռնի գրավման, այլ՝ այդ սպառազինության Հայաստանի չափաբաժնի կանոնավոր, պայմանագրային հիմունքներով ստացման ուղին: Դրա շնորհիվ էր, որ թեև ռազմական տեխնիկական քանակապես քիչ էր՝ համեմատ նրան, ինչը կարող էր ստացվել բռնագրավման պարագայում, սակայն այն սարքին վիճակում էր և անցավ ո՛չ թե անհատներին կամ առանձին ջոկատներին, այլ՝ պետությանը: Դրա շնորհիվ էր, որ ռուսական գործի մի մասը մնաց Հայաստանում՝ հետագայում վերանցելով ռազմական բազայի և դառնալով Հայաստանի անվտանգության կարևոր բաղկացուցիչ մասը: Բանակն այս տարիներին, եթե կարելի է այսպես ասել, սպրում էր երկու կյանքով: Մի կողմից ինտենսիվորեն ընթանում էր բանակային կառուցվածքի ձևավորում, նրա իրավական ամրագրում, իսկ մյուս կողմից՝ նորաստեղծ

բանակային կազմավորումները փաստացի պատերազմի մեջ էին հարևանի հետ: «Ամեն ինչ ռազմաճակատի համար» տրամաբանությանը զուգահեռ փորձ էր արվում հնարավորինս պաշարներ ուղղել կառուցվածքային խնդիրների լուծմանը:

Չենք-գինամթերքի, վառելիքի, պարենի ու հագուկապի խնդիրներին զուգահեռ, նորաստեղծ նախարարության առջև ծառայել էր ոչ պակաս կարևոր ևս մեկ խնդիր՝ զինված ուժերի համալրումը կրտսեր, ավագ և բարձրագույն սպայական կազմով և մասնագետ կադրերով: Պաշտպանության նախարարությունը հսկայական աշխատանք ծավալեց՝ նախկին խորհրդային բանակում ծառայող սպաներին հայկական զինված ուժերում ընդգրկելու և դրանով իսկ, թեկուզ ժամանակավորապես, այս խնդիրը մեղմելու ուղղությամբ: Ի պատիվ մեր ժողովրդի, բազմաթիվ հայազգի սպաներ արձագանքեցին ՊՆ կոչին, թողեցին իրենց խաղաղ-անվտանգ բնակավայրերը, եկան և լծվեցին բանակաշինության, հայրենիքի անվտանգության ապահովման սուրբ գործին: Դրանց թվում էին այսօր արդեն գեներալ-գնդապետներ Գուրգեն Դալիբալթյանը, Միքայել Հարությունյանը, գեներալ-լեյտենանտներ Նորատ Տեր-Գրիգորյանը, Հրաչ Անդրեասյանը, Քրիստափոր Իվանյանը, Մկրտիչ Աբրահամյանը, Յուրի Խաչատուրովը, Միքայել Գրիգորյանը, գեներալ-մայորներ Արկադի Տեր-Թադևոսյանը, Արտուշ Հարությունյանը, Մուրազ Սարգսյանը, Լեոնիդ Մարտիրոսովը, Վլադիմիր Հայրապետյանը, Ալիկ Սարգսյանը, Մարտին Կարապետյանը, Տիգրան Գասպարյանը, Ալիկ Միրզաբեկյանը և շատ ուրիշներ: Այս անձանց կողքին չեմ կարող չնշել նաև գեներալ-լեյտենանտ Անատոլի Չինևիչի անունը, որի համար Հայաստանը դարձավ երկրորդ հայրենիք:

Բանակաստեղծման առումով 1992-ը բացառիկ արդյունավետ եղավ. ամրագրվեց անհրաժեշտ իրավական դաշտը, ձևավորվեցին ղեկավարման օղակները, առաջին հերթին՝ Գլխավոր Շտաբը, ստեղծվեցին թիկունքի և սպառազինության ծառայությունները, հիմնադրվեցին զորատեսակներն ու մասնագիտացված զորամասերը, մշակվեցին խմբավորումների, զորամասերի մարտական կազմերը և կառուցվածքները, դրվեց զորատեսակների և ծառայությունների ձևավորման սկիզբը, անցկացվեց առաջին զորակոչը, կազմավորվեցին առաջին սահմանապահ զորամասերը՝ մտոտիրաձգայինների վերափոխման հեռանկարով, ծավալվեցին զորամասերի ստորաբաժանումները՝ դասակները, վաշտերը, գումարտակները, սկսվեց անձնակազմի մարտական ներդաշնակման ու մարտական պատրաստության գործընթացը:

Այս ամենին զուգահեռ թեթև մարտական գործողությունները սահմանի երկայնքով արդեն վերանել էին իսկական պատերազմի՝ իրենց ահագնացող ծավալներով: Պատերազմական տարին մեզ համար սկսվեց բավականին հաջող: 92-ի մայիսին, հիմնականում ավարտելով Ղարաբաղի ներսում ադրբեջանական կրակակետերի ոչնչացումը, ինքնապաշտպանական ուժերը

ծրագրեցին և փայլուն կերպով իրականացրեցին Շուշիի ազատագրման օպերացիան՝ կերտելով մեր նորօրյա ռազմական տարեգրության ամենափառահեղ էջերից մեկը: Դրանով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնապաշտպանական ուժերը Ստեփանակերտը փրկեցին ամենօրյա ծանր ռմբահարումներից, ինչպես նաև ցամաքային ճանապարհի հարթեցին դեպի Հայաստան: Մի քանի օր անց ինքնապաշտպանական ուժերը գրավեցին նաև Լաչինը՝ լռեցնելով Ջանհասանի, Քյոսալարի և մի շարք այլ կրակակետեր: Հայաստանի հետ ցամաքային կապն այլևս վերագտնված էր, հակառակորդը նահանջել էր և շատ հեռու էր: Շատերին թվաց, թե մարտական գործողությունները մոտալուտ ավարտ կունենան: Եվ մենք, ստիպված, մի պահ հապաղեցինք, ինչը. հետո չափազանց ծանր հետևանքներ ունեցավ:

1992-ի հունիսից սկիզբ է առնում մեր բանակի պատմության երկրորդ փուլը, երբ ադրբեջանցիները, ոգևորված խորհրդային բանակի՝ Ադրբեջանի տարածքում տեղաբաշխված ստորաբաժանումների մեծաքանակ սպառազինության անարգել բռնագրավումով, վարձկանների՝ նույն բանակի անգործ ու հետևապես առանց գոյության միջոցների մնացած սպաների առատությունից և մեր հապաղումով, անցան լայնածավալ հարձակման: Ընկավ Շահումյանը, սկիզբ առավ հակառակորդի ժամանակավոր հաջողությունների շրջանը: Մեր ջոկատները ստիպված էին նահանջել Մարտակերտի տարածքի մի զգալի մասից՝ իրենց հետ տանելով նաև բնակչությանը: Այս շրջանը մեր պետության ու ողջ ժողովրդի համար եղավ իսկապես ծանրագույն փորձության շրջան: Թվում էր, թե դա վերջն է մեր սկզբի, որ դիմադրել հակառակորդին հնարավոր չէ ո՛չ ռազմականապես, և ո՛չ հոգեպես: Շատերի նյարդերը տեղի տվեցին, շատերը հուսալքվեցին, շատերը ձեռքերը լվացին: Որոշ քաղաքական ուժեր ապահովագրում էին իրենց, իրար մեղադրելով հայրենի հողը ծախելու մեջ: Կասկածի որդը տեղափոխվեց ջոկատներ:

Բայց այլ կերպ էր մտածում հայ հավաքական զինվորը: Նա մաքառեց, կանգնեցրեց հակառակորդին և ի վերջո հաղթող դուրս եկավ մեզ պարտադրված անհավասար պատերազմում:

Այս շրջանում էր, որ պաշտպանության նախարարությունը գլխավորեց Շարժման առաջնորդներից մեկը՝ Վազգեն Մանուկյանը, որին հաջողվեց որոշակի մեղմել հակամարտությունը մեր մեջ, ընդունել մի շարք կարևոր որոշումներ, բարելավել բանակի նյութական ապահովումը՝ իր կարևոր նպաստը բերելով պատերազմի այս փուլում բեկումն մտցնելու գործում:

Արդեն 1993թ. մարտի վերջին իրականացվեց Քելբաչարի օպերացիան՝ գրավվեց Հայաստանն ու Ղարաբաղը սեպի պես գատող այս կարևոր հատվածը: Հունիսին հակառակորդը ծանր մարտերից հետո, չկարողանալով դիմադրել հայկական ինքնապաշտպանական ուժերի շեշտակի գրոհներին, ստիպված էր թողնել Մարտակերտն՝ հարող բնակավայրերով, հուլիսին՝ Աղդամը, օգոստոս-հոկտեմբերին՝ Ֆիզուլին, Չաքրայիլը, Կուբաթյուն և Չանգելանը, ինչը թույլ տվեց պաշտպանական բանակին երկրի երկայնքով ձևավորել անվտանգության գոտի՝ գերծ պահելու համար Լեռնային Ղարաբաղի տարածքի մեծ մասը հնարավոր ռմբահարումներից:

Թվում էր, այս պարտությունը պետք է բավարար լիներ հակառակորդին՝ գիտակցելու իր նկրտումների ու տաժաժ հույսերի բացահայտ սնանկությունը: Բայց ադրբեջանական բանակը, չիրատվելով այս ջարդից և ս, 93թ. դեկտեմբերին անցավ նախադեպը չունեցող հարձակման: Այս ճակատամարտը, որը տևեց ուղիղ հինգ ամիս, ավարտվեց հայկական պաշտպանական ուժերի լիակատար հաղթանակով: Այնպիսի հաղթանակով, որ պարտված հակառակորդը, որ մինչ այդ լսել անգամ չէր ուզում հրադադարի մասին, գլխիկոր համաձայնեց ստորագրել այն: 1994թ. մայիսի 16-ին Հայաստանի, Ղարաբաղի և Ադրբեջանի պաշտպանության նախարարները Մոսկվայում ստորագրեցին հրադադարի մասին համաձայնագիր: Պատերազմը գոնե առժամանակ դադարեց՝ դրանով իսկ նախանշելով մեր բանակի պատմության երկրորդ փուլի ավարտը:

Արդեն խաղաղ պայմաններում նորաստեղծ բանակը, նրա հրամանատարական կազմը հնարավորություն ստացավ լծվելու բանակաշինության գործին՝ ուշադրություն դարձնելով առավելապես բանակի ներքին խնդիրներին: Բանակաշինության գործընթացն ընդգրկեց ռազմական համակարգի, առանց բացառության, բոլոր ոլորտները՝ սկսած բանակային ենթակառուցվածքների ստեղծումից մինչև անհրաժեշտ օրենսդրական հիմքի ապահովում:

Բանակաշինության հիմնական խնդիրներից մեկը կադրերի պատրաստությունն է: Այդ նպատակով ստեղծվեցին ռազմավիճակի, թռիչքատեխնիկական ուսումնարանը, որը հետագայում վերանեց Ռազմավիճակի ինստիտուտի, Պաշտպանության նախարարության բարձրագույն զինվորական բազմաբնույթ հրամանատարական ուսումնարանը, այսօր արդեն՝ Վազգեն Մարգարյանի անվան Ռազմական ինստիտուտ, Հերացու անվան Երևանի Պետական Բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետը: Մինչ օրս այս ուսումնական հաստատությունները Չինված ուժերի համար պատրաստել են շուրջ 1300 շրջանավարտ-սպաներ: Շարունակվել է նաև սպայական կադրերի պատրաստումը և վերապատրաստումը արտասահմանյան երկրների ռազմա-ուսումնական հաստատություններում: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնությունում և Հունաստանի Հանրապետությունում ուսումնառել և այսօր շարունակում են իրենց ուսումը ավելի քան 1500 սպա և կուրսանտ:

Հաշվի առնելով, որ Չինված ուժերի սպաների մի զգալի մասը կազմում էին ինքնապաշտպանական կամավորական ջոկատների մարտիկները, նրանց որակավորման և վերապատրաստման նպատակով ստեղծվեց սպաների որակավորման բարձրացման կենտրոնը, որն իր գործունեության ընթացքում, տվել է շուրջ 1500 սպա-շրջանավարտ: Շուրջ 1000 շրջանավարտ է տվել Ենթասպաների դպրոցը:

Չինված ուժերի կառուցվածքի հետագա կատարելագործման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հուսալի պաշտպանությունը կազմակերպելու, ղեկավարումը կորդինացնելու, մարտական պատրաստականությունը բարձրացնելու նպատակով, մի քանի ուղղություններով ստեղծվեցին բանակային գորամիավորումներ՝ համախմբելով համապատասխան տարածաշրջանների գորամասերի գործունեությունը:

Կոմպլեկտավորվեցին կենտրոնական ապարատի վարչությունները, բաժիններն ու ծառայությունները, կայացան հրետանու, հակաօդային պաշտպանության, օդուժի գորատեսակները, կազմավորվեցին հետախուզության, կայի, ինժեներական գործերը, որոնք կատարեցին իրենց վրա դրված խնդիրները պատերազմի ժամանակ, այժմ էլ մարտունակ են և պատրաստ պաշտպանելու Հայրենիքի սահմանները:

Տարիների հետևողական աշխատանքի շնորհիվ բարձրացել է սպաների և զինվորների մարտական պատրաստվածության մակարդակը, բարելավվել բարոյահոգեբանական մթնոլորտը, ամրապնդվել կարգապահությունը: Եթե 1995թ-ին Հայկական բանակում զոհվել, սպանվել և մահացել է 324 զինվոր, ապա 2001թ-ին՝ 56: Իհարկե, մեր փոքրաթիվ ազգի համար դա էլ մեծ թիվ է, սակայն նման նվազումը ցուցանիչ է տարվող աշխատանքի արդյունավետության:

Մարտական պատրաստականությունն ու մարտական պատրաստությունն ընդգրկել են Չինված ուժերի կյանքի ու գործունեության բոլոր ոլորտները: Այս առումով առաջնային են եղել ցանկացած պահի գործերի՝ խաղաղ ժամանակաշրջանի հաստիքներից պատերազմականի կազմակերպված անցման, ինչպես նաև, մարտական առաջադրանքները կատարելու նպատակով մշտական տեղակայման վայրերից արագ և հակառակորդի հետախուզական միջոցներից աննկատ դուրս գալու խնդիրները:

Այս առումով բանակաշինության երրորդ փուլը բավականաչափ հազեցած է ջոկից մինչև մարտական գործառնական մակարդակով հաստիքային գեներ ու զինամթերքի օգտագործմամբ, պլանային բազմաթիվ ուսումնամարզական, ճամբարա-դաշտային, հրամանատարաշտաբային հավաքներով:

Տանկային ուղեգծերում, հրացանահրետանային հրաձգարաններում, տակտիկական ուսուցման դաշտերում ամենօրյա գործնական պարապմունքների շնորհիվ ամրապնդվում է զինվորների՝ ուսումնական դասարաններում ստացած տեսական գիտելիքները: Հատուկ ուշադրություն է դարձվում բանակային գործառնականների՝ բարդ կլիմայական պայմաններում և գիշերային ժամերին մարտական գործողություններ վարելու ունակությանը:

Կարևոր նշանակություն է տրվում հրամանատարական կազմի օպերատիվ մտածելակերպի զարգացման, ստեղծված իրավիճակը ճիշտ վերլուծելու և գնահատելու, նպատակաուղղված որոշումներ կայացնելու, տեղանքում աշխատանքները կազմակերպելու, իրենց ենթակայության տակ գտնվող կազմավորումները մարտի ժամանակ կառավարելու ուսուցման գործընթացին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԾՆՆԴՅԱՆ ՎԿԱՅԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունվարի 1992 թվականի թիվ 62 քաղ. Երևան Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության 1991 թվականի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի

Հանրապետության կառավարության կազմի և կառուցվածքի մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարությունը  
n p n z n i մ է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատի աշխատողների (առանց սպասարկող անձնակազմի) աշխատանքի վարձատրության ֆոնդը՝ տարեկան 5,3 մլն. ռուբլի:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ համատեղ քննության առնել պաշտպանության նախարարության և նրա համակարգի աշխատողների զինվորական կոչումների դրույքաչափերի ու զինված ուժերում ծառայության ստաժի համար հավելվածների չափերի մասին հարցը և առաջարկություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

3. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ֆինանսավորումը իրականացվում է հանրապետության բյուջեի միջոցների հաշվին:

4. Թույլատրել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը ունենալու նախարարի 7 տեղակալ, այդ թվում՝ 3 առաջին տեղակալ, որից մեկը՝ գլխավոր շտաբի պետ, և 11 անդամից բաղկացած կոլեգիա:

5. Հանրապետության զինված ուժերում ծառայելու հրավիրված սպաների ու զեներալների համար պահպանել նախկին ԽՍՀՄ զինված ուժերում, պետական անվտանգության կոմիտեի և ներքին գործերի նախարարության համակարգում ու գործերում ծառայության ստաժը, զինվորական կոչումները և սահմանված մյուս արտոնությունները:

6. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ կենտրոնական ապարատի համար սահմանել ծառայողական մարդատար ավտոմեքենաների պահպանման 25 միավոր սահմանաքանակ:

7. Հանրապետական զինվորական կոմիսարիատը, քաղաքացիական պաշտպանության գունդը, հանրապետական քաղաքացիական պաշտպանության հրամանատարական դիտակետը, Կիրովականում տեղակայված Հայաստանի Հանրապետության շինարարության նախարարության թիվ 606 շինարարական վարչության բազայի վրա ստեղծված զինվորական մասը հանձնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ենթակայությանը:

8. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարության 1992 թվականի հունվարի 22-ի թիվ 11 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի հետ համատեղ քննության առնել նախկին հանրապետական ԴՕՍԱԿԹ-ը պաշտպանության նախարարության ենթակայությանը հանձնելու հարցը և առաջարկություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

9. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միլիցիայի պարետապահակապետային

ծառայության գունդը, ինչպես նաև հատուկ նշանակության օպերատիվ գունդը հանձնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ենթակայությանը:

10. Լուծարել Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդին առընթեր պաշտպանության կոմիտեն: Այդ կապակցությամբ ուժը կորցրած համարել Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի 1991 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդին առընթեր պաշտպանության կոմիտեի (Պաշտկոմի) մասին» թիվ 325 որոշումը:

11. Լուծարված Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդին առընթեր պաշտպանության կոմիտեի հաշվեկշռում եղած ֆինանսական միջոցները և գույքը անհատույց հանձնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հաշվեկշռին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԱԿԱՎԱԳԱՀ,  
ՎԱՐՉԱՊԵՏ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ.ՔՈՌԱՆՅԱՆ

## Հայկական կողմը շատ արագ հետ կվերադարձնի Լեռնային Ղարաբաղում կորցրած հողերը. Բալասանյան

Հայկական կողմը շատ արագ հետ կվերադարձնի Լեռնային Ղարաբաղում կորցրած հողերը: Այս մասին հունվարի 28-ին՝ Հայոց բանակի օրվա միջոցառումների ժամանակ, լրագրողներին ասաց Լեռնային Ղարաբաղի հերոս, ԼԴՀ ԱԽ քարտուղար գեներալ Վիտալի Բալասանյանը:

Նրա խոսքով՝ կգա ժամանակը, երբ մենք կտեսնենք, որ ամեն բան իր տեղը կընկնի:


Անդրադառնալով այս հարցին, թե ինչ վիճակում է Թալիշը, Բալասանյանն ասաց, որ Թալիշ գյուղը վերականգնվում է: «Այո, միանշանակ կարող եմ ասել, որ Ղարաբաղի ցանկացած մասում ապահով է»: Բալասանյանը պատրաստակամություն է հայտնել հաստատվել Թալիշում: «Ժամանակիս մեծ մասը ես այնտեղ եմ անցկացնում: Հիմա մենք լուծում ենք դպրոցի և մանկապարտեզի հետ կապված հարցերը»:

## Բոլոր թերությունները շտկվել են, մեղավորները պատժվել են. Լեւոն Մնացականյան

Արցախի պաշտպանության բանակի հրամանատար Լեւոն Մնացականյանը ընդունում է, որ բանակում ապրիլյան պատերազմից առաջ թերություններ են եղել, որոնք այսօր շտկված են:

Այսօր հունվարի 28-ին Եռաբլուր գիվորական պանթեոնում գրույցում Լեւոն Մնացականյանը նշեց, որ բոլոր մեղավորները պատժվել են. «Այսօր եւ սպառազինության, եւ նյութատեխնիկական մասով ունենք առաջընթաց: Դիրքերի բարելավման ամրապնդման աշխատանքները շարունակվում են, դրանք շարունակական են: Բոլոր թերությունները շտկվել են, մեղավորները պատժվել են»,-ասաց նա:

## Ադրբեջանական զինված ուժերը կորցրեցին եւս մեկ զինձառայողի. Արծրուն Հովհաննիսյան



Ադրբեջանական Չինված ուժերը կորցրեցին եւս մեկ զինձառայողի: Այս մասին այսօր՝ դեկտեմբերի 30-ին, Facebook-ի իր էջում գրառում է արել ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը: Ավելի վաղ նա տեղեկացրել էր, որ այս գիշեր տեղի է ունեցել նախօրեի ադրբեջանական սադրանքի տրամաբանական զարգացումը. հայկական ստորաբաժանումները պատժիչ գործողություններ են իրականացրել, ինչի արդյունքում հակառակորդն ունեցել է եւս 4 կորուստ:

Հիշեցնենք, որ դեկտեմբերի 29-ի առավոտյան, Տավուշի մարզի Չինարի գյուղից հարավ-արեւելք տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ ադրբեջանական զինուժը դիվերսիոն ներթափանցման փորձ էր նախաձեռնել, ինչի հետեւանքով ունեցել էր մինչեւ 7 զոհ:

## Բելգիացի լուսանկարիչ. Տավուշի մարզ՝ փորրիկ «հայկական Ծվեյցարիա»



Տավուշի մարզը երբեմն անվանում են «հայկական Ծվեյցարիա»: Այս մասին գրում է [Travel Experience Live](#) բլոգի հիմնադիր, բելգիացի սիրողական լուսանկարիչ Բրամ Ռոյսենը:

Հարավային Կովկասում անցկացված լեռնային արձակուրդները, նշում է հեղինակը, անկրկնելի խորը զգացմունքներ, հանգստի և անդորրի զգացողություն են պատճառում՝ քաղաքի աղմուկից և ունայնությունից հեռու: Վեհաշուք բնության գրկում լիցքաթափվելու և մեղիտացիա անելու և լեռնային բարձունքներ նվաճելու սիրահարներին հեղինակը խորհուրդ է տալիս այցելել Հարավային Կովկաս, որպես հանգստի համար կատարյալ վայր:

Հայաստանը, Բրամ Ռոյսենի խոսքով, Հարավային Կովկասում գտնվող զարմանահրաշ լեռնային երկիր է:

«Հայաստանի հյուսիս-արևելքում գտնվում է Տավուշի մարզը: Տեղանքը հիմնականում լեռնային է: Ժայռոտ լանջերը ծածկված են ալպիական մարգագետինների կանաչ գորգով: Մարզը նաև հայտնի է իր բնությամբ և պատմական հուշարձաններով: Կարելի է հիանալ Դիլիջանի Ազգային պարկի հարուստ բնությամբ և Իջևանի բուսաբանական այգով, ինչպես նաև այցելել վանական համալիրներ, ամրոցներ և տեսնել խաչքարներ: Մարզի մեղմ, մաքուր և թթվածնով հարուստ օդը իդեալական է լիցքաթափվելու և հոգին երիտասարդացնելու համար»,- գրում է բելգիացի լուսանկարիչը:

Հայաստանի հյուսիս-արևելքում,- շարունակում է հեղինակը,- տեղակայված ևս մեկ շրջան՝ Լոռին, հայտնի է ընդարձակ լեռնաշղթաներով, խորը կիրճերով, գետերով և լճերով: «Լոռվա մարզը պատմական տեսանկյունից նվազ հետաքրքիր չէ, քանի որ այն ժամանակին եղել է Չաքարյանների իշխանական տոհմի ժառանգական կալվածքը:

Այդ հրաշալի մարզում կարելի է ուսումնասիրել բյուզանդական ճարտարապետության գարմանալի նմուշներ, Հաղպատ և Սանահին եկեղեցիները, որոնք ներառված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում: Նաև շատ հետաքրքիր է Պուշկինյան լեռնանցքը, որտեղով 1828 թվականին ճանապարհորդել է Ալեքսանդր Պուշկինը, ժուս ամենահայտնի և սիրելի բանաստեղծը»,- նշում է Բրամ Ռոյսենը:



## Ում ջրաղացին են այդ հայտարարությունները ջուր լցնում. Նալբանդյանը քննադատել է Ժիրայր Լիպարիտյանին



Ժիրայր Լիպարիտյանի հարցազրույցում վերլուծություններ են արվում ինչ-որ աղճատված տեղեկատվության, ինչ-ինչ վարկածների, այլ ոչ թե ընթացող բանակցությունների մասին ամբողջական, խորը պատկերացումների: Այդ մասին ի պատասխան ասել է ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը՝ մեկնաբանելով ՀՀ նախագահի նախկին գլխավոր խորհրդական, 90-ականներին հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Ժիրայր Լիպարիտյանի հարցազրույցում արտահայտած տեսակետները դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ:

«Եթե անդրադառնամ դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման բուն գործընթացի վերաբերյալ ասվածին, երբ առանձնացնում ես զգացմունքային, փիլիսոփայական մտավարժանքն էությունից, ապա տակը ընդամենը փուչ է մնում: Հարցազրույցում վերլուծություններ են արվում ինչ-որ աղճատված տեղեկատվության, ինչ-ինչ վարկածների, այլ ոչ թե ընթացող բանակցությունների մասին ամբողջական, խորը պատկերացումների, իրական մանրամասների վրա, հետևապես արվող երգակցությունները ոչ միայն չեն կարող օգտակար լինել, ավելի՛ն պարզապես վնասակար են»,- նշել է Նալբանդյանն ու հավելել. «Որպես անցյալում բանակցությունների մասնակից, առնվազն պետք է ինքն իրեն հարցնեք. արդյոք այս կարգի հայտարարությունները օգուտ կտան բանակցային գործընթացին կամ ում ջրաղացին են դրանք ջուր լցնում»:

Ըստ ասվածի, այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ 1997թ. ի վեր ոչ բանակցություններ են եղել, ոչ էլ հանդիպումներ: «Հիշեցնեմ, որ միայն նախագահների մակարդակով մի քանի տասնյակ հանդիպումներ են կայացել: Եթե այդ հանդիպումների արդյունքներն այդքան վնասակար էին մեզ համար, ապա ինչու էր ամեն անգամ հենց Ադրբեջանը հրաժարվում դրանց արդյունքներից: Ինչպես դա եղավ Կազանում, Կազանից առաջ՝ Մոսկոյում, Մոսկից առաջ՝ Մոսկվայում, Մոսկվայից առաջ՝ Աստրախանում, Աստրախանից առաջ՝ Սանկտ-Պետերբուրգում ու այսպես կարող ենք երկար շարունակել»,- ասել է ԱԳ նախարարը՝ հավելելով. «Արդյոք պատահականություն է, որ Ադրբեջանը մինչ այսօր հղումներ է կատարում այն հայտնի փաստաթղթերին, որոնք ընդունվել են 1997թ. առաջ: Վստահ եմ, որ այդ փաստաթղթերը հարցազրույց տվողին քաջ հայտնի են:

«Հայաստանի դիրքորոշումը համահունչ է միջազգային հանրության մոտեցումներին, այլ ոչ թե հակառակը, ինչպես պնդվում է հարցազրույցում: Ավելին. Ո՛վ է խրտնում



Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարների հայտնի հինգ հայտարարություններից եւ բոլորովին վերջերս Համբուրգում եռանախագահ երկրների արտոգործնախարարների հայտարարությունից: Հենց Ադրբեջանը:

Երեք օր առաջ Հանրապետության Նախագահը արտոգործնախարարությունում ունեցած իր ելույթում հստակ, սպառիչ եւ շիտակ գնահատական տվեց այս կարգի մեկնաբանություններին»,- ամփոփել է ԱԳ նախարարը: Նշենք, որ Ժիրայր Լիպարիտյան հարցազրույց էր տվել «Առավոտ» թերթին:

## Մտադիր չենք փակել Երեւանի ԵԱՀԿ գրասենյակը. Սերաստիան Կուրց



Մենք գնահատում ենք ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի կարելու եւ արժեքավոր աշխատանքը, եւ այն փակելու ծրագրեր կամ մտադրություններ չունենք: Այս մասին «Մեդիամաս»-ին տված հարցազրույցում նշել է Ավստրիայի արտաքին գործերի նախարար, ԵԱՀԿ Գործող նախագահ Սերաստիան Կուրցը:

«ԵԱՀԿ-ն կոնստուսի վրա հիմնված կազմակերպություն է, ինչը նշանակում է, որ 57 անդամ-երկրները հավասար ձայնի իրավունք բոլոր որոշումների կայացման ժամանակ, ներառյալ նրանք, որոնք վերաբերվում են դաշտային առաքելությունների մանդատներին:

Հաշվի առնելով սա, ԵԱՀԿ յուրաքանչյուր նախագահության հիմնական խնդիրներից է հեշտացնել կոնստուս ձեւավորելու գործընթացը՝ հանդես գալով իրրեւ արդար միջնորդ: Հենց այդ պատճառով, ստանձնելով ԵԱՀԿ նախագահությունը, մենք արագորեն վերսկսեցինք խորհրդակցությունները եւ բանակցությունները: Այս առումով բոլոր անդամ-երկրների ակտիվ, կառուցողական ներգրավվածությունը եւ աջակցությունը շատ կարելու է»,- նշել է նա:

Կուրցի խոսքով, ի վերջո, բոլորիս ընդհանուր շահն ու պատասխանատվությունն է երաշխավորել կազմակերպության արդյունավետ աշխատանքը. «Մենք տեղյակ ենք դաշտային առաքելությունների խնդրի շուրջ ծավալված շահարկումներին եւ ենթադրություններին, եւ նման հետաքրքրությունը բնական է:

Մենք գնահատում ենք ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի կարելու եւ արժեքավոր աշխատանքը, եւ այն փակելու ծրագրեր կամ մտադրություններ չունենք»:

Ըստ գործող պրակտիկայի՝ ազգային գրասենյակների գործունեության մանդատը երկարաձգվում է ամեն տարի ԵԱՀԿ անդամ երկրների կոնսենսուսի հիման վրա:

Ավելի ուշ հայտնի է դարձել, որ Ադրբեջանն է խոչընդոտում կոնսենսուսի կայացմանը: Այս առնչությամբ, ԵԱՀԿ-ում Գերմանիայի նախագահությունը հանդես է եկել հայտարարությամբ՝ նշելով, որ ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի մանդատը երկարաձգումը արգելափակելու համար Ադրբեջանի կողմից բերվող «պատճառներն» անհիմն են:

## Դիվանագետ. Լավրովը փաստացի տեղն է դրել ադրբեջանական կողմին



Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը փաստացի տեղը դրեց ադրբեջանական կողմին: Հունվարի 20-ին կայացած մամուլի ասուլիսում այս մասին հայտարարեց Հայաստանի ԱԳ նախկին փոխնախարար, արտակարգ եւ լիազոր դեսպան Արման Նավասարդյանը:

Անդրադառնալով դարաբաղյան հիմնախնդրի շուրջ Լավրովի վերջին հայտարարությանը՝ նա նշեց, որ մոսկովյան դիվանագիտությունը միշտ ուժեղ պատասխան հարվածի հնարքն է կիրառում: «Ես դրական եմ գնահատում դա, քանի որ նման, կարելի է ասել, էմոցիոնալ հայտարարության տակ բավական լուրջ դիվանագիտական դեմարշ է թաքնված՝ նպատակ ունենալով ցույց տալ, որ դարաբաղյան հիմնախնդիրը միջազգային հարց է, որով զբաղվում են համապատասխան կազմակերպությունները»,- ընդգծեց Նավասարդյանը:

Եվ վերջին շրջանում, ըստ նրա, հաշվի առնելով նաեւ ՀԱՊԿ նախկին գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժայի հայտարարությունը, կարծես փորձ է արվում սթափեցնել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին, որն անցնում է «կարմիր գիծը» եւ բացարձակ չի ուզում խաղալ այն կանոններով, որոնք դրված են խնդրի լուծման հիմքում: Վիեննայի եւ Սանկտ Պետերբուրգի համաձայնությունները, Արման Նավասարդյանի խոսքով, չի կատարում ադրբեջանական կողմը՝ շեշտադրելով խնդրի ռազմական լուծումը:

2016 թվականի արդյունքներով կազմակերպված մամուլիսի ասուլիսում ՌԳ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը, ի պատասխան ադրբեջանցի լրագրողի սադրիչ հարցին, հայտարարել էր, որ դարաբաղյան հակամարտության կարգավորումը բացառապես Ադրբեջանի ներքին գործը չէ:

## Հանրաքվեի կրթի ԼՂՀ սահմանադրական փոփոխությունների նախագիծը

ԼՂՀ Ազգային ժողովն այսօր՝ հունվարի 17-ին, ձայների 20 կողմ, 7 դեմ եւ 1 ձեռնպահ հարաբերակցությամբ որոշել է հանրաքվեի դնել սահմանադրական փոփոխությունների նախագիծը:



Այս մասին Facebook-ի իր էջում գրել է ԼԳՂ ԱԺ պատգամավոր Հայկ Խանումյանը:

Դեմ են քվեարկել «Դաշնակցություն» եւ «Վերածնունդ» խմբակցությունները, ձեռնպահ՝ «Շարժում-88» խմբակցությունը, կողմ՝ «Ազատ Հայրենիք» եւ «Ժողովրդավարություն» խմբակցությունները:

Ավելի վաղ ԼԳՂ ԱԺ փոխխոսնակ ՀՅԴ ներկայացուցիչ Վահրամ Բալայանը հայտնել էր, որ ամենայն հավանականությամբ, հանրաքվեն տեղի կունենա փետրվարի վերջին:

## «ՀԺ». Ռոբերտ Քոչարյանն ԱՄՆ-ում տուն է գնել եւ հիմնականում այնտեղ է բնակվում



«Հայկական ժամանակ» թերթը գրում է. «Մեր տեղեկություններով, Ռոբերտ Քոչարյանը հիմնականում Ամերիկայի Միացյալ Նահանգներում է բնակվում: Մամուլի հրապարակումների համաձայն, նա այնտեղ շքեղ տուն է գնել եւ կյանքի մեծ մասն ընտանիքով այնտեղ է անցկացնում:

Ի դեպ, կարծիք կա, որ նա Հայաստանից մեկնել է հատկապես այն պատճառով, որպեսզի ցույց տա, թե ընդհանրապես չի խառնվում ներքաղաքական եւ նախընտրական գործընթացներին: Հիշեցնենք, նրա անվան հետ է կապվում Վարդան Օսկանյանի «Համախմբում» կուսակցությունը: Կարծիք կա, որ Քոչարյանի հետ որոշակի քաղաքական պայմանավորվածություն ունեն նաեւ Վիկտոր Դալլաքյանի «Երրորդ ուժ» կուսակցությունը, պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանն ու այլք:

Եվ հեռու մնալով Քոչարյանը չի ցանկանում վնասել այս ուժերին, քանի որ իր անունը բացասական ազդեցություն կարող է թողել սույն ուժերի վրա: Մենք փորձեցինք Ռոբերտ Քոչարյանի՝ ԱՄՆ-ում բնակվելու եւ սովորաբար կերպով Հայաստանի ներքաղաքական կյանքին մասնակցելու վերաբերյալ մեկնաբանություն ստանալ նրա գրասենյակի ղեկավար Վիկտոր Սողոմոնյանից, բայց վերջինս անհասանելի էր: Ի դեպ, Սողոմոնյանն օրեր առաջ հայտարարել էր, որ Քոչարյանը շուտով խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ հարցազրույց կտա»:

## Էդվարդ Նալբանդյանը շնորհավորել է Գլեդիս Բերեջիկյանին



Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը շնորհավորական ուղերձ է հղել Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի վարչապետ Գլեդիս Բերեջիկյանին:

Նալբանդյանն իր նամակում նշել է, որ նրա նշանակումը փորձի եւ Ավստրալիայի ժողովրդին անմնացորդ ու հավատարիմ ծառայության» արդյունք է:

Նախարարն ընդգծել է ավստրալական հասարակության մեջ հայ համայնքի դերը եւ ավանդը երկրի քաղաքական, սոցիալական ու տնտեսական կյանքում: «Մշտապես բարձր է գնահատվել Ձեր ավանդը Հայաստանի եւ Ավստրալիայի կապերի ամրապնդման մեջ: Համոզված եմ, որ Ձեր պշտունավարման ընթացքում Դուք կնպաստեք Հայաստանի եւ Ավստրալիայի բարեկամական հարաբերությունների հետագա ընդլայնմանը», - ընդգծել է Նալբանդյանը:

## Հայաստանում առաջին անգամ կայացել է Ռոբոտների Համաշխարհային Օլիմպիադան



Հայաստանում առաջին անգամ կայացել է ռոբոտաշինության ամենազանգվածային դպրոցական մրցույթներից մեկը՝ Ռոբոտների Համաշխարհային Օլիմպիադան, որն անցել է «Պայքարի՛ր թափոնների դեմ» կարգախոսի ներքո: Մրցույթի հայաստանյան փուլի հաղթող է ճանաչվել Arm Cyber Kids հավաքական թիմը, որը նոյեմբերին մեկնել էր Դելի՝ մասնակցելու միջազգային փուլին եւ ներկայացնելու այնտեղ Հայաստանը՝ զբաղեցնելով 21-րդ տեղը:

Ռոբոտների Համաշխարհային Օլիմպիադան (ՌՀՕ) նպատակ ունի աշակերտներին ներգրավել գործնական գիտական գործունեության մեջ, զարգացնել աշակերտների տրամաբանությունը եւ ճարտարագիտական ունակությունները, նախադրյալներ ստեղծել աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացման համար, աշակերտներին տալ դպրոցում ռոբոտների եւ ռոբոտային համակարգերի ուսումնասիրության միջոցով իրենց մտահորիզոնը ընդարձակելու հնարավորություն: Միջազգային առաջին մրցույթը տեղի է ունեցել 2004 թ.-ին, որին մասնակցել է 4000 թիմ 12 երկրից: Այսօր ՌՀՕ-ին մասնակցում է 55 երկրի ավելի քան 21000 թիմ:

Ռեֆորմները պետք է օգնեն երեխային մաքրություն անել դեպի դպրոց ճանապարհի ողջ ընթացքում, հավաքեն անպիտան աղբն ու լցնեն աղբամշակման տեսակավորված արկղերի մեջ եւ կատարեն նմանատիպ այլ առաջադրանքներ:

## Հայաստանի եւ Իրանի սահմանակից ազատ տնտեսական գոտիները պետք է դառնան տարածաշրջանի տնտեսական ակտիվության էպիկենտրոնը



Հունվարի 27-ին ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Սուրեն Կարայանն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) ներկայացուցչական պատվիրակությանը, որը գլխավորում էր «Արաս» ազատ առևտրի գոտու գործադիր տնօրեն, տնօրենների խորհրդի նախագահ Մոհսեն Խաղեմ Արաբ Բադին:

Պատվիրակության կազմում էին Իրանի Իսլամական խորհրդարանի պատգամավոր, Տնտեսական բարձրագույն խորհրդի անդամ Մոհամմադ Հասան Նեժադը, հայագի պատգամավորներ Կարեն Խանլարյանը եւ Ժորժ Աբրահամյանը, այլ պաշտոնյաներ, գործարարներ, փորձագետներ:

Հանդիպմանը ներկա էին նաև Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադին, ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարի տեղակալ Հովհաննես Ազիզյանը, նախարարության պատասխանատու պաշտոնյաներ:

Ողջունելով ԻԻՀ պատվիրակության անդամներին, Սուրեն Կարայանը նշել է, որ երկու բարեկամ երկրները համատեղ կարող են տնտեսության զարգացման ավելի արագ տեմպեր ապահովել:

- Պետք է լիարժեքորեն օգտագործենք եղած հնարավորությունները: Պետք է ձգտենք կազմակերպել համատեղ արտադրություն եւ արտադրանքի արտահանում այլ շուկաներ: Մենք հայտարարել ենք Մեղրիում ազատ տնտեսական գոտի ստեղծելու մասին եւ արդեն ընթանում են կազմակերպչական աշխատանքները: Համատեղ ջանքերով կանենք հնարավորինը այդ տարածքում մեր երկու ազատ տնտեսական գոտիների արդյունավետ աշխատանքը կազմակերպելու համար: Հայաստանի եւ Իրանի սահմանակից ազատ տնտեսական գոտիները պետք է դառնան տարածաշրջանի տնտեսական ակտիվության էպիկենտրոնը,- ընդգծել է Սուրեն Կարայանը:

Նախարարն առաջարկել է Մեղրու ազատ տնտեսական գոտու ստեղծումից հետո, հենց այդ տարածքում

կազմակերպել համատեղ գործարար համաժողով՝ հրավիրելով բոլոր հետաքրքրված գործարարներին, որպեսզի վերջիններս տեղում ծանոթանան երկու ազատ տնտեսական գոտիների հնարավորություններին եւ առավելություններին: Ծնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադին նշել է, որ Հայաստանում գտնվող պատվիրակությունը մի հրաշալի թիմ է, որը կարող է ներկայացնել Իրանի տնտեսության ողջ հնարավորությունները: Նա հավելել է, որ առաջիկայում տեսանելի կլինեն ԻԻՀ նախագահի՝ վերջերս Հայաստան կատարած այցի արդյունքները, քանի որ երկուստեք կա քաղաքական կամք եւ մեծ ցանկություն խորացնելու եւ ընդլայնելու առևտրատնտեսական համագործակցությունը: «Արաս» ազատ առևտրի գոտու գործադիր տնօրեն, տնօրենների խորհրդի նախագահ Մոհսեն Խաղեմ Արաբ Բադին իր խոսքում չափազանց կարեւորել է գործարար համագործակցությունը՝ հատկապես շեշտադրելով ազատ տնտեսական գոտիներում համատեղ աշխատանքի կազմակերպումը: Նա պատրաստակամություն է հայտնել ծանոթացնել հայ պաշտոնյաներին եւ գործարարներին «Արաս» ազատ առևտրի գոտու գործունեությանը, նաև փոխանցել իրենց փորձը հայ գործընկերներին:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտները, մասնավորապես առանձնացվել են գյուղատնտեսությունը, կաթնամթերքի եւ մսամթերքի արտադրությունը, հանքարդյունաբերությունը, նանոտեխնոլոգիաները, արդյունաբերության այլ ոլորտները, զբոսաշրջությունը: Մեկ անգամ եւս հավաստելով տնտեսական համագործակցությունը խորացնելու պատրաստակամությունը, հանդիպման մասնակիցները համաձայնել են, որ խոսքից գործի անցնելու համար անհրաժեշտ է ստեղծել համատեղ աշխատանքային խումբ, որը կնախանջի կոնկրետ քայլեր երկու երկրների տնտեսական գոտիների ակտիվ գործակցությունը կազմակերպելու ուղղությամբ:

## Հայկական ընկերությունը Իրան ընկույզ մատակարարելու համաձայնություն է ձեռք բերել



«Հայկական զարեջուր» ընկերությունը իրանական կողմի հետ համաձայնություն է ձեռք բերել մի քանի ապրանքների արտահանման մասին, մասնավորապես՝ ընկույզի եւ դիատոմիտի՝ գոտղ փոշի: Այս մասին հայ-իրանական բիզնես համաժողովի ժամանակ ասաց ընկերության տնօրեն Աշոտ Բաղդասարյանը:

«Մենք քաղաքական լավ հարաբերություններ ունենք, ինչ վերաբերում է տնտեսական հարաբերություններին՝ ահա արդեն 25 տարի է այդ ճանապարհը միակողմանի երթելու կողմից: Այս հանդիպումը ուղղված է ստեղծված վիճակը փոխելուն, Հայաստանը ներմուծող երկրից նաև ակտիվ արտահանող երկրի վերափոխելուն: Դրան կնպաստի ազատ տնտեսական գոտիների ստեղծումը: Մենք արդեն մի քանի ապրանքների, մասնավորապես ընկույզի եւ դիատոմիտի արտահանման համաձայնություն ենք ձեռք բերել: Մենք այն հիմա էլ ենք Իրան մատակարարում, սակայն առանձին ընկերությունների, որը գնային քաղաքականության տեսակետից մի շարք խնդիրներ է ստեղծում: Այդ պատճառով մենք առաջարկում ենք արտահանումը պաշտոնական մակարդակով կազմակերպել, ինչը կնպաստի այս ապրանքի մատակարարումների ծավալի բազմապատիկ ավելացմանը: Հարկ է նշել, որ դիատոմիտ են օգտագործում Եվրոպայի եւ ԵՏՄ-ի բոլոր առաջատար գարեջրի գործարանները, այդ թվում՝ Carlsberg-ը, Heineken-ը»,- հավելեց ձեռնարկատերը:

Հայաստանում ազատ տնտեսական գոտիների ստեղծման հեռանկարներին եւ փոխաշահավետ պայմաններով համագործակցության հարցերին նվիրված համաժողովին մասնակցող իրանցի ձեռնարկատերերը ընդհանուր առմամբ մեծ հետաքրքրություն դրսևորեցին ոչ միայն հայկական հումքի, այլ նաև տեխնոլոգիաների նկատմամբ:

Քանի որ Հայաստանում այգեգործությունը շատ զարգացած է, իրանցի գործարարները առաջարկում են ազատ տնտեսական գոտում համատեղ ձեռնարկություններ հիմնել: Հումքը Հայաստանից, փաթեթավորումը՝ Իրանում, եւ ձեր առաջ է պատրաստի արտադրանք՝ առանց մաքսատուրքի ԵՏՄ երկրներ մատակարարելու համար: Ոչ պակաս հետաքրքրություն են ներկայացնում նաև տեխնոլոգիաները, որոնք կիրառվում են այգեգործության, անասնապահության եւ սննդարդյունաբերության մեջ, նաև մարտկոցների արտադրության մեջ:

Հիշեցնենք, որ հունվարի 27-ին Երևանում անցկացվում է հայ-իրանական բիզնես համաժողով՝ նվիրված Հայաստանում ազատ տնտեսական գոտիների ստեղծման հեռանկարներին եւ փոխաշահավետ պայմաններով համագործակցության հարցերին:

## Սկզբում Միսիանի ջոկատն ուներ 57 հոգի եւ 27 ավտոմատ, բայց տես ինչի հասանք. Վաղարշակ Հարությունյան



Հայկական բանակը ձեւավորման բարդ ճանապարհ է անցել, բայց դեռ հաղթահարված չեն բոլոր խնդիրները: Այս մասին այսօր՝ հունվարի 27-ին, լրագրողների հետ զրույցում ասաց

պաշտպանության նախկին նախարար Վաղարշակ Հարությունյանը:

Նա նշեց, որ բանակի ձեւավորումը ողջ հայ ժողովրդի հաղթանակն ու ձեռքբերումն է, որը շատ մեծ ջանքերի գնով տրվեց:

«1990թ. սեպտեմբերի 14-ին Կառավարության որոշումով հատուկ գունդը ձեւավորվեց ՆԳՆ կազմում, քանի որ ՆԳՆ-ում կային բոլոր անհրաժեշտ տեխնիկաները: Դա մեզ թույլ տվեց դեռեւս Խորհրդային Միության կազմում լինելով՝ սկսել բանակաշինության գործընթացը: Մենք չունեինք նաև սպայական կազմ: Երբ իմ շտաբը ձեւավորեցի, ես ունեի 4 սպա, մյուսները ՆԳՆ սպաներ էին: Առանձնահատկությունն այն էր, որ մենք բանակը ձեւավորում էինք ներքեւից վերեւ, մյուս կողմից էլ ընթանում էին մարտական գործողություններ, մենք ամեն ինչի պակաս ունեինք, օրինակ՝ Միսիանի ջոկատն ուներ 57 հոգի եւ 27 ավտոմատ, Մեղրիի ջոկատը՝ 44 հոգի, 20 ավտոմատ, Տավուշինը՝ 55 հոգի, 29 ավտոմատ: Ինչից մենք սկսեցինք եւ ինչի հասանք: Սրա հիման վրա ստեղծվեց բանակի առաջին կառույցը: Գործողությունները մտան երկրորդ փուլ, երբ մայիսի 6-ին ձեւավորվեց Պաշտպանության կոմիտեն, եւ նշանակվեցի ՊԿ նախագահի առաջին տեղակալ: Եվ երրորդ՝ վերջնական փուլը եղավ ԽՍՀՄ փլուզումից հետո՝ հունվարի 28-ին, երբ Վազգեն Սարգսյանը ստորագրեց առաջին հրամանը»,- պատմեց նախկին նախարարը:

Նա նշեց, որ թեւեւ այժմ բանակում դեռ առկա են որոշ խնդիրներ, բայց դրանք զգալիորեն պակասել են տարիներ առաջվա համեմատ եւ հաշվի առնելով իրավիճակը՝ շատ չեն:

## Ադրբեջանը մտել է մրցավազքի մեջ, ծախսում է գումարներ ու չի հասնելու իր նպատակին. Վաղարշակ Հարությունյան

Մեր բանակում արձանագրված զոհերը ցավալի են, բայց դրանք նվազագույնն են: Այս մասին, այսօր՝ հունվարի 27-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է պաշտպանության նախկին նախարար Վաղարշակ Հարությունյանը:

«Իմ ժամանակ եւս եղել են դեպքեր, երբ զոհված զինծառայողների մայրերը գալիս էին բողոքի ակցիաների: Ադրբեջանական կողմում այդ տվյալները փակել են, քանի որ շատ ավելի են նման դեպքերը: Ասեմ ձեզ՝ ինքնասպանություններն ավելի վատ են, քանի որ զինվորը տասնհինգ րոպեում չի կարող նման որոշում կայացնել, ուրեմն նրան դրդել են, իսկ դա նշանակում է, որ հրամանատարական կազմն իր տեղում չէ»,-ասաց նա:

Անդրադառնալով ՀՀ զինված ուժերի սպառազինությանը, Վաղարշակ Հարությունյանը նշեց. «Մեր հակահրթիռային համակարգը վաթսուհինյակալ թվականների է, սպառազինության մի մասը՝ ութսուհինյակների: Ու մի մտածեք, թե դրանք վատն են: Ադրբեջանը դրանք չունի, նա մտել է մրցավազքի մեջ, ծախսում է գումարներ ու չի հասնելու իր նպատակին»:

## Իրանցի ներդրողը հայ գործարարներին առաջարկել է համատեղ ձեռնարկություն ստեղծել

Իրանական կողմը պատրաստ է ազատ տնտեսական գոտում ներդրումներ կատարել եւ ակտիվորեն մասնակցել

ենթակառուցվածքների կառուցմանը, հունվարի 27-ին Երևանում անցկացվող հայ-իրանական բիզնես համաժողովի շրջանակներում լրագրողների հետ զրույցում հայտարարեց RENA ընկերության տնօրեն, «Արագ» ազատ տնտեսական գոտու պատվավոր անդամ, Հայաստանում առաջին իրանցի ներդրող Ռեզա Նաֆագին:

«Ազատ տնտեսական գոտին շահույթ է ապահովում առաջին հերթին արտադրողի համար: Այն թույլ է տալիս իր գործունեությունն իրականացնել առանց լրացուցիչ մաքսատուրքերի եւ արտադրանքն արտահանել: Մովորական պայմաններում արտադրությունը մշտապես կապված է մեծ քաշքշուկի եւ ահռելի հարկերի հետ, նման գոտու ստեղծումը թույլ կտա այս ամենից խուսափել: Համոզիչ օրինակ է, որ «Արագ» ազատ տնտեսական գոտում ձեռնարկությունները 25 տարով ազատված են որևէ մաքսատուրքից»,- ասաց նա:

Որպես ամենահետաքրքիր նախագծի օրինակ Նաֆագին նշեց Elbat համատեղ մասնաճյուղի հիմնումը ազատ տնտեսական գոտում: Հայտնի է, որ հայկական կողմը իրանական շուկա իր արտադրանքը մատակարարելիս բախվել է ահռելի հարկերի խնդրի: Համատեղ ձեռնարկությունն օգնել է խուսափել այս խնդիրներից՝ մաքսատուրքը 70 տոկոսից նվազել է մինչև 10 տոկոս: Իրանն իր կողմից հումք եւ նյութեր է մատակարարում պահովելով գործարանի անխափան աշխատանքը:

Նա կոչ արեց ժամանակ չկորցնել այլ երկրներից համանման առաջարկների սպասելու վրա: Իրանը մեծ պաշարներ ունի եւ պատրաստ է միլիոնավոր դոլարներ ներդնել ենթակառուցվածքների կառուցման եւ Մեղրիում ազատ տնտեսական գոտու ճանապարհների վերանորոգման համար: Դրանից զատ, RENA-ի տնօրենը հայ ձեռնարկատերերին առաջարկեց համատեղ ձեռնարկություններ ստեղծել:

«Իրանում հումքն անչափ էժան է: Մենք կարող ենք արտադրությունների համար նյութ մատակարարել, բաշխումով կզբաղվի հայկական կողմը, որից հետո պատրաստի արտադրանքը կարտահանվի ԵՏՄ երկրներ, այդ թվում՝ նաեւ Վրաստան: Դա շահավետ կլինի ինչպես Հայաստանի, այնպես էլ Իրանի համար: Մենք Հայաստանում արդեն շատ ընկերությունների հետ ենք համագործակցում, օրինակ՝ Semur & Co-ի, Shen-ի, Elbat-ի՝ նրանց հումք մատակարարելով: Բայց պատրաստ ենք համագործակցել ոչ միայն շինարարական ընկերությունների հետ: Փոխշահավետ համագործակցության հնարավորությունները շատ են»,- հավելեց իրանցի ձեռնարկատերը:

Այն հարցին, թե ապագայում հնարավո՞ր է Ռուսաստանի հետ համատեղ ձեռնարկությունների ստեղծում Հայաստանի տարածքում, Ռեզա Նաֆագին պատասխանեց, որ իրանական կողմը պատրաստ է ցանկացած տեսակի համագործակցության, ինչպես Հայաստանի, այնպես էլ ԵՏՄ մյուս երկրների հետ:

Հիշեցնենք, որ հունվարի 27-ին Երևանում անցկացվում էր հայ-իրանական բիզնես համաժողով՝ նվիրված Հայաստանում ազատ տնտեսական գոտիների ստեղծման հեռանկարներին եւ փոխշահավետ պայմաններով համագործակցության հարցերին:

## Իրանական «Արագ» ազատ առևտրի գոտու ներկայացուցիչը Հայաստանին հստակ առաջարկներ են ներկայացրել



Իրանական «Արագ» ազատ առևտրի գոտու ներկայացուցիչները ՀՀ-ին համագործակցության առաջարկներ են ներկայացրել: ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Դավիթ Լոքյանը հունվարի 26-ին ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) «Արագ» ազատ առևտրի գոտու գործադիր տնօրեն, տնօրենների խորհրդի նախագահ Մոհսեն Արաբ Բադի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա էին նաեւ ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադին, Իսլամական խորհրդարանի պատգամավորներ Մոհամմադ Հասան Նեժադը եւ հայագի Կարեն Խանլարյանը:

Ողջունելով պատվիրակության անդամներին, նախարար Լոքյանը կարեւորել է Հայաստան-ԻԻՀ հարաբերությունների ամրապնդումն ու զարգացման նոր հնարավորությունները, եւ այդ համատեքստում ընդգծել Սյունիքում ազատ տնտեսական գոտի (ԱՏԳ) ստեղծելու ՀՀ կառավարության նախաձեռնությունը: Նախարարի խոսքով, նման տնտեսական գոտու ստեղծումը լուրջ իրացան կլինի երկու երկրների առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման համար:

«Մենք մեր երկրում ունենք ազատ տնտեսական գոտիներ, սակայն իրանական փորձը կարող է ընդունելի եւ օրինակելի լինել մեզ համար: Մենք Իրանին տալիս ենք նաեւ լավագույն գործիքը՝ ԵՏՄ երկրներ ապրանքներ արտահանելու հնարավորություն՝ ազատելով ավելացված արժեքի հարկից եւ այլ մաքսատուրքերից»,- նշել է Դավիթ Լոքյանը: Ծնորհակալություն հայտնելով նախարարին հանդիպման հնարավորության եւ ջերմ ընդունելության համար, դեսպան Սաջադին համակարծիք է եղել, որ ազատ առևտրի գոտու ստեղծումը երկու երկրների սահմանակից շրջանների տնտեսական զարգացման համար լուրջ գործոն է: Արդյունաբերություն, անասնապահություն, գյուղատնտեսություն, ջերմոցային տնտեսություն, զբոսաշրջություն, ձեռարվեստ. ահա այս ուղղություններով համագործակցելու հստակ առաջարկներ է ներկայացրել «Արագ» ազատ առևտրի գոտու գործադիր տնօրեն Մոհսեն Արաբ Բադին:

Դավիթ Լոքյանն իր հերթին անդրադարձել է երկու երկրների ազատ տնտեսական գոտիների միջեւ ամբողջական մոդելի ստեղծման գաղափարին, եւ այդ հարցում կարեւորել հայ-

իրանական բազմադարյա բարեկամական կապերի առկայությունը:

Հանդիպման ավարտին կողմերը վերահաստատել են փոխգործակցության նոր ոլորտներ սահմանելու եւ համագործակցությունը խորացնելու իրենց պատրաստակամությունը:

## Կառավարությունը սիրիահայերին օգնելու նպատակով 43 միլիոն դրամ հատկացրեց



Կառավարության պահուստային ֆոնդից 2017 թ առաջին եռամսյակում սիրիահայերին օգնելու համար կհատկացվի 43 միլիոն 368 հազար դրամ: Այսօր՝ հունվարի 26-ին, որոշում կայացվեց գումար տրամադրել ՀՀ Արտաքին գործերի նախարարությանը, որով սիրիահայերի համար կգնվեն առաջնային անհրաժեշտության պարագաներ, սնունդ:

Նախագիծը ներկայացրեց ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ծավարշ Բոչարյանը:

## Ես չեմ գղջում. Մեյրան Օհանյանը մեկնաբանում է՝ ինչու է դուրս եկել պետական համակարգից

Պաշտպանության նախկին նախարար Մեյրան Օհանյանը մեկնաբանել է, թե ինչու է դուրս եկել պետական համակարգից եւ խորհրդարանական ընտրություններից առաջ քաղաքական հայտ ներկայացնելու որոշում կայացրել:

«Անկեղծ լինելու համար կցանկանայի բոլորիդ հայացքն ուղղել դեպի ոչ վաղ անցյալ՝ խորհրդային պետություն եւ փորձել գուգահեռներ անցկացնել ներկայիս իրավիճակի հետ: Որպես պրոֆեսիոնալ զինվորական՝ իմ ծառայությունը սկսել եմ ԽՍՀՄ բանակում: Մեզնից ոչ ոք չի կարող ժխտել, որ ԽՍՀՄ-ը ժամանակի հզորագույն եւ կայացած պետություններից մեկն էր: Թե ինչ խորքային խնդիրներ ուներ եւ ինչը բերեց այդ պետության փլուզմանը, այլ քաղաքական վերլուծությունների դաշտից է, սակայն ակնհայտ է, որ Խորհրդային միության իշխող վերնախավի անհեռանկար գործելաոճը հանգեցրեց ներքաղաքական դրության սրման, ազգամիջյան բախումների, որն էլ բերեց ինքնավիզիտման: Խորհրդային միության սպան իրավունք չուներ միջամտելու ներքաղաքական կամ ազգամիջյան խնդիրներին:

Որպես զինվորական՝ ես Խորհրդային միության գաղափարախոսության կրողն էի եւ առաջամարտիկը, բայց դա չխանգարեց, որ ազգային անվտանգության սխառնալիքի ժամանակ ճիշտ որոշում կայացնեմ, եւ ես եւ իմ համախոհները ոտքի կանգնեցինք Արցախի պաշտպանության համար: Այդ ժամանակ էլ քննադատողների եւ ըմդդիմախոսների պակաս չկար: Սակայն ես չեի կարող հեռվից դիտել, թե անգն ժողովուրդն

ինչպես պետք է դիմակայի իրեն պարտադրված ոսնձգություններին: Ես կանգնեցի երկրնտրանքի առաջ՝ ընտրել հեշտը՝ որպես զինվորական չխառնվել ազգամիջյան բախումներին եւ հեռանալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղակայված իմ գնդի հետ եւ պահպանել իմ տեղը, թե դժվարը՝ դուրս գալ ԽՍՀՄ բանակից, դառնալ շարքային ֆիդային, վտանգել կյանքը եւ մասնակցել ժողովրդի պայքարին: Ես ընտրեցի դժվարը: Ի դեպ, այդ 25 տարիներից 17-ը ես ծառայությունս տարել եմ որպես զինվորական:

Այժմ էլ մենք շատ վտանգավոր պահեր ենք ապրում եւ նորից կանգնելով ընտրության առաջ՝ ընտրել եմ դժվարինը: Իմ նպատակը քաղաքական դաշտում ոչ թե թատերական ներկայացումներին մասնակցելն է, այլ սահմանադրական իրավունքով հայրենիքի համար հայրենասեր մտահոգ ուժերին համախմբելն ու ժողովրդի անվտանգության ապահովման համար ուղիներ փնտրելը: Ես չեմ գղջում, որ հրաժարվել եմ ինձ առաջարկվող բարձր պաշտոններից», - իր յուրության էջում տեղադրված տեսանյութում ասել է Մեյրան Օհանյանը:

## Ձեր պաշտոնավարումը նոր շունչ կհաղորդի ԼՂՀ- Նոր Հարավային Ուելսի կապերին. Բակո Սահակյանը՝ Գլադիս Բերեջիկյանին



Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը հունվարի 24-ին շնորհավորական ուղերձ է հղել Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի վարչապետ Գլադիս Բերեջիկյանին:

Ուղերձում ասված է.

«Հարգարժան տիկին Բերեջիկյան,

Արցախի ժողովրդի, իշխանությունների եւ անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ Ձեզ Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի վարչապետի պաշտոնն ստանձնելու կապակցությամբ:

Վստահ եմ, որ Ձեր գիտելիքներն ու հարուստ փորձը լավագույնս կձառայեն ի բարօրություն նահանգի բնակչության:

Նոր Հարավային Ուելսը, առաջատար դերակատարություն ունենալով Ավստրալիայի տնտեսական ու քաղաքական կյանքում, հայտնի է նաեւ որպես մի երկրամաս, որտեղ մշտապես կարելու էլ ժողովուրդների ազատությունն ու իրավահավասարությունը, մարդու իրավունքներն ու համընդհանուր ժողովրդավարական արժեքները:

Այդ իրողության վառ արտահայտությունն է նաեւ 2012 թվականի հոկտեմբերի 25-ին նահանգի օրենսդիր մարմնի կողմից ԼՂՀ անկախության եւ նրա բնակչության ինքնորոշման իրավունքի ճանաչման վերաբերյալ բանաձեռի ընդունումը:

Լիառույս եմ, որ Ձեր պաշտոնավարման ընթացքում նոր շունչ ու բովանդակություն կհաղորդվի Արցախի եւ Նոր Հարավային Ուելսի միջեւ բարեկամական կապերին՝ նպաստելով փոխշահավետ համագործակցության հաստատմանը:

Մեկ անգամ եւս շնորհավորում եմ Ձեզ եւ մաղթում քաջառողջություն ու մեծագույն հաջողություններ՝ Ձեր առաքելության իրականացման ճանապարհին»:

Ավելի վաղ հայտնվել էր, որ հայ Գլադիս Բերեջիկյանն ընտրվել է Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի վարչապետ:

Ինչպես հայտնում են ավստրալիական լրատվամիջոցները, 46-ամյա կինը Ավստրալիայի ամենամեծ նահանգի 45-րդ վարչապետն է, նա փոխարինում է Մայք Բերդին: Իր առաջին ելույթում Բերեջիկյանը խոստացել է լինել ղեկավար բոլորի համար: Այնուհետեւ նա պատասխանել է լրագրողների հարցերին՝ անդրադառնալով նաեւ իր հայկական արմատներին:

Նշենք, որ Գլադիս Բերեջիկյանը ներկայացնում է նահանգի «Ազատական» կուսակցությունը: Այսպիսով, նա դարձավ կուսակցությունից առաջին կին վարչապետը բոլոր նահանգների մասշտաբով:

Բերեջիկյանը հայ ներգաղթյալների ընտանիքից է, եղել է Նոր Հարավային Ուելսի արտադրական կապերի նախարար, իսկ մինչեւ վարչապետ նշանակվելը՝ նահանգի գլխավոր գանձապետը:

Հիշեցնենք, որ Գլադիս Բերեջիկյանը 2013 թվականին Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի Խորհրդարանի պատգամավորների պատվիրակության հետ միասին այցելել է Արցախ, որից հետո հայտնվել է Ադրբեջանի «սեւ ցուցակում»:

## Անցյալի լավ դրսևորումները ցանկանում ենք վերադարձնել. Վազգեն Սաֆարյան



Հայաստանի կոմունիստները խորհրդարանական ընտրություններին կմասնակցեն միասնական ուժով: Այս մասին այսօր՝ հունվարի 24-ին, լրագրողներին ասաց Հայաստանի առաջադիմական միացյալ կոմկուսի նախագահ Վազգեն Սաֆարյանը:

Նրա խոսքով՝ կոմունիստներն ընտրություններին կմասնակցեն լայն ընդգրկմամբ՝ միասնական ուժի մեջ ներառելով նաեւ բազմաթիվ անհատներ, ՀԿ-ներ, ՄՊԸ-ներ:

«Մեր ուժը կընդգրկի Հայաստանի կոմունիստական կուսակցությունը եւ Հայաստանի առաջադիմական միացյալ կոմկուսը, ինչպես նաեւ ժողովրդահայրենասիրական ուժեր: Դրանք կլինեն գործարար աշխարհի ներկայացուցիչներ, տնօրեններ, 7-8 հասարակական կազմակերպություններ, եւս 3-4 քաղաքական կուսակցություններ, որոնք մեզ հետ ունեն տրադիցիոն համագործակցության փորձ, այդ թվում՝ «Կանայք հայոց աշխարհի», «Հայրենիք», եւ այլ կուսակցություններ, որոնց անունները չեմ ուզում տալ, որովհետեւ բանակցությունները դեռ ընթանում են», - ասաց նա:

Վազգեն Սաֆարյանը հայտնեց, որ կոմունիստների եւ ժողովրդահայրենասիրական ուժերի համախմբումը ամենայն հավանականությամբ կկոչվի «Կոմունիստներ եւ ժողովրդահայրենասիրական ուժեր», որի կոնֆերանսը տեղի կունենա փետրվարի սկզբին. «Փետրվարի սկզբին երեւի Կառավարության դահլիճում կլինի կոնֆերանս, որտեղ մենք կներկայացնենք մեր միասնական ցուցակը»:

Վազգեն Սաֆարյանը կարծիք հայտնեց, որ հայ ժողովուրդն իր բնույթով սոցիալիստամետ է, ուստի ընտրվելու դեպքում իրենք առաջարկելու են սոցիալիզմի նոր գաղափարներ, հանդես են գալու տնտեսական քաղաքականության մեջ փոփոխություն մտցնելու օգտին՝ Հայաստանը դարձնելով արդյունաբերական երկիր:

«Մենք կարող ենք ասել՝ դուք մեզ տեսել եք 70 տարի՝ իր լավ եւ վատ կողմերով, անցյալի լավ դրսևորումները ցանկանում ենք վերադարձնել: Հայաստանը պետք է արդյունաբերական երկիր դարձնել՝ հենվելով սեփական ռեսուրսների վրա, մոբիլիզացիոն-արդյունաբերական քաղաքականություն իրականացնելով, օգտագործելով մեր գյուղատնտեսական ներուժը: Հայաստանի արդյունաբերական ներուժը վերականգնելու համար պետք է օգտագործվի ԵԱՏՄ մեր համագործակցությունը, տնտեսական կապերն ավելի խորացվեն», - ասաց նա:

Նրա հավաստմամբ այլ ուժերի հետ համագործակցությունը հնարավոր է միայն այս սկզբունքների գերակայության դեպքում, քանի որ իրենց համար համագործակցության ամենակարևոր չափանիշը գաղափարական ընկալումներն են:

«Մեր կուսակցությունը ուժեղ է ոչ թե իր լիզերով, այլ՝ գաղափարախոսությամբ: Մենք բաց ենք բոլոր այն առողջ ուժերի առաջ, ովքեր կցանկանան մեր գաղափարի շուրջ համախմբվել, բայց մեր հիմնական շեշտը լինելու են բոլոր այն նորմերը, որոնք մենք կարելու ենք՝ սոցիալական արդարություն, սոցիալական պաշտպանվածություն եւ Հայաստանի տնտեսության զարգացմանն ուղղված տնտեսական քաղաքականության փոփոխման անհրաժեշտություն», - նշեց կոմկուսի նախագահը:

## Հայաստան-ԵՄ բանակցությունների վերջին փուլերում ենք. ԵՄ դեսպան



Հայաստան-ԵՄ հարաբերությունների առումով 2016 թվականը լավն էր, ինտենսիվ քաղաքական երկխոսություն եղավ, ակնկալում ենք, որ Հայաստանի և Եվրամիության միջև բանակցվող շրջանակային համաձայնագիրը նոր մակարդակի կհասցվի: Այս մասին այսօր՝ հունվարի 24-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկին:

«Եվրամիություն-Հայաստան շրջանակային համաձայնագրի քննարկման վեց փուլ տեղի ունեցավ: Շրջանակային

համաձայնագիրը վերաբերում էր հիմնականում քաղաքական հատվածին, որից բացի առևտրային հարցերի վերաբերյալ բանակցություններ եղան: Հույս ունենք, որ 2017թ. Շրջանակային համաձայնագիրը իրականություն կդառնա, հեռանկարը բավականին լավատեսական է. բանագնացները շատ մոտ են համաձայնագրի կնքմանը: Հույս ունենք, որ այս տարին իրականություն կդարձի նոր շրջանակային համաձայնագիրը: Մենք իսկապես բանակցությունների վերջին փուլերում ենք: Շատ ծանր աշխատանք է իրականացվում թե՛ հայ գործընկերների, թե՛ Բրյուսելի կողմից: Կոնկրետ ամսաթվերի մասին խոսել չենք կարող, բայց կարծում եմ, որ բանագնացները շատ մոտ են համաձայնագրի կնքմանը: Եթե ամեն ինչ լավ ընթանա, ապա բանակցությունը վերջնական տեսքի բերելը, ավարտելը լուրջ իրադարձություն կլինի 2017թ.-ին»,- ասաց դեսպանը՝ հավելելով, որ շրջանակային համաձայնագիրը կարող է նոր որակ հաղորդել ՀՀ-ԵՄ երկկողմ հարաբերություններին: Մվխտալսկին արձանագրեց, որ 2016 թվականին նոր ռեկորդ սահմանեցին Բրյուսելից Հայաստան փոխանցված դրամական միջոցների առումով՝ շուրջ 62 մլն եվրո աջակցություն, որից մասնավորապես 7 մլն եվրոն հատկացվել է հաջորդ ընտրությունների նախապատրաստման համար: ԵՄ դեսպանն ընդգծեց, որ 2017թ. ԵՄ համար գերակա ուղղությունը լինելու է ՀՀ ԱԺ ապրիլի 2-ի ընտրությունները, որը իրենց ուշադրության կիզակետում են գտնվելու:

## Հայկական համարանիշերով մեքենաներն այսուհետ կարող են Իրան մուտք գործել վճարելով 90 դոլար՝ նախկին 500-ի փոխարեն



Հայկական պետհամարանիշերով ավտոմեքենաներն այսուհետ կարող են ժամանակավորապես Իրան մուտք գործել նախկին 500 ԱՄՆ դոլարի փոխարեն վճարելով շուրջ 90 ԱՄՆ դոլարի հասնող երաշխիքային գումար: ՀՀ-ում Իրանի դեսպանատան ֆեյսբուքյան էջի փոխանցմամբ, ավտոմեքենաներն Իրանի տարածքում կարող են գտնվել առավելագույնը երեք ամիս: Հայաստան վերադառնալիս վճարված երաշխիքային գումարը հետ կվերադարձվի ավտոմեքենայի սեփականատիրոջը:

## Արևելյան Ուղղափառ-Կաթոլիկ միջեկեղեցական երկխոսության հաջորդ նիստը կլինի ՀՀ-ում. օրակարգում ապաշխարհության հարցն է

Հռոմում, հունվարի 28-ին, ավարտվել է Արևելյան Ուղղափառ-Կաթոլիկ միջեկեղեցական երկխոսության միջազգային աստվածաբանական միացյալ հանձնախմբի թվով տասնչորսերորդ նիստը: Մայր Աթոռի տեղեկատվական համակարգից հայտնում են, որ հանդիպման ժամանակ քննարկվել են Ս. Հաղորդության խորհրդի պատմական զարգացմանը, ծիսական-

աստվածաբանական եւ եկեղեցաբանական արտահայտումներին առնչվող հարցեր: Երկխոսության համար նախատեսված «Ս. Հաղորդության խորհուրդը եւ Եկեղեցին» թեմայի վերաբերյալ իրենց աստվածաբանական գեկույցները ներկայացնելուց հետո, հունվարի 28-ի նիստի ժամանակ միացյալ աստվածաբանական հանձնախմբի անդամները քննարկեցին նաև հետագա հանդիպման մանրամասները: Հանձնախումբը, ընկալյալ հերթագայության համաձայն, հաջորդ նիստը գումարելու է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, 2018 թվականի հունվարի 29-ից փետրվարի 5-ը՝ բարձր հյուրընկալությամբ եւ օրհնությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Հանդիպման քննարկման նյութ են լինելու երկու եկեղեցական ընտանիքներում Ապաշխարության, Ձեռնադրության եւ Հիվանդաց օժան սրբազան խորհուրդների շուրջ ձևավորված ընկալումները եւ ծիսական-աստվածաբանական առանձնահատկությունները:

## Արևմտյան Հայաստան

### Երևանում լույս է տեսել «Համշենը և համշենահայությունը. արդի հիմնախնդիրները» գիրքը



Երևանում հրատարակվել է «Համշենը և համշենահայությունը. արդի հիմնախնդիրները» գիրքը: Աշխատության հեղինակն է Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն գիտահետազոտական հիմնադրամի տնօրեն, հայագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Հայկազուն Ավրյցյանը. իսկ պատասխանատու խմբագիրը՝ պատմական գիտությունների թեկնածու Մելինե Անույանը: Գրքում ներկայացվում են Համշենի և համշենահայության համառոտ պատմությունը եւ արդի հիմնախնդիրները, որոնք կարող են հետաքրքրել ինչպես մասնագետներին, այնպես էլ՝ ընթերցողների լայն շրջանակի: Ուսումնասիրության մեջ առանձին գլուխներով ներկայացված են Համշենի իշխանության ձևավորումն ու վերելքը, Օսմանյան կայսրության իսլամացման քաղաքականությունն ու Համշենի պայքարը ինքնության պահպանման համար 15-19-րդ դարերում, համշենահայերի դրությունը Հայոց ցեղասպանության տարիներին, համշենահայկական համայնքների ձևավորումը Ռուսական կայսրությունում և նրանց հետագա վիճակը ԽՍՀՄ-ում, ինչպես նաև՝ տեղեկություններ Թուրքիայի Հանրապետությունում կրոնափոխ համշենցիների մասին:



## Լազերեն սումեխի՝ համշենցի անվան շուրջ



Լազերեն սումեխի՝ համշենցի անվան շուրջ ուսումնասիրությունը, որն իրականացրել է Իրֆան Չաղաթայ Ալեքսիշին, ներկայացնում ենք Akunq.net-ի թարգմանությամբ:

Բոլոր համշենցիների հայրենիքը Ռիզեի Հեմշին, Չամլիհեմշին եւ Չայեի գավառների Սենոզից մինչեւ Քափթանփաշա ձգվող գյուղերն են: Այս վայրերը կոչվում են Համշեն, իսկ այս կողմերի բնակիչները՝ համշենցի: Խոփայի համշենցիներն էլ, ներառյալ արեւմուտքում եւ արեւելքում ապրող բոլոր համշենցիները, տարբեր ժամանակաշրջաններում գաղթել են հենց այդ Համշենից: Այդ ցրումը հավանաբար տեղի է ունեցել 18-րդ դարում:

Երեք գետերի՝ Փըրթընա, Փազար (Փազոնի) եւ Սենոզ գետերի ավազանում ապրող այս հանրությունը, բնականաբար, դեպի ծով բացվող կետերում շփվել է լազերի հետ: Սույն շրջանի հետ անմիջականորեն շփում ունեցած լազերը, այսինքն՝ արդեշենցի, չամլիհեմշինցի եւ փազարցի լազերը այս կողմերի ժողովրդին, այսինքն՝ համշենցիներին անվանում է սումեխի, իսկ նրանց երկիրը, այսինքն՝ Համշենը՝ Սումեխիթի: Նույն կերպ, Փըրթընա գետի ավազանում բնակվողները համշենցի կանանց համար կիրառում են սումեխիսա անվանումը:

Ավելի լավ հասկանալու համար եթե ամփոփ կերպով ներկայացնենք, կստանանք հետեւյալ պատկերը.

համշենցի – սումեխի

Համշեն – Սումեխիթի

համշենցի կին – սումեխիսա:

Մեր շրջանի ընտրյալ (!) պատմաբաններից Մուզաֆֆեր Արըջըն «Ռիզե» վերնագրով գրքում նշում է, թե «Լազերը, որոնց նախահայրերը եւս թուրք են, իրենց հարեւան վրացիներին անվանում են «գյուրջյու» (թուրքերեն՝ վրացի-Ակունքի խմբ.), մեզրեղներին՝ մեզրեղ, իսկ թուրքերեն խոսող թուրքերին՝ ՍՈՒ ՄԵՂԻ, որը նշանակում է՝ երեք քամի / երեք թեւ / երեք նետ: Այսինքն, ըստ նրա, այս արտահայտությունը տարածվում է բոլոր նրանց վրա, ովքեր թուրքերեն են խոսում, եւ մեզ համար ամենահիմնավոր ապացույցն է՝ օղուզական ցեղի երեք նետավոր խմբի վերաբերյալ: «Միթե լազերի վրա ճնշում է գործադրվել, որ այդ արտահայտությունը կիրառեն», - գրում է նա:

Անշուշտ պարոն Մուզաֆֆերի ենթադրածի պես չէ. լազերը միայն համշենցիներին են սումեխի կոչում: Ելնելով նրանից, որ համշենցիները թուրքերեն են խոսում, սխալ կլինի ընդհանրացում անել եւ եզրակացնել, թե սումեխի են անվանվում բոլոր նրանք, ովքեր թուրքերենով են հաղորդակցվում: Քանզի բոլորը՝ համշենցիներն էլ ներառյալ, տարբերակում են համշենցիներին, որոնց մայրենի լեզուն թուրքերենն է (Համշենցիների մայրենին հայոց լեզվի Համշենի բարբառն է, որը Ռիզեի նահանգում ապրող

համշենցիներն արդեն մոռացության են մատնել եւ օգտագործում են միայն որոշ բառեր եւ արտահայտություններ: Իսկ Խոփայի համշենցիները պահպանել են այն-Ակունքի խմբ.) եւ ռիզեցիներին: Տվյալ կողմերի արտահայտությամբ՝ համշենցիները համշենցի են, իսկ ռիզեցիները՝ հորում:

Ինչ վերաբերում է սումեխիին, պարոն Մուզաֆֆերը այդ բառով փորձում է ապացուցել, թե համշենցիները հայ չեն: Ըստ իր ստուգաբանության՝ լազերենով սումեխի նշանակում է «երեք քամի», եւ թեեւ անհայտ է, թե ինչպե՞ս է այդ ստուգաբանությունը նրան հաջողվել, այնուամենայնիվ, «երեք քամին» կապում է «երեք թեւին», որից էլ՝ օղուզների նշանավոր «երեք նետին»: (Տես՝ <http://www.hemsinliyiz.biz/index.php/Thread/19654-Muzaffer-ARICI/>):

Լավ, իսկ իրոք այդպե՞ս է:

Երբ մեր շուրջը մի փոքր ուսումնասիրություն ենք կատարում, ստանում ենք Մուզաֆֆեր Արըջըրի ասածի լրիվ հակառակ պատկերը: Կովկասյան տարածքում հայ անվանմանը համընկնում է լազերեն սումեխի բառը: Վրացիները հայերին սումեխի, իսկ Հայաստանը Սումխեթի են անվանում: Մեզրեղները եւս սումեխին կիրառում են հայ իմաստով: Օսերները հայերին կոչում են սումիխ, իսկ արխազները՝ Աճ°ամաճ: Ավարներն էլ Հայաստանն անվանում են ts°amagx:

Սույն բառը դեռ չեն կարողացել հստակ ստուգաբանության ենթարկել: Ժողովրդական ստուգաբանության վրա հիմնվելով՝ փորձել են բացատրել, որ վրացերենում սամխեթին նշանակում է հարավ: Սակայն ավելի տրամաբանական է Դյակոնովի առաջարկած տարբերակը, ըստ որի՝ սումեխի/սումեխի անունը ծագել է արքադերեն «սուխմու», իսթերեն «զուհմա» կոչվող շրջանի անվանումից, որն արտահայտում էր Եփրատի ավազանի վերին կողմերը եւ ենթադրում, որ մի ժամանակ հայերի նախնիներն ապրել են հարավկովկասյան ցեղերի հետ համատեղ կամ վերջիններիս հարեւանությամբ, եւ որ այդ անունը պահպանվել է հարավկովկասյան ժողովուրդների լեզուներում:

Ըստ էության՝ լազերը համշենցիներին սումեխի, այսինքն՝ հայ են կոչում իրենց լեզվով: Լազերի հետ անմիջական շփում ունեցած այդ հայկական հանրությունը հետզհետե հեռացել է քրիստոնյա հայկական խմբից, իսկ լազերը թուրքերենով «Էրմենի» (հայ-Ակունքի խմբ.) բառն սկսել են օգտագործել հայերի վերաբերյալ, իսկ լազերեն «սումեխի» բառը՝ միմիայն համշենցիների: Դրա պատճառն այն է, որ ներկայում համշենցի եւ հայ հանրությունները թեեւ չեն ուրանում իրենց համատեղ ծագումն ու արմատները, սակայն այլեւ գոյություն ունեն որպես միմյանցից տարբեր խմբեր:

## Կարո Փայլանը Թուրքիայի խորհրդարանում հայերենով է շնորհավորել Սուրբ Ծնունդը

Թուրքիայի քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցության հայ պատգամավոր Կարո Փայլանը խորհրդարանում հայերենով է շնորհավորել Սուրբ Ծնունդը: Իր ելույթի ընթացքում նա ասել է. «Քրիստոս ծնա եւ յայտնեցավ, ձեզի մեզի մեծ աւետիս»:

Նշենք, որ օրեր առաջ էլ նա գրավոր հարցադրում էր ուղղել Ազգային կրթության նախարար Իսմեթ Յըլմազին եւ

պարզաբանում էր պահանջել, թե ինչո՞ւ է դպրոցներում արգելվել տոնել Ամանորը: «Կրթության նախարարությունն ինչպես է տարբերակում Նոր Տարին ու Սուրբ Ծնունդն իրարից: Ինչն է պատճառը, որ նույնիսկ ազգային փոքրամասնությունների դպրոցներում նույնպես արգելվել է տոնել Ամանորը»,–հարցադրման մեջ գրել էր Կարո Փայլանը:

## Վանա լճում խորտակված ռուսական նավ են հայտնաբերել



Թուրքիայում Վանա լճի ուսումնասիրման միությունը Բիթլիս նահանգի հատվածում Վանա լճի հատակում ռուսական նավ է հայտնաբերել: Թուրքական CNNturk-ի փոխանցմամբ՝ Վանա լճի հատակում հայտնաբերված 40 մետր երկարությամբ ռուսական նավի անունը եղել է «Աղթամար»: Նշվում է, որ դեռևս ռուսների կողմից Վանը վերցնելուց հետո լճում կառուցված նավը ռուսների հեռանալուց հետո շարունակվել է շահագործվել թուրքերի կողմից, սակայն 1958-ին նավը փոթորկի ժամանակ բախվել է ժայռի ու խորտակվել: Խորտակված ռուսական նավը Վանա լճում հայտնաբերվել է 1,5 տարվա շխատանքի արդյունքում 23 մետր խորության տակ:

## Թուրքիայի Դերիքում մուսուլման բնակիչները Սուրբ Ծնունդին նվերներով այցելել են շրջանի միակ հայ ընտանիքին



Թուրքիայի Մարդին նահանգի Դերիքի շրջանում ապրող մի խումբ քաղաքացիներ Սուրբ Ծնունդին նվերներով այցելել են շրջանի միակ հայ ընտանիքին: Թուրքական Mardinlife կայքի փոխանցմամբ՝ Դերիքում ապրող միակ հայ ընտանիքին այցելած խմբից գրող Էյուփ Գյուվենը նշել է, թե հայերը տարածաշրջանի բնիկ ժողովուրդներից են եւ իրենք հատուկ Քրիստոսի ծնունդը շնորհավորելու համար նվերներով այցելել են Նաիֆ Դեմիրջիին: «Մեծ խնդիր է, որ հայերն այս շրջանից հեռացել են, սակայն մենք նրանց հիշում ենք ու շնորհավորում ենք բոլոր հայերին Սուրբ Ծնունդի կապակցությամբ»,–ասել է Էյուփ Գյուվենը:

Դերիքի միակ հայ ընտանիքի անդամ Նաիֆ Դեմիրջին շեշտել է, թե մուսուլման հարեւանները չեն թողնում իրենց միայնակ եւ մշտապես հետաքրքրվում են իրենց վիճակով:

## Վանի Աղթամար կղզում նոր նավահանգիստ է կառուցվել



Վանի գլխավոր տուրիստական կենտրոն համարվող Աղթամար կղզում նոր ավելի հարմարավետ նավահանգիստ է կառուցվել: Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Վանի Գեւաշի (Ուստան)քաղաքապետարանի պահանջով Տրանսպորտի եւ հաղորդակցության նախարարությունը ձեռնամուխ էր եղել Աղթամար կղզում նոր նավահանգիստ կառուցելուն: Մեկ ամիս տևած աշխատանքից հետո ավարտին է հասցվել 4 մետր լայնությամբ ու 50 մետր երկարությամբ նոր նավահանգիստը: Նշվում է, որ ամառը մեծ թվով այցելուներ ունենալու պատճառով Աղթամար կղզու երկու նավահանգիստները չեն կարողացել հարմարավետ ծառայություն մատուցել: Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին 915-921 թվականներին կառուցվել է Վասպուրականի իշխան Գագիկ Արծրունու պատվերով՝ ճարտարապետ, քանդակագործ եւ նկարիչ Մանվելի կողմից: Տաճարի արտաքին պատերը զարդարված են 6 հորիզոնական շարք կազմող զարդաքանդակներով, որոնք չեն խախտում պատերի հարթությունը:



## Թուրքիայում 10 տարի առաջ այս օրը սպանվեց Հրանտ Դինքը. համառոտ ակնկարկ

Հունվարի 19-ին լրացավ է Ստամբուլի հայկական «Ակոս» թերթի նախկին գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանության 10 տարին: Նա Թուրքիայի ամենահայտնի հայերից մեկն էր ու թեև նրա հասցեին հնչած բազմաթիվ սպառնալիքներին, նա միշտ մնում էր հանգիստ ու հավասարակշռված: Հանդես գալով մի շարք ժողովրդավարական պլատֆորմներում ու հասարակական կազմակերպություններում, Դինքն ընդգծում էր Թուրքիայի ժողովրդավարացման անհրաժեշտությունը, խոսում խոսքի ազատության, Թուրքիայում մարդու, ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին: Նա հայերի

ու թուրքերի միջև շատ կարևոր քարոզիչ էր եւ հավատում էր, որ հայ համայնքը հնարավորություն կունենա Թուրքիայում ապրել ազատ եւ չենթարկվել պատմական ճնշումների:



2007 թվականի հունվարի 19-ին, Հրանտ Դինքն սպանվել է Ստամբուլում, իր խմբագրած «Ակոս» թերթի խմբագրատան շենքի դիմաց: Մինչ սպանությունը նա իր հրապարակումներում հայտնում էր, որ իր հասցեին սպառնալիքները հաճախակի են դարձել: Բացի այդ, նա բողոքում էր, թե ոստիկանությունը հրաժարվել է պաշտպանել իրեն հնարավոր մահափորձից:

Դինքի սպանության գործը բացահայտելու համար միջազգային մի շարք կառույցներ բազմաթիվ անգամ կոչ են արել թուրքական իշխանություններին՝ ապահովել անաչառ քննություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2010-ի սեպտեմբերին մեղավոր ճանաչեց Թուրքիային՝ Հրանտ Դինքին չպաշտպանելու համար, չնայած որ հետքննության ընթացքում պարզ էր դարձել, որ թե՛ ժանդարմերիան, թե՛ ոստիկանությունը տեղյակ են եղել նրա դեմ նախապատրաստվող սպանությանը:

Դինքի գործով սկսված առաջին շուրջ դատավարությունն ունեցավ ամոթալի ավարտ: Այդպես էլ հայտնի չդարձան սպանության պատվիրատուները, չուսումնասիրվեցին դատարան ներկայացված մի շարք փաստեր եւ վկայություններ: 2011-ի հունվարի 17-ին տեղի ունեցած 25-րդ դատավարության ժամանակ, դատարանն ազատ արձակեց սպանության կազմակերպման մեջ գլխավոր կասկածյալներից Էրիհան Թունջելին: Դատարանը միայն դատապարտեց սպանության գործիք հանդիսացած Օզյուն Սամսաթին՝ 22 տարի 10 ամիս ազատազրկման, իսկ սպանության ուղղորդման մեջ մեղադրվող Յասին Հայալին՝ ցմահ ազատազրկման: Դատական շուրջի գավեշտներից մեկն էլ այն էր, որ դատավճիռ կայացնելուց հետո հաջորդ օրը պարզվեց, որ Դինքի սպանության գործով 19 մեղադրյալներից 18-ի նկատմամբ է որոշում կայացվել: Դատարանը մոռացել էր մի 19-րդ մեղադրյալի նկատմամբ որոշում կայացրել:

Թուրքիայում դատարանի այս որոշումն ընդունվեց մեծ դժգոհությամբ: Դատարանի կողմից վճիռ կայացնելուց հետո դատարանի մոտ հավաքված հազարավոր մարդիկ սկսեցին բողոքել կայացված անարդար վճիռ դեմ եւ երթով շարժվեցին դեպի «Ակոս»-ի խմբագրություն:

Դատավճիռի հետ կապված Թուրքիայի մշակույթի նախարարը նշեց, թե այն վտանգավոր զարգացում էր:

Նախագահ Գյուլը շեշտեց, որ տեսնում է հասարակության դժգոհությունը, արդարադատության նախարարը փորձեց հանգստացել հասարակությանը՝ նշելով, թե դատական գործընթացը չի ավարտվել եւ դեռ կա բողոքարկման փուլ: Թուրքիայի գլխավոր ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» կուսակցության առաջնորդ Քեմալ Զըրքչարօղլուն քննադատեց վճիռը՝ ասելով, թե սա էր Էրդողանի արդարադատությունը:

Չավեշտալի է, սակայն Դինքի սպանության գործով ամոթալի վճիռը կայացրած դատարանի նախագահը հայտարարեց, թե կայացված վճիռը եւս իր սրտով չէ:

Դատավճիռից 1,5 տարի հետո՝ 2013-ի մայիսին, Հրանտ Դինքի սպանության գործով դատավճիռը վճարելի 9-րդ դատարանում բեկանվելուց հետո ուղարկվեց Ստամբուլի ծանր հանցագործությունների գործերով 14-րդ դատարան: Այնտեղ արդեն 2013-ի սեպտեմբերի 17-ից վերսկսվեց Դինքի սպանության գործով դատավարությունը: Այսինքն, արդեն 1 տարուց ավել է, ինչ ընթացում է Դինքի սպանության դատավարությունը, սակայն կրկին արդյունքներ չկան: Պարզապես այս ընթացքում ձերբակալվել եւ կալանվել է նախորդ դատավճիռով ազատ արձակված Էրիհան Թունջելը: Նա վերսկսված դատական նիստերից մեկի ժամանակ սկանդալային հայտարարություն էր արել՝ պնդելով, թե Դինքի սպանությունն իրականացրել է «Էրզենեկոն»-ից ավելի բարձր կազմակերպություն, որի անդամներին պետությունը աշխատավարձ է տալիս:

Այս ընթացքում հետաքրքիր զարգացում էր այն, որ Թուրքիայի արդարադատության նախարարը թույլատրեց դատական պատասխանատվության կանչել պետական պաշտոնյաներին, ովքեր ինչ-որ առումներով կապված են Դինքի սպանության հետ:

Այդ համատեքստում արդեն հարցաքննվեցին ու ձերբակալվեցին են բարձրաստիճան պաշտոնյաներ ու ոստիկաններ:

Իսկ Դինքի սպանության գործով դատավարության համար «բեկումնային» դարձավ Էրդողան-Գյուլեն հակամարտությունը, քանի որ այդ հակամարտության սրացումից հետո սկսեցին ձերբակալվել նախկին բարձրաստիճան գյուլենական պաշտոնյաներ՝ Դինքի սպանության մեջ որոշակի մեղքի բաժին ունենալու մեղադրանքով:

Դրանից հետո դատավարությունները սկսեցին սկանդալային հայտարարություններով ուղեկցվել: Յուրմունքներից մեկի համաձայն՝ ՆԳ նախկին նախարարը պահանջել է հետախուզության պետից վերացնել Դինքի դեմ մահափորձի մասին հետախուզական տեղեկությունը, իսկ հետախուզության պետը թեև չի վերացրել, սակայն ժամանակին չի էլ բարձրաձայնել: Պարզվեց, որ Հրանտ Դինքի սպանությունը բացահայտվել է օրերի ընթացքում, սակայն դատական գործընթացները դե ֆակտո դուփում են նույն տեղում:

Ու չնայած թուրքական իշխանությունների հավաստիացումներին, Հրանտ Դինքի սպանությունը շարունակում է մնալ Թուրքիայում ավանդույթի վերածված չբացահայտված քաղաքական սպանությունների շարքին:

Այսօր՝ հունվարի 19-ին, Ստամբուլում Հրանտ Դինքի մահվան 10-րդ տարեիցի կապակցությամբ մի շարք կազմակերպություններ նախաձեռնել են սգո եւ բողոքի միջոցառումներ:

**Կարո Փայլանի դեմ դատական հայց է ներկայացվել. պահանջում են գրկել նրան մանդատից ու Թուրքիայի քաղաքացիությունից**



Թուրքիայի քրդամետ «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցության հայ պատգամավոր Կարո Փայլանի դեմ հայց է ներկայացվել Էդիրնեի արդարադատության պալատ, գրում է թուրքական YeniAsia.com-ը:

Պարբերականի փոխանցմամբ, թուրքական «Մեծ միություն» կուսակցության Էդիրնեի մասնաճյուղի ղեկավար Արիֆ Զյորոլուն եւ մի շարք քաղաքացիներ, հայց են ներկայացրել դատարան՝ պահանջելով գրկել պատգամավորի մանդատից եւ քաղաքացիությունից:

Զյորոլուն հայտարարել է, որ խորհրդարանում «ցեղասպանություն» բառն օգտագործելը վիրավորանք է թուրք ժողովրդի հասցեին: Նա պնդել է, որ Թուրքիայի Հանրապետության ստեղծումից ի վեր Թուրքիայի հայ քաղաքացիները ապրում են խաղաղության եւ համաձայնության մթնոլորտում: «Թուրք ազգի կողմից չիրականացվածն իրականության քողի տակ ներկայացնել փորձող այս մարդուն ոչ միայն պատգամավորական մանդատից, այլև քաղաքացիությունից կգրկենք», - հայտարարել է նա՝ հավելելով, որ Կարո Փայլանն իր վարքով ժողովրդի շրջանում քեն եւ ասելություն է տարածում:


Նշենք, որ օրեր առաջ Կարո Փայլանը մեջլիսում խոսել էր Հայոց ցեղասպանությունից, որից հետո խորհրդարանական երեք կուսակցությունների պատգամավորներն իրար հերթ չտալով քննադատում են Կարո Փայլանին: Բացի այդ, Կարո Փայլանին գրկել են երեք նիստի մասնակցելու իրավունքից:

**Հայոց ցեղասպանության ընթացքում օսմանյան կառավարության ստահող նամակը Իսպանիայի թագավորին (Ֆոտո)**

Վերջերս իսպանական մի քաղաք եւս՝ Սաբադելը, պաշտոնապես ճանաչել ու դատապարտել է Հայոց ցեղասպանությունը: Սակայն նույնիսկ մասնագետներից շատ քչերին է հայտնի, որ Հայոց ցեղասպանության ընթացքում Իսպանիայի թագավորը փորձել է փրկել 1915 թ. ապրիլին ձերբակալված հայ ականավոր մտավորականներին և այդ նպատակով նամակ է ուղարկել օսմանյան կառավարությունը:

Akunq.net-ը հրապարակել է Իսպանիայի թագավորի այդ նամակին ի պատասխան օսմանյան կառավարության ստահող նամակը, որում նշվում է, թե իբր հայ մտավորականները հեղափոխական գործունեություն են ծավալել, և թե իբր արեւմտահայ մտավորականության այնպիսի կարկառուն ներկայացուցիչներ, ինչպիսիք են Ակնունին, Դանիել Վարուժանը և Միամանթոն, փախել են Ռուսաստան:

Ինչպես հայտնի է, 1915 թ. հուլիսով թվագրված այս նամակից շատ չանցած նրանք բոլորը դաժանաբար սպանվեցին Օսմանյան պետությունում: Փաստաթղթերը օսմանյան արխիվից գտել, թարգմանել և սիրով տրամադրել է ամերիկաբնակ պոլսահայ ուսումնասիրող Չևորգ Բ.Հակոբյանը:



ԲԱՐՈՐԱԳՈՅՆ ԳՐՈՒ  
Արտադրելու Եւրոպայի Միության  
Քաղաքացիական  
Բարոյագրություն 1147

Վերջինի Լեյբ Փնայաներին Գրանցված ԵՄ Քննարկումները 25 Մայիս  
1119 10 Քննարկեր Քննարկումն արտատրաման է:

Պատասխան 421  
Սեպտեմբեր 1988 թվականին, Ներսիս Լաւրեան խնդրանք ներկայացրեց ինչ-  
Նայանի խնդրանքները գրանցված այս ակտիվը կրեմիստան ինչ-  
Նայանի կողմ խնդրանքները պիտի իրականանան:  
Այս խնդիրը, Արտադրանք Փնայաներին քաղաքացիական քաղաքացիական  
Քննարկումները պիտի իրականանան:

Թի. 30

Հայեր՝ որոնք մասին  
Արտադրելու Եւրոպայի  
Քաղաքացիական  
Բարոյագրություն 1147

Վերջինի Լեյբ Փնայաներին Գրանցված ԵՄ Քննարկումները 25 Մայիս  
1119 10 Քննարկեր Քննարկումն արտատրաման է:

Քաղաքացիական

Արտադրելու Եւրոպայի  
Քաղաքացիական  
Բարոյագրություն 1147

Քաղաքացիական Գրանցված ԵՄ Քննարկումները 25 Մայիս  
1119 10 Քննարկեր Քննարկումն արտատրաման է:

Վերջինի Լեյբ Փնայաներին Գրանցված ԵՄ Քննարկումները 25 Մայիս  
1119 10 Քննարկեր Քննարկումն արտատրաման է:

Պատասխան 421

Սեպտեմբեր 1988 թվականին, Ներսիս Լաւրեան խնդրանք ներկայացրեց ինչ-  
Նայանի խնդրանքները գրանցված այս ակտիվը կրեմիստան ինչ-  
Նայանի կողմ խնդրանքները պիտի իրականանան:  
Այս խնդիրը, Արտադրանք Փնայաներին քաղաքացիական քաղաքացիական  
Քննարկումները պիտի իրականանան:

Ինչի գրանցված: Արտադրելու Եւրոպայի Քաղաքացիական  
Բարոյագրություն 1147

Թի. 32

«Արաս»-ի կայքում տեղադրված հայտարարության մեջ նշվել է, որ նոր պայուսակներ են հանվել վաճառքի հայերեն թռչնագրերով, որոնց գինը 10 թուրքական լիրա (3 դոլար) է: Թռչնագիրը զարդագրերի տեսակ է, որի տառերը թռչունների պատկերներ են:

## Թուրք նախարար մասնակցել է Դինքի հիշատակության միջոցառմանը

Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարար Նաբի Ավջըն մասնակցել է «Ակոս» շաբաթաթերթի նախկին գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի հիշատակի միջոցառմանը: Թուրքական Demokrathaber կայքի փոխանցմամբ՝ Մշակույթի եւ տուրիզմի նախարար Նաբի Ավջըն Դինքի հիշատակի միջոցառմանը Դինքի սպանության հետ կապված իր ցավակցություններն է հայտնել Դինքի ընտանիքին, Դինքի ընկերներին, հայ համայնքին ու «Ակոս» շաբաթաթերթի աշխատակիցներին:



Միջացառմանը մասնակից լրագրողների մեկի հարցին ի պատասխան, նախարար Նաբի Ավջըն նշել է, թե Դինքի սպանության դատավարությունը մույթ պատմություններով է անցել, սակայն պայուսակներ այն ընթացակարգով է օրենքին համապատասխան:

## Սփյուռք

### Իրանի հայերը Ամանորը դիմավորել են Թեհրանի Սուրբ Սարգսի մայր տաճարում



Իրանի հայերը Ամանորը դիմավորել են Թեհրանի Սուրբ Սարգսի մայր տաճարում: IRNA լրատվական գործակալությունը ֆոտոռեպորտաժ է պատրաստել, որը ներկայացնում ենք ստորև:

## Թուրքիայում վաճառքի են հանվել հայերեն այբուբենով պայուսակներ



Ստամբուլի «Արաս» հրատարակչությունը հայերեն այբուբենով զարդագրերով տետրերից հետո անցել է պայուսակներին:



## Թուրքիայի հայ համայնքից շատերն այսօր մտածում են արտագաղթելու մասին. 2016թ. ամփոփում է Բագրատ Էստուկյանը



*Թուրքիայի հայ համայնքից շատերն այսօր մտածում են երկրից արտագաղթելու մասին: Այս մասին հարցազրույցում ասել է Մտամբուլում լույս տեսնող «Ակու» հայկական շաբաթաթերթի հայկական բաժնի խմբագիր Բագրատ Էստուկյանը:*

**Պարոն Էստուկյան, ինչպիսի՞ տարի էր համայնքի համար 2016 թվականը՝ հաշվառման թվով Թուրքիայում տեղի ունեցած ահաբեկչություններն ու ճգնաժամը:**

Նախորդ տարին ոչ միայն հայ համայնքի, այլև Թուրքիայի բոլոր քաղաքացիների համար շատ ծանր տարի էր, մտահոգիչ իր բոլոր զարգացումներով, մտահոգություն պատճառող տարի էր: Մարդիկ մտահոգ են շատ: Թուրքիայի բոլոր քաղաքացիները, այդ թվում 70-80 հազար հայերը, լավ բաների ակնկալիք էլ չունեն, ցավոք սրտի: Թուրքիայում պատերազմական իրավիճակ է, հետևաբար մտահոգությունները շատ են: Այսբանից հետո շատերն են մտածում Թուրքիայից հեռանալու եւ ավելի անվտանգ երկրներում ապրելու մասին: Իսոպս ոչ միայն հայերին է վերաբերում, այլև ուրիշ այլ ազգերի: Մարդկանց մոտ լավատեսություն չկա:

Հեռացողները շատ մեծ թիվ չեն կազմում, սակայն հեռանալու մասին շատերն են մտորում: Օրինակ, վերջերս հայտնի է դարձել, որ 51 հրեա է հեռացել Թուրքիայից, հայերի վերաբերյալ վիճակագրություն չկա, միզուցե լինեն արտագաղթողներ, սակայն հեռանալու մասին մտածողներն իրոք շատ են:

**Թուրքիայում հեղաշրջման փորձից հետո ամբողջ երկրում իշխանությունները բռնություններ եւ ճնշումներ են գործադրում հասարակության տարբեր շերտերին կատմամբ:**

**Արդյոք բռնությունների, ճնշումների ենթարկվել են հայ համայնքի ներկայացուցիչները:**

Հայ համայնքի նկատմամբ հատուկ ճնշումներ չեն եղել, հատկապես հուլիսի 15-ին տեղի ունեցած դեպքերից հետո: Միակ բացառությունը հայ բժշկի գրասենյակն էին փակել, ասում էին՝ իբր այդ բժշկի գործընկերներն առնչություն ունեն հեղաշրջման փորձի հետ, սակայն հետո խնդիրը հարթվեց: Սա միակ դեպքն էր: Այնուամենայնիվ, այս դեպքից հետո Թուրքիան ավելի բռնապետական դարձավ, շատ օրենքներ այսօր չեն գործում:

**Թուրքիայի խորհրդարանում այսօր 3 պատգամավոր կա: Ի՞նչ են նրանք արել նախորդ տարվա ընթացքում հայ համայնքի համար:**

Ավելի քան մեկ տարի է, որ Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ խորհրդարանում երեք հայ պատգամավոր կա երեք տարբեր կուսակցություններից: Նրանք խորհրդարանում չեն՝ հայ համայնքը ներկայացնելու համար, այլ անհրաժեշտ ձայները հավաքելու միջոցով: Հետևաբար, այդ նրանք հայ պատգամավորներ են, հայկական ծագում ունեն, բայց իրենց պատասխանատվությունն ու գործունեության դաշտն ավելի բարձր է, քան միայն հայ համայնքին ներկայացնելը: Չեմ կարող երեքին էլ հավասար գնահատական տալ, քանի որ Մարգար Եսայանն իշխանության կուսակցության պատգամավորն է, եւ նրա ձայնը շատ հազվադեպ ենք լսում, բայց մյուս կողմից Կարո Փայլանն ու Սելինա Դողանը, որոնք ընդդիմադիր ուժերից են, նրանց ձայնն ավելի լսելի է, ավելի ակտիվ մասնակցություն ունեն խորհրդարանում եւ ելույթներ են ունենում: Այս երկու գործիչները մեծ ծավալի աշխատանք են իրականացնում, բոլոր հայերն էլ գնահատում են նրանց աշխատանքը, քաղաքական գործունեությունը:

Չմոռանանք բայց, որ Թուրքիայում քաղաքականության մեջ լինելը շատ դժվարություններ ունի: Հուլիսյան դեպքերից հետո վտանգավոր է նաեւ պատգամավորների համար, որովհետեւ 13-ն արդեն կալանքի տակ է: Այս տեսանկյունից, Փայլանի եւ Դողանի գործունեությունը մի կողմից մտահոգում է հայ համայնքին, մյուս կողմից հպարտություն է ներշնչում:

## Կանադայում մահացել է Հայոց ցեղասպանությունը վերապրած վերջին մարդը



Կանադայում հունվարի 19-ին 107 տարեկանում մահացել է Հայոց ցեղասպանությունը վերապրած վերջին մարդը՝ Քնար Բոհջեյան-Եմենիջյանը:

Քնար Բոհջեյան-Եմենիջյանը ծնվել է 1909 թվականին Կեսարիայում: Բոհջեյան ընտանիքի անդամները թուրքական անուններ էին կրում Օսմանյան կայսրությունում ցեղասպանությունից փրկվելու համար:

Բոհջեյանն ամուսնացել էր եւ տեղափոխվել Եգիպտոս, իսկ 1971-ին տեղափոխվել Մոնրեալ, հայտնում է Horizon Weekly-ն:

Նա ուներ 2 որդի, 3 թոռ եւ 3 ծոռ:

## Թեհրանում բարձրահարկ շենքի փլուզումից տոժածների մեջ հայեր չկան. ԱԳՆ



Թեհրանում հրդեհից կեսաղարյա վաղեմություն ունեցող բարձրահարկ Plasco շենքի փլուզման հետեւանքով տուժածների թվում հայեր չկան: Այս մասին հայտնեցին ԱԳՆ մամուլի ծառայությունից:

Ավելի վաղ հայտնվել էր, որ Թեհրանում հրդեհից փլուզվել է կեսաղարյա վաղեմություն ունեցող Plasco շենքը: Միջադեպի հետեւանքով մահացել է 30, վիրավորվել շուրջ 70 մարդ, այդ թվում՝ հրշեջ ծառայության աշխատակիցներ: Չոհերի թիվը կարող է աճել, քանի որ շենքում մինչեւ 300 մարդ է եղել:

Ծեներում հրդեհը բռնկվել էր 9-րդ հարկում եւ արագորեն վերեւ տարածվել: Կրակից հալվել էին պողպատյա կառույցները, ինչի հետեւանքով շենքը փլուզվել է:

Plasco-ում տեղակայված էին հագուստի արտադրամասեր եւ այլ կոմերցիոն հաստատություններ: Ծեները կառուցվել էր 53 տարի առաջ:

Թեհրանի ամենահին բարձրահարկը համարվող 17-հարկանի Plasco շենքում հրդեհը բռնկվել էր տեղական ժամանակով ժամը 8-ին: Մոտ 200 հրշեջներ 3.5 ժամ պայքարում էին հրդեհի դեմ:

## Ստամբուլահայ համայնքը մտահոգված է հոգեւորականների պակասով. Ակոս

Պոլստ հայոց պատրիարքարանում հոգեւորականների թվի պակասը խնդրի առաջ է կանգնեցրել ստամբուլահայ համայնքին:

Ստամբուլի հայկական «Ակոս» շաբաթաթերթն անդրադարձել է Սուրբ Ծնունդի ընդունելության ժամանակ Պոլստ պատրիարքական ընդհանուր փոխանորդ, արք, Արամ Աթեշյանի հայտարարությանը, թե եւս 3 հոգեւորական տարբեր պատճառներով դադարեցրել է հոգեւոր ծառայությունը:

Այս փաստը ստիպել է «Ակոս»-ին ուսումնասիրել հոգեւորականներ պատրաստելու գործընթացին՝ խոսելով Պոլստ պատրիարքարանի հոգեւորականներից Չաքելու Օհանյանի հետ: Վերջինս շեշտել է, որ Թուրքիայի տարածքում հոգեւորականներ պատրաստելու համար

կրթօջախ չունենալը եկեղեցու համար նույնն է ինչ թռչունն առանց մի թևի:

Իր հերթին Հայր Կորյուն Ֆեներջյանն էլ նշել է, թե հոգեւորականի թեկնածուին կրթելու համար պետք է ուղարկել Էջմիածին կամ Երուսաղեմ:

## The Sydney Morning Herald. Գլեդիս Բերեջիկյանն «ամուսնացած է իր աշխատանքի հետ»



Հայուհի Գլեդիս Բերեջիկյանը ընտրվել է ավստրալական Նոր Հարավային Ուելս նահանգի 45-րդ վարչապետ: Ավստրալական The Sydney Morning Herald-ը փորձել է հասկանալ, թե ով է ավստրալական նահանգի առաջին կին վարչապետը:

46-ամյա Գլեդիս Բերեջիկյանի հանդեպ մեծ համակրանք էր տածում ավստրալական Նոր Հարավային Ուելս նահանգի նախկին վարչապետ Բարի Օ' Ֆարելը: Դեռ 2014-ին նա առաջարկել էր Գլեդիսին իր հրաժարականից հետո թեկնածությունն առաջադրել վարչապետի պաշտոնին, բայց Գլեդիսը հրաժարվել էր: Հավաստի աղբյուրի խոսքով, նա զգացել էր, որ պատրաստ չէ դրան:

Իսկ ընկերները Գլեդիսին նկարագրում են որպես ինքնուրույն կին, որը շատ կապված է իր ընտանիքի հետ: Նա հազիվ թե մեկ բաժակից շատ գինի խմի ընթրիքի ժամանակ, սիրում է օպերա ու գրքեր ժամանակակից պատմության մասին, խաղում է գոլֆ, ամուսին չունի, բայց «ամուսնացած է իր աշխատանքի հետ»:

Հայտնում են, որ նա կարող էր բարձր պաշտոն զբաղեցնել Commonwealth Bank-ում, բայց դրա փոխարեն ընտրել էր խորհրդարանը: 2003-ին ընտրվել էր Նոր Ուելս նահանգի խորհրդարանի սենատոր՝ Վիլոգբի օկրուգից: Ընտրագանգվածի զգալի մասը տեղի հայերն էին:

Բերեջիկյանը ներգաղթականների ընտանիքից է, մինչեւ վերջերս զբաղեցնում էր գլխավոր գանձապահի պաշտոնը: Հայտնի է, որ մինչեւ հինգ տարեկան Գլեդիսը առհասարակ անգլերեն չէր խոսում, միայն հայերեն:

Նրա ընկերներից մեկի՝ Էներջու Փարքերի խոսքով, նա կիրք ունի առաջադեմ ազատական քաղաքականության հանդեպ, ինչը Փարքերը վերագրում է Գլեդիսի հայկական արմատներին: «Ես հիշում եմ, ինչպես էին մարդիկ նրան ասում «դու չես կարողանա օգտագործել քո ազգանունը, քո ընտրական պատճառների վրա պետք է պարզապես Գլեդիս գրված լինի»: Նրա ծագումը վաղ մանկությունից նրա մեջ առաջացրել է արդարության զգացում»:

# Միջազգային

## Ֆրանկ Էնգել. Բարուն հակամարտություններ է սաղարում ժողովրդական հեղափոխությունից խուսափելու համար



Եվրոպան վերջապես պետք է հասկանա ադրբեջանական վարչակարգի իսկական էությունը: Այս մասին ասել է Եվրախորհրդարանի պատգամավոր Ֆրանկ Էնգելը:

Նրա խոսքով, Ադրբեջանը կլեպտոկրատիկ բռնապետություն է, որը օգտվում է Արցախի ու Հայաստանի հետ համակարտություններով, որպեսզի ամրապնդի ու հավերժացնի Ալիևների իշխանությունը երկրում: «Քանի դեռ շարունակվում են հակամարտությունները, նրանց իշխանությունը Ադրբեջանում կշարունակվի, հակառակ դեպքում նրանց կառավարումը կավարտվի: Բաքվին պետք են հակամարտությունները ժողովրդական հեղափոխությունից խուսափելու համար: Մենք լսում ենք ադրբեջանցի իրավապաշտպաններին ու մտավորականներին, բայց մեզ դեռ չի բավականացնում այն համոզմունքը, որ Ադրբեջանը չի կարող այս վիճակում լինել Եվրոպայի գործընկերը», - շեշտել է Ֆրանկ Էնգելը:

## Եվրապատգամավոր. Բարուն պետք է ընդունի Ստեփանակերտի հետ ուղիղ բանակցությունների անհրաժեշտությունը

Ադրբեջանը պետք է ընդունի Լեռնային Ղարաբաղի հետ ուղիղ բանակցություններ անցկացնելու անհրաժեշտությունը: Այս մասին ասել է Եվրախորհրդարանի պատգամավոր Ֆրանկ Էնգելը:

Եվրապատգամավորը անօգուտ է համարում վերականգնել այն, ինչը երբեք խաղաղ գործընթաց չի եղել: Իհարկե, շարունակում է Ֆրանկ Էնգելը, Ղարաբաղի խնդրի շուրջ բանակցային գործընթացը խաղաղ գործընթաց չի դառնա, քանի դեռ Ադրբեջանը չընդունի Արցախի հետ ուղիղ բանակցությունների անհրաժեշտությունը:

## Հայկական արմատներ չունեն, բայց ինձ համար տան պես է. Չվեյցարացի գործարարն ամեն տարի ծննդյան օրը Հայաստանում է նշում

Չվեյցարացի գործարար Ալֆրեդ Մասթեն ամեն տարի Հայաստան է գալիս՝ ծննդյան օրն այստեղ նշելու: Գործարարը նշում է, որ Հայաստան մտնելուն պես ազատություն է զգում:



«2010թ.-ից ամեն տարի ամռանը Հայաստան եմ գալիս, օգոստոսին էլ ծնունդս է, միանգամից այստեղ եմ նշում: Ինձ համար Հայաստանը տան պես է, չնայած հայկական արմատներ չունեն: Առաջին անգամ Հայաստան եմ եկել ընկերոջս հետ, հենց այդ ժամանակ էլ սիրեցի այս երկիրը, մարդկանց ջերմ հյուրընկալությունը, բնությունը, սարերը, շատ-շատ եմ սիրում հայկական ուտելիքները, անկեղծ եմ ասում՝ ոչ մի տեղ այսքան համով մրգեր եւ բանջարեղեն չեմ փորձել», - ասաց նա:



Ալֆրեդ Մասթեն հասցրել է նաև «վայելել» երեւանյան անշուք բնակարանը՝ առանց էլեկտրականության եւ ջրի: Սպասվում էր, որ դրանից հետո 56-ամյա գործարարն այլևս Հայաստան չի գա հանգստանալու, սակայն հակառակը տեղի ունեցավ. «Իմ ընկերներից մեկն ինձ համար տուն էր վարձել Բանգլադեշում, քանի որ ուզում էի ապրել հայերի պես: Այդ օրերն ինձ համար իսկապես մեծ փորձ էին, չնայած էլեկտրականություն եւ ջուր չունեի, ինձ համար միեւնույնն է՝ հետաքրքիր է: Հայաստանում ես սովորել եմ հանգստանալ: Ի դեպ, ես Հայաստանում այդ ժամանակ 10 օր ապրել եմ մեն- մենակ, ինձ համար դա իսկական արկած էր»:

Դրանից հետո Ալֆրեդը նաև ավագ որդուն է իր հետ Հայաստան բերել, զարնանը նախատեսում է նաև կնոջ հետ այցելել: Չվեյցարիացի մասնագետը չի հասկանում, թե ինչու է իրեն այդքան հարմարավետ զգում Հայաստանում, ասում է՝ նույնիսկ Արցախում ավելի լավ է, դրախտի մեջ է իրեն զգում. «Ես հասցրել եմ լինել Հայաստանի եւ Արցախի բոլոր քաղաքներում՝ Գորիս, Վանաձոր, Ծուշի, Ստեփանակերտ, տարբեր վանքերում եւ եկեղեցիներում եմ եղել»:



## ԱՄՆ պետքարտուղարի թեկնածու Ռեքս Թիլերսոնը պատասխանել է ցեղասպանության մասին հարցերին



Հունվարի 23-ին ԱՄՆ սենատի արտաքին գործերի հանձնաժողովը պաշտպանել է ExxonMobil նավթային ընկերության նախկին ղեկավար Ռեքս Թիլերսոնի թեկնածությունը ԱՄՆ պետքարտուղարի պաշտոնում: Քվեարկության ընթացքում հանձնաժողովի սենատորների կարծիքները բաժանվել են ըստ կուսակցական պատկանելիության: 11 հանրապետական կողմ է քվեարկել Թիլերսոնին, 10 դեմոկրատ՝ դեմ:

Նյու Ջերսիի սենատոր Ռոբերտ Մենենդեզի հարցին ի պատասխան՝ Թիլերսոնն ասել է. «1915-ի ողբերգական չարագործությունները Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների ցավոտ խնդիրն են մնում, եւ երկու երկրների միջեւ կայուն հարաբերություններ կարգավորելը ԱՄՆ շահերից է բխում: Հաղթանակի դեպքում ես լիարժեք կուսումնասիրեմ պատմական իրադարձությունները եւ կսկսեմ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ երկխոսությունը՝ հանուն տարածաշրջանային կայունության»:

Ուշադրություն դարձնելով Թուրքիայում հիմնարար ազատությունների ոտնահարումներին՝ պետքարտուղարի թեկնածուն հստակ հասկացնել է տվել, որ նա շատ է մտահոգված Թուրքիայի կառավարության վերջերս կատարած քայլերից: «Կրոնական ազատությունը հիմնական ամերիկյան սկզբունքն է, ինչպես նաեւ աշխարհի ամեն բնագավառի ու միջազգային կայունության: Հաղթանակի դեպքում ես կաշխատեմ Թուրքիայի հետ կրոնական փոքրամասնությունների պաշտպանության եւ նրանց մշակութային ժառանգության հարգանքի համար»:

## Հասարակական

### Երիտթուրքերը հայ երեխաներին օգտագործում էին որպես զինվորներ



Թուրք հայտնի լրագրող եւ պատմաբան Աշրե Հյույի՝ տարիներ առաջ գրված հրապարակումը շարունակում է արդիական լինել Թուրքիայի ներկայիս քաղաքականության շրջանակներում:

Ստորեւ ներկայացնում ենք հոդվածն ամբողջությամբ.

#### Քար նետած քուրդ երեխաները

Այսօր Դիարբեքիրում, Ադանայում, Մերսինում, Հայթայում, Մարդինում, Սիիրում (Սղեղ), Շըրնաքում, Վանում և Իզմիրում՝ 13-17 տարեկան շուրջ 800 քուրդ մանուկներ, հակառակ ՄԱԿ-ի՝

Երեխաների իրավունքների պայմանագրի դրույթների, որի տակ ստորագրել է նաև Թուրքիայի Հանրապետությունը, որպես «չափահաս» դատվում են՝ «Ահաբեկչության դեմ պայքարի» օրենքի «կազմակերպության անդամ չլինելով՝ հանդերձ, հանուն կազմակերպության հանցանք գործածները պատժվում են որպես կազմակերպության անդամ» հոդվածով:

Մինչ օրս մոտ 130 երեխայի դատապարտել են մինչև 5 տարվա տաժանակիր ազատազրկման: Որոշ երեխաներ ծանր պատիժներ են կրում, քանի որ ունեցել են իրենց դեմքերը ծածկող բերետներ, ոմանք՝ ձեռքերին քարի նշաններ լինելու պատճառով, ուրիշները՝ շապիկների թաց լինելու համար, մյուսները՝ որովհետև սրտերն արագ էին խփում: Նրանցից ոմանք պահվում են չափահասների բանտում:

#### Լեռ բարձրանա՛լ

Այդ երեխաները նախ՝ մեծ զարմանք, ապա՝ հոգեբանական խնդիրներ են ունենում: Այնուհետև կորցնում են մեծերի, պետության, օրենքների հանդեպ վստահությունը, իսկ հետո էլ՝ հույսը ապագայի նկատմամբ: Քանի դեռ այսօրվա տեսքով շարունակվում է «Ահաբեկչության դեմ պայքարի օրենքի» կիրառումը, վաղը ոչ ոք չի կարող երաշխավորել, որ դրանից չեն տուժի նաև մեր երեխաները և եղբայրները: Եթե իրոք մտածում ենք, թե ինչպես լեռներ քաշվածներին ստիպենք գեղնել և ընդգրկենք ժողովրդավարական կյանք մեջ, ապա պետք է հասկանանք, որ միայն կարգախոսը և այն վերաբերմունքը, թե ցանկանում ենք, որ քար նետած երեխաները լեռները քաշվեն, շմեղուցից հակասություն է: Այդ կապակցությամբ այս շաբաթվա հոդվածս նվիրեցի իթթիհատականների կողմից «ազգային» նպատակներով կազմակերպված և դեպի ռազմաճակատներ արտրված թուրք մանուկներին և այն հայ երեխաներին, որոնց կյանքը խավարեցրել են դարձյալ իթթիհատականները՝ դարձյալ «ազգային» նպատակներով:

#### Սկառուտությունից դեպի պարամիլիտար կազմակերպություն

Օսմանյան կայսրությունում սկառուտական կազմակերպության առաջին հիմքերը դրվեցին 1910 թ. վերջերին տպագրվող «Աշխատանք և առաջադիմություն» ամսագրում հրապարակված Լոզանում գտնվող Ռազրի Նուրեթթինի՝ սկառուտական մասին հոդվածներով: Չախակողմյան հայացքների տեր մի անգլիական ընտանիքից սերող, Հնադկաստանում ծնված, Սուլթանական դպրոցում (այսօրվա Գալաթասարայի լիցեյում) կրթված, ֆուտբոլիստ և մարզիկ Ահմեդ Ռոբենտոնի կողմից Ստամբուլում հիմնված առաջին սկառուտական օջախի գործողությունները բաղկացած էին շեփոքներով քաղաքի մեջ արված շրջագայություններից ու արշավներից: Այդ առաջին օջախին հետևեցին Գարյուշաֆաքայի լիցեյը, Քաղբքոյի Նումունե դպրոցը, Ստամբուլի լիցեյը, Վեֆայի և Սկյուտարի լիցեյները, իսկ Ստամբուլից դուրս առաջին սկառուտական կազմակերպությունները հիմնած նահանգներն էին Բուրսան, Բեյրութը, Իզմիրը (Չմյուռնիա), Սվաաը (Մերաստիա), Կայսերի (Կեսարիա) և Քյութահիան:

1912 թ. հոկտեմբերի 8-ին, երբ սկսվեց Բալկանյան պատերազմը, «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը Էդիրնեում գտնվող իթթիհատական դպրոցի տնօրեն Նաֆի Աթուֆին (Քանսու) և վերջինիս ընկերոջը՝ Մանասթըրում գտնվող Ուսուցչաց դպրոցի տնօրեն Էթեմ Նեժադին ուղարկել էր Եվրոպա՝ «մի անթերի երիտասարդական կազմակերպություն» հիմնելու համար ուսումնասիրություններ կատարելու նպատակով: Աթըֆ բեյը վերադարձին Էնվեր փաշային հաղորդել էր, որ նման գործի համար սկառուտությունը իդեալական գործունեություն է, և որ կարելի է եվրոպականի օրինակով ստեղծել նման մի կազմակերպություն: Այս գործի համար երկիր հրավիրվեց Բեզիայի հետախուզական կազմակերպության հիմնադիրը՝ անգլիացի Հարոլդ Փարֆիթը: Վերջինս 1914 թ. ապրիլի 9-ին Հետախուզական ընկերության բոյսկառուտական օջախը (Kesşaflik Cemiyeti İzci Ocağı) հիմնելուց հետո սկսեց նաև Բարձրագույն ուսուցչաց դպրոցում (Darü'l-Muallimin-i Aliye) սկառուտական դասերի, երթերի, ճամբարների, սկառուտական առաջնորդների համար

դասընթացների միջոցով ինստիտուցիոնալ դարձնել սկաուտությունը Օսմանյան պետությունում: 1914 թ. մայիսի 22-ին սույն օջախի կողմից մշակված և 35 հոդվածից բաղկացած կանոնադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ «Սկաուտական գումարտակներ կազմավորելով՝ դրանց շնորհիվ ապահովվելու էր, որպեսզի երիտասարդները աչքաբաց, ճարպիկ, հմուտ, անվեհեր, վտանգների առաջ չերկնջող, անձնվեր ու հայրենասեր դաստիարակվեն, միևնույն ժամանակ՝ ունենան այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են համախմբվածությունը, կարգապահությունը, պատասխանատվության զգացումը և պատվախնդրությունը»: Օջախի առաջին գլխավոր հրամանատարը (բաշբուղը) դարձավ Էնվեր փաշան, իսկ հրամանատարի տեղակալը (բալգայը)՝ Հարող Փարֆիդը:

## **Քաշրուղ Էնվեր փաշան**

Սակայն, քանի որ ենթադրվում էր, թե սկաուտական կազմակերպությունը չէր կարող հասանելի լինել ողջ երիտասարդությանը, 1914 թ. հունիսի 15-ին հիմնվեցին Օսմանյան ուժային միությունները: Ի տարբերություն մյուս երիտասարդական կազմակերպությունների՝ ժամանակավոր օրենքով հիմնված Օսմանյան ուժային միությունները, որոնց՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ իբրև թե կապ չունենալու սպավորություն ստեղծել փորձեցին Էնվեր փաշայի այն հրահանգով, թե «երիտասարդներին արգելվում է քաղաքականությամբ զբաղվելը», իրականում ենթակա էին Ռազմական նախարարությանը: Օսմանյան ուժային միությունների գլխավոր հրամանատար նշանակվեց դարձյալ Ռազմական նախարար Էնվեր փաշան, իսկ մյուս ղեկավարներն էին դոկտոր Նազըմը, Էլուր Սաբրին (Թոփրաք), Բուրդուրի պատգամավոր Աթֆըր, Տրապիզոնի պատգամավոր Ռեսուհին և Չիան:

Սկզբում թեմիսի սպիտակ գլխարկներ կրող այդ խմբերը որոշ շրջանակների կողմից ընկալվեցին որպես մուսուլման երեխաներ, որոնց քրիստոնյա էին դարձրել անգլիացիները: Այն հանգամանքը, որ սկաուտները կիսատաբատ էին կրում, սկզբում բողոքի այլք բարձրացրեց պահպանողական շրջանակների մեջ, սակայն այն բանից հետո, երբ համալսարանի ռեկտորը, ի նշան սկաուտներին աջակցության, սկաուտական հագուստ հագնելով՝ շրջեց կիսատաբատով, բացասական արձագանքները նվազեցին:

Տվյալ միություններում ազգայնական զգացումներն ամրապնդելու համար երգում էին այն քայլերգերը, որոնց խոսքերը պատկանում էին պանթոնրիստական հոսանքի գաղափարախոսներից Չիա Գյոքալփին, ինչպես նաև՝ «Լեռան գլուխը մշուշապատ է» քայլերգը, որը հորինվել էր շվեդ երգահան Ֆելիքս Քյորլինգի պատկանող «Երեք մանկամարդ աղջիկ» երգի նմանությամբ:

## **Երիտասարդ կազմակերպությունները՝ գերմանական մոդելով**

Պատերազմի ընթացքում ծնվեց մի նոր կազմակերպություն հիմնելու գաղափարը՝ «օսմանյան երիտասարդությանը պատերազմի ժամանակ զենքի տակ պահելու և որևէ ոստիկանական կազմակերպության շուրջը համախմբելու» նպատակով: Այդ պարամիլիտար կազմակերպության գաղափարի ծնողը գերմանացի Գոյց փաշան էր, ով այստեղ էր եկել օսմանյան բանակը արուսական մեթոդով կազմակերպելու համար: Գոյցի խորհրդով Գերմանիայում գործող «Կայսերլիխ Դյոլչեն Յուգենդբեներ» տիպի երիտասարդական կազմակերպությունների ստեղծման և ղեկավարման առումներով մեծ փորձ ունեցող գնդապետ ֆոն Հոֆֆը բերվեց Ստամբուլ: Շատ շտապ փաշայի կոչում ստացած ֆոն Հոֆֆի և վերջինիս տեղակալ Սելիմ Սըրրըի (Թարջան) առաջնորդությամբ 1916 թ. ապրիլին հիմնվեցին օսմանյան երիտասարդական կազմակերպությունները:

## **Հե-յ, տասնհինգանոց, տասնհինգանոց-ց**

Ռազմական նախարարությանը ենթակա կազմակերպությունը, Գյուրբյուզի հաստատության հետ մեկտեղ, որի անդամները 12-17 տարեկան էին, կազմակերպվել էին Դինչ կազմակերպության ձևով, որի անդամները 17 և 17-ից բարձր տարիքի էին: Էդիթնեից մինչև Երուսաղեմ, Բիթլիսից մինչև Բասրա ձգվող երիտասարդական կազմակերպությունների թիվը 1917-ին հասել էր 706-ի: Դինչ

կազմակերպության անդամները զինվորագրվեցին՝ 1917-ին հրապարակված և 1315 (1999) թ. ծնվածներին բանակ գորակոչելու մասին օրենքի համաձայն: Դժբախտաբար տեղեկություններ չունենք այդ երիտասարդների հետագա ճակատագրի մասին, երիտասարդներ, որոնց Տասնհինգանոց էին ասում՝ «Հե-յ, տասնհինգանոց, տասնհինգանոց-ց, քարոտ են Թոքասի ճանապարհները» թյուրքյուլի խոսքերով:

## **Քազըմ Կարաբեքիրի Գյուրբյուզեր բանակը (Առույզ պատանիների բանակը)**

Հայտնի է, որ ազգային պայքարի ժամանակաշրջանում Müdafaa-i Hukuk ընկերություններին (1919 թ. Իզմիրի գրավումից հետո Թուրքիայի տարբեր քաղաքներում հիմնված և քենայական շարժման առաջին կորիզը կազմած կազմակերպությունների անվանումը) աջակցություն են ցուցաբերել որոշ այնպիսի երիտասարդական միություններ, ինչպիսիք են Երիտասարդների ակումբը Քաթամոնումում, Երիտասարդների ակումբը Չերքեշում և այլն: Սակայն ամենաուշագրավ կազմակերպությունը Քազըմ Կարաբեքիրի Գյուրբյուզեր Ordusu-ն էր՝ Առույզ պատանիների բանակը: Ազգային պայքարի ժամանակ Արևելյան ռազմաճակատի հրամանատար Քազըմ Կարաբեքիրը Էրզրումի (Կարին) շրջակայքում փողոցներից կամ էլ նրանց խնամել անկարող ազգականների մոտից հավաքել էր տվել որք մնացած 2000 աղջիկ, 4000-ի չափ էլ տղա երեխաներին և տղաների կեսի միջոցով ստեղծել Գյուրբյուզեր Ordusu-ն (Առույզ պատանիների բանակը): Այս մանուկները ստացել են ռազմական կրթություն, անգամ դահուկորդության դասընթացներ անցել, նրանց մի մասն արհեստներ է սովորել Արդյունաբերական դպրոցում, որը հագուստ և կոշիկ էր մատակարարում բանակին: Անկախ նրանից, թե որտեղ էին նրանց տեղավորում, բոլորին էլ դաստիարակում էին թրքուլայան գիտակցությամբ: Ասում են, որ երբ 1920 թ. սեպտեմբերի 26-ին Կարաբեքիրը ռուսներից հետ էր վերցնում Սարիղամիշը, մոբիլիզացվել էր նաև Գյուրբյուզեր Ordusu-ն: Կարաբեքիրի պահպանության տակ առնված ծնողազուրկ տղա երեխաների մեջ կային նաև հայ որբեր: Այս մանուկների մեջ ընդունակները Կարաբեքիրի կողմից ուղարկվել էին Բուրսայի նորաբաց Էշրբյար ռազմական լիցեյը՝ այնպես ներկայացնելով, թե իբր ընթացքում թուրք ընտանիքների որբեր էին, իսկ մնացածները մասնագիտություն էին ստացել և կյանք մտել:

## **Երիտասարդական կազմակերպությունը՝ զինված ժողովրդի համար**

1924 թ. հունվարի 3-ին Իսմեթ Ինոյուի կողմից մեջիլիս ներկայացված մի օրենքի առաջարկով նախատեսվում էր 12 տարեկանից զինվորական տարիքի մեջ մտած բոլոր երիտասարդներին ներառող մի կազմակերպության հիմնումը և դրա օգտագործումը՝ երկիրը պաշտպանելու նպատակով, բայց սույն առաջարկը հետաքրքրություն չառաջացրեց մեջիլիսում: Այս անգամ գործն իր ձեռքը վերցրեց գլխավոր շտաբի պետ մարշալ Ֆեզի (Չաքմաք) փաշան, որի համոզմունքով՝ պետք էր իսկույն գործի անցնել ժողովրդին զինված վիճակի մեջ դնող նման մի կազմակերպության ստեղծման համար: Սակայն այդ նախաձեռնությունը ևս անարդյունք մնաց: Իսնդիրը դարձյալ մեջիլիսի օրակարգ բերվեց 1927, 1928 և 1932 թ., բայց նորից օրենքի տեսք չստացավ: 1937 թ. գերմանական երիտասարդական կազմակերպության նախագահ Բալդուր Վոլ Շիդախը ժամանեց, բայց այդ տարեթվից հետո հարցը փակվեց:

## **Ոչ հայ, ոչ էլ թուրք, միայն որբ...**

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունում անտեր, ծնողազուրկ կամ որբ մնացած երեխաներին պահպանության տակ առնելու և խնամելու գործը գտնվում էր Dâr-ül-Eytâm (Որբերի միություն) կազմակերպության պատասխանատվության տակ: Թե՛ տարբեր ճակատներում զոհված զինվորների երեխաների և թե՛ 1915 թ. հայոց կոտորածից մազապուրծ եղած բախտավոր (!) երեխաների թիվը այնքան շատ էր, որ որոշ ժամանակ անց Ստամբուլի բոլոր որբանոցները, գիշերօթիկ դպրոցներն ու դիսպանսերները լիուլի լցված էին: (Մուրադ Բարդաքչի կողմից հրապարակված Թալեթաթ փաշայի

օրագրում հայ որբերի թիվը ներկայացվում է 10314 հոգի, իսկ կառավարության արխիվը լի է տասնյակ փաստաթղթերով, համաձայն որոնց՝ աղջիկ ու տղա երեխաներին խլել են իրենց ընտանիքներից, ցրել այն մուսուլմանական գյուղերում, որտեղ հայեր չկային, ամուսնացրել մուսուլմանների հետ կամ տարել որբանոց և դաստիարակել մահմեդական ավանդույթներով, այսինքն՝ բռնի ասիմիլացվել: Ըստ տվյալ փաստաթղթերում տեղ գտած արտահայտությունների՝ կառավարությունը նախապես նախատեսած է եղել այդ հարցի լուծումը):

## **Վկաների զավակների հարկը**

Քանի որ առկա որբանոցները չեն բավարարել, պետությունը բռնագրավել և որբանոցների է վերածել արտասահմանցիներին պատկանող այնպիսի կառույցներ, ինչպիսիք են Էլմաղաղում գտնվող Սիռնի Աստածամոր տաճարը, Յեդիքուլեի իտալական դպրոցը, Գալաթայում գտնվող հունական վանքը, Քաղաքայի Մենտ Ժոզեֆ դպրոցը, սակայն իթթիհատականները չեն զբաղվել տվյալ հաստատություններով, և որբանոցները կարճ ժամանակահատվածում վերածվել են անօրինականությունների և չբավորության բների: Մեջլիսում այդ կապակցությամբ արված քննադատություններին պատասխանող Լուսավորության նախարարի խոսքերով՝ իբրև թե 65 կենտրոնում 16 հազար երեխա էր խնամվում, սակայն խիստ կասկածելի էր նախարարի ներկայացրած այդ թիվը:

Որբանոցներին եկամուտ ապահովելու համար 1915-ին ծխախոտի վրա դրվեց 'Evlad-ı Şüheda Vergisi'-ն՝ Վկաների զավակների հարկը, բացի այդ՝ որոշվեց, որ զանազան հաստատություններ ապահովեն որբանոցներին: Dâr'ül-Eytâm (Որբերի ընկերություն) կազմակերպությանն աջակից լինելու համար գործի անցան այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Hilal-Ahmer Cemiyeti (Կարմիր մահիկի ընկերությունը), Himaye-i Etfal Cemiyeti-ն (Երեխաներին պաշտանող ընկերությունը) և Kadınları Çalıştırma Cemiyeti İslamiyesi-ն (Կանանց աշխատեցնող իսլամական ընկերությունը):

## **Կանանց աշխատեցնող ընկերությունը**

Պատերազմի ժամանակ իրենց ամուսիններին կորցրած մահմեդական կանանց աշխատանքային կյանքի վարժեցնելու նպատակով Ռազմական նախարար Էնվեր փաշայի ղեկավարությամբ հիմնված «Կանանց աշխատեցնող բարեգործական ընկերության» առաջին ղեկավար խորհուրդը Ռազմական նախարարության բարձրաստիճան սպաներից բաղկացած յոթ հոգանոց տղամարդկանց մի խումբ էր: Ղեկավարություն իբրև թե հանձնվելու էր կանանց, սակայն մինչև վերջ էլ մնաց տղամարդկանց ձեռքում: Սույն ընկերության ամենաուշագրավ գործառնությունն էր իսկ կանանց ամուսնացնելն էր, իսկ ամենաօգտակար գործը՝ հայերի տեղահանության պատճառով անտեր մնացած 750 հայ մանուկների խնամքի ստանձնումը: Սակայն երբ լուրեր ստացվեցին, թե գալու են ևս 1.800 երեխաներ, ընկերության տնօրեն Բամայիլ Հաքքը բեյի գլուխը եկավ «հանճարեղ» մի միտք, և նա Ներքին գործերի նախարարությանն առաջարկեց այդ երեխաներին որպես բանվոր, ծառա կամ աղախին ուղարկել երկրի տարբեր շրջանների վաճառատներ, արդյունաբերական կենտրոններ, ագարակներ ու տներ: Այս առաջարկի նպատակն իբրև թե այն էր, որ այդ երեխաները, իրենց հացը սեփական քրտինքով վաստակելով, բեռ չլինեին պետության կամ այն ընտանիքների համար, որոնց հանձնվելու էին: Ծառ փոքր հասակում մեծ ողբերգությունների հերոսներ դարձած այդ խեղճ մանուկների փոքր կշտացնելու համար նաև որպես բանվոր կամ ծառա աշխատեցնելու առաջարկը, ինչպես որ սպասելի էր, մեծ հավանություն ստացավ Ռազմական նախարարության կողմից և անմիջապես սկսեց կիրառվել: Այն աստիճան, որ անգամ Էնվեր փաշայի՝ Քյույուքչեքմեջեում գտնվող ագարակ էին ուղարկվել 50-ի չափ որբեր: Հայկական համայնքի այն հատվածը, որը տեղահանությունից փրկվել էր՝ արտասահմանցի միսիոներների աչքի առաջ լինելու շնորհիվ, խիստ քննադատությունների էր ենթարկվում այդ գործողությունները և ասում, որ

իթթիհատականները շարունակում են թուրքացման քաղաքականությունը «դևշիրմեի» (մանկահավաքի) համակարգով:

## **Մուղրոսի զինադադարից հետո**

1918 թ. նոյեմբերի 2-3-ին Էնվեր, Թալեթ և Ջեմալ փաշաների՝ Գերմանիա ճողոպրելուց հետո Ստամբուլի ղեկավարությունն ստանձնած Դաշնակից տերությունների առաջին գործերից մեկը եղավ որբերի խնդիրը: Հատկապես ամերիկացի պաշտոնյաները սկսեցին ուսումնասիրել «Կանանց աշխատեցնող բարեգործական ընկերության» կողմից որպես Էժան աշխատուժ կամ ծառա երկրի չորս կողմն ուղարկված երեխաների ցանկը և գտնել «մուսուլմանի» պիտակի տակ թուրք մահմեդականների ընտանիքներում ցրված երեխաներին: Այն ընթացքում, երբ կայսրության չորս ծայրերից դեպի Ստամբուլ անտեր երեխաների հոսք կար, երկու կողմերն էլ պնդում էին, թե այդ երեխաներն իրենց են պատկանում: Մանուկների խոսած լեզուն կամ անունները հասկանալի չէին, քանի որ փոքր տարիքում իրենց ընտանիքներից հեռանալ հարկադրված երեխաները մոռացած էին լինում իրենց մայրենի լեզուն, իսկ նրանց անուններն էլ արդեն իսկ այլոց կողմից էին դրված լինում՝ նրանց ինքնությունը թաքցնելու նպատակով: Որոշ երեխաներ էլ, թեև տեղյակ էին լինում իրենց արմատների մասին, սակայն անցյալի հուշը փորձն ի նկատի ունենալով, նախընտրում էին լուռ մնալ: Որոշ չափով հնարավոր էր տարիքով մի փոքր մեծ տղա երեխաների ինքնության ստուգումը՝ վերջիններիս թյալատված լինել-չլինելը ստուգելով, բայց այդ մեթոդն անօգուտ էր աղջիկ երեխաների կամ տարիքով շատ փոքր մանուկների դեպքում:

## **Bitarâfhane-ի (Չեզոք տուն) ստեղծումը**

1919 թ. ապրիլ ամսին Դաշնակից պետությունները տարբեր կողմերում ցրված անտեր երեխաներին, իրենց գտնված վայրերից վերցնելով, որոշեցին նրանց հավաքել չեզոք մի տեղ, որը ստեղծվելու էր Ստամբուլում անգլիացի գավթիչ ուժերի հսկողությամբ: Էդիրնեում, Բուրսայում, Բոնիայում և Քըրքյարեյիում թողնվեցին մեկական որբանոցներ, իսկ մնացածում ապաստանած երեխաներին սկսեցին տեղափոխել Ստամբուլ: Այս կենտրոնում հավաքված թուրք երեխաները հանձնվելու էին Օսմանյան անվտանգության տնօրինությանը, իսկ հայ մանուկները՝ Պոլսոց հայոց պատրիարքարանին: Այդ նպատակով մի տուն վարձակալվեց Ստամբուլի Նիշանթաշ թաղամասում, որը ղեկավարելու նպատակով հիմնվեց երեք հոգանոց մի հանձնաժողով՝ բաղկացած ամերիկացի, թուրք ու հայ անդամներից: Ժողովրդի մեջ որպես Bitarâfhane (Չեզոք տուն) հայտնի այդ տանը նաև աշխատում էին երկու խոհարարներ, որոնցից մեկը հայ էր, մյուսը՝ մահմեդական, ինչպես նաև՝ մի հայ ծառա ու մուսուլման դռնապան: Երբ հասավ մայիս ամիսը, Դաշնակից ուժերի ոստիկանական կազմակերպությունն արդեն իսկ հավաքել էր վերոհիշյալ երեխաներին և նույնիսկ սկսել բերել նրանց Ստամբուլ: Սակայն անմիջապես ի հայտ եկան նաև խնդիրներ: Կեսարիայից եկած 360 հոգանոց առաջին խումբը, առանց մեծ վեճերի տեղիք տալու, ենթարկվեց էթնիկական-կրոնական դասակարգման և հանձնվեց կողմերին, սակայն դարձյալ Կեսարիայից բերված 220 մանուկներից կազմված երկրորդ խումբը պատկանելիության առումով խնդիրներ հարուցեց: 1919 թ. մայիսի 26-ին, ըստ «Իրդամ» օրաթերթի, Հայոց պատրիարքարանը բոլոր երեխաներին տարել էր ոչ թե Bitarâfhane, այլ Բեյոզլուում գտնվող հայկական եկեղեցին և բռնի կերպով քրիստոնյա դարձրել նրանց: «Իլերի» օրաթերթը 1919 թ. հունիսի 5-ի համարում պնդում էր, թե պատրիարքարանը երեխաներին քրիստոնյա դարձնելու համար անգամ խմորեղեն էր հյուրասիրել նրանց, իսկ այն երեխաներին, ովքեր դրանով չէին զայթակրվել, հրապարակավ ծեծել էին: Ըստ թերթի՝ երեխաներից 42-ը, չնայած ուժեղ ծեծին, պնդել էին, որ մուսուլման են և վերադարձվել Dâr'ül-Eytâm (Որբերի ընկերություն):

## **Կորված կապեր**

Այս ծանր մեղադրանքներից հետո Հայոց պատրիարքարանը ստիպված եղավ պարզաբանումներ տալ: Պատրիարքարանը չէր ժխտում, որ այդ 220 երեխաները բերվել էին Բեյոզլուում գտնվող եկեղեցին, սակայն հայտնում էր, որ նրանցից 108-ը եղել են հայ, իսկ

85-ը՝ մուսուլման երեխաներ, հնարավոր չի եղել ճշտել 27-ի ինքնությունը, վերջիններս հանձնվել են Bitarâfhan (Չեզոք տուն), բացի այդ՝ խոսք անգամ չի եղել բռնի քրիստոնեացման մասին: Պատրիարքարանի ներկայացուցչի համաձայն՝ այդ պնդումները տարածել էր Անվտանգության տնօրինությունը: Մեկ շաբաթ անց «Իքդամ» օրաթերթին այս անգամ փոխպատրիարք Երվանդ Էֆենդին հայտնում էր, որ երեխաները տեղավորվել են՝ թուրք, հայ և ամերիկացի պաշտոնյաների տված տեղեկությունների համապատասխան, սակայն քանի որ հայ մանուկները շատ փոքր տարիքից որպես հոգեզավակ կամ բանվոր էին հանձնվել, մոռացել էին հայերենը, հետևաբար անիրավացի կյիներ թուրքերեն խոսող երեխային թուրք համարել, նա նաև ասում էր. «Ոչ մի ոստիկան մինչ այժմ մեզ որևէ երեխայի չի բերել-հանձնել. այդ բոլոր մանուկները մեր կողմից գտնվածներն են» և ընդգծում, որ եթե պատրիարքարանի ջանքերը չլինեին, անհնար կլիներ հայ որբերին գտնելը: Երվանդ Էֆենդին հետևյալ կերպ էր ավարտում իր խոսքը հարցազրույցում. «Ես կարծում եմ, որ այսուհետ մի քիչ դժվար է լինելու հայերի և թուրքերի համատեղ կյանքը, որովհետև այդ երկու ժողովուրդները ցավ են պատճառել իրար, և հեշտ չի լինելու այդ ցավը հաղթահարելը»:

Իսկ տնօրինությունը հայտնել էր, որ Հայոց պատրիարքարանի կողմից ներկայացված Չաքքըյան Էֆենդին վերցրել էր «Կանանց աշխատեցնող բարեգործական ընկերության»՝ որը երեխաների գրանցումները, ու չնայած բոլոր նախաձեռնություններին և երեք ամիս անցած լինելուն՝ ժամանակին չէր վերադարձրել: Պնդվում էր, թե Չաքքըյան Էֆենդին խեղաթյուրել էր գրանցումները և փորձել թուրք երեխաներին որպես հայ մանուկներ ներկայացնել: Կային նաև այն տասնյակ թուրք ընտանիքների բողոքները, թե Դաշնակից ուժերը, հայ կարծելով, իրենց ձեռքից խլել էին սեփական երեխաներին:

**Քուլեյի ռազմական դպրոցը դառնում է որբատուն**

Դաշնակից ուժերը, Քուլեյի ռազմական դպրոցը բռնագրավելով, այն դարձրեցին հայկական որբանոց: Երկար-բարակ բանակցություններից հետո Բեյլերբեյի նախկին ժանդարմերիայի դպրոցը և Բեյլերբեյի պալատի որոշ հատվածներ վերածվել են հայկական որբատների, և վերոհիշյալ դպրոցը դատարկվել է: Անգլիացիների և ֆրանսիացիների աջակցությամբ 3 հազար որբեր տարվել են Կիպրոս: Ամերիկյան օգնության Near East Relief հաստատությունը 1921 թ. սկսեց Անատոլիայում գտնվող հայ երեխաներին ուղարկել Սիրիա: 1922 թ. վերջերին որբերի թիվը հասավ 8 հազարի:

**Քանի՞ հայ որբեր կային**

Քանի որ 1915 թ. տեղահանությանը վերաբերող արխիվային նյութերի մեծ մասը գաղտնի է պահվում, ապա հայտնի չէ, թե քանի հայ որբ է եղել, և նրանցից քանիսն են որդեգրվել: Թուրքական պատմագիտական ընկերության հրատարակած «Հայեր. աքսոր և գաղթ» վերնագրով գրքում տեղ գտած փաստաթուղթը այն զեկույցն է, որը պատրաստվել է 1921 թ. Հայոց պատրիարքարանի կողմից, և որի անգլերեն պատճենը 1921 թ. ապրիլի 26-ին ուղարկվել է ԱՄՆ-ի Արտգործնախարարություն: Չեկույցում նշվում է, թե 1921 թ. դրությամբ մուսուլմանների տներում «դեռևս չփրկված» հայ որբերի թիվը հասնում էր 63 հազարի:

**Երեխաներին մի՞ կործանեք, Էֆենդիններ՝**

Թիվն անհայտ է, բայց ակնհայտ է, որ հազարավոր երեխաներ անպատասխանատու և անխիղճ մարդկանց կողմից ճշտվել են՝ հայ են, թե թուրք, այստեղից այնտեղ ցրվել, ընտանիքից ընտանիք փոխանցվել, ծեծ կերել, վիրավորանքների ենթարկվել, սուտ խոսքով հարկադրվել: Այդ երեխաների մեծ մասը գնվել է: 1914-1918 թթ. միայն Ստամբուլում սպանվել է շուրջ 25 հազար որբ երեխա: Հանրապետական շրջանում երկրի որբատներում կային տասնյակ հազարավոր մանուկներ, որոնց էթնիկ և կրոնական պատկանելությունը դեռևս ճշտված չէր: Այդ երեխաների մեծ մասը հեռացավ այս աշխարհից՝ առանց վերադառնալու իրենց իրական ընտանիքների գիրկը: Նրանցից երկուսի իրական սրտանմիկ պատմությունները գրքի են վերածվել Ֆեթիյե Չեթինի «Մեծ մայրս» վեպում (Մեթիս հրատարակչություն 2008 թ.) և Իրֆան

Փալալի «Տարագրության գավակները. պարզվում է՝ տասն հայ է եղել» (Սու հրատարակչություն 2008 թ.) վերնագրով գրքում: Խորհուրդ եմ տալիս ընթերցել: Թարգմանությունը՝ Akunq.net-ի

**Մենք մեզ նախ հայ, հետո որպես երուսաղեմցի ենք ներկայացնում. Հայր Կոյուն**



Իսրայելական «Ճալոմ» պարբերականի նախկին խմբագիր, գրող և լրագրող Յակոբ Բարակասը այցելել է Երուսաղեմի Հայոց Պատրիարքարան և պատմության ու այսօրվա վիճակի հետ կապված ծավալուն հարցազրույց արել դիվանապետ Հայր Կոյուն վարդապետ Բաղդասարյանի հետ, որը հրատարակվել է «Ակոս» ամսաթերթի 2016 թ. հոկտեմբերի 7-ի համարում:

**Ե՞րբ և ինչպե՞ս է եղել հայերի գալը այս հողեր:**

Հայերի առաջին շփումը Սուրբ Երկրի հետ եղել է մ.թ.ա. առաջին դարում՝ Տիգրան Մեծի օրոք: Սակայն, հայերը Սուրբ Երկրում հաստատվել են 301 թվականին քրիստոնեությունը ընդունելուց հետո: Այդ ժամանակ քրիստոնեությունը Հռոմի կողմից դեռևս ընդունված պաշտոնական կրոն չէր: Հայ ուխտավորները Սուրբ Երկրում նախ սկսեցին փնտրել Տիրոջ երկրային կյանքի հետ կապ ունեցող սրբավայրերը, որոնք գտնվելուց հետո, այդ սուրբ վայրերի կարևորության գիտակցմամբ, դրանց տեղում փոքր եկեղեցիներ կառուցեցին:

**Կարո՞ղ եք տեղեկություն տալ քաղաքի հայկական մասում գտնվող սուրբկառույցների մասին:**

Սուրբ Երկրի մեջ կան սրբավայրեր, որոնք համաքրիստոնեական սրբավայրեր լինելով հանդերձ, որպես սեփականություն պատկանում են հայ, հույն և կաթոլիկ եկեղեցիներին, բայց կան նաև սրբավայրեր, որոնց սեփականատերը միայն Հայ Եկեղեցին է: Սուրբ Հարության Տաճարը պատկանում է Կաթոլիկ, Հայ ու Հույն եկեղեցիներին: Սուրբ Հարության Տաճարը կառուցվել է 4-րդ դարում՝ Բյուզանդիայի Կոստանդին Կայսեր կողմից: Կոստանդինյան կառույցի պահպանված հատվածը այժմ պատկանում է հայերին: Իսկ Հիսուսի ծննդյան վայր հանդիսացող Ծննդյան Տաճարը պատկանում է Հայ և Հույն Եկեղեցիներին: Երրորդ ամենակարևոր սրբավայրը Սուրբ Մարիամ Աստվածածնի գերեզմանի վրա կառուցված Սուրբ Աստվածամոր Տաճարն է: Այս եկեղեցին էլ պատկանում է Հայ և Հույն Եկեղեցիներին: Մյուս Հակոբյանց եկեղեցին պատկանում է միմիայն Հայ Եկեղեցուն, որտեղ թաղված են Հակոբ առաքյալի գլուխն ու Երուսաղեմի առաջին Եպիսկոպոս Հակոբ Տյառնետերո մարմինը: Բացի իմ թվարկած եկեղեցիներից, Սուրբ Երկրում հայերին պատկանող ուրիշ եկեղեցիներ ու մատուռներ ևս կան:

**Երուսաղեմի հայերը Հայաստանից դուրս սփյուռքի ամենահին հատվածներից է: Երուսաղեմի Հայ Պատրիարքը աշխարհի հայերի մոտ կրոնական առաջնորդություն կամ ազդեցություն ունի:**

Մի ժամանակ Երուսաղեմի Հայ Պատրիարքը Միջին Արևելքի, այդ թվում Եգիպտոսի, Լիբանանի, Կիպրոսի հայկական համայնքների կրոնական առաջնորդն էր: 1915-ից առաջ Եգիպտոսը ամենաշատ հայ բնակչություն ունեցող երկրներից մեկն էր: Սակայն ցեղասպանությունից հետո շատ հայեր ցրվեցին Միջին Արևելքի երկրներ: Այդ գաղթականները հույս ունեին, որ կվերադառնան իրենց բնակավայրեր: Սակայն Թուրքիայի հանրապետության հռչակումից հետո նրանք հասկացան, որ դա հնարավոր չէ և իրենք ստիպված են հաստատվել Միջին Արևելքում: Երուսաղեմի Հայոց

Պատրիարքարանը հայ գաղթականներին տրամադրեց Պատրիարքարանի իրավասության տակ գտնվող քաղաքների՝ Հալեպի և Բեյրութի իր վաքներն ու եկեղեցիները: Մեր օրերում, Երուսաղեմի Հայ Պատրիարքը Հորդանանի, Իսրայելի ու Պաղեստինի հայերի կրոնական առաջնորդն է:

## **Հայաստանում Երուսաղեմի Հայ Պատրիարքի իրավասությունը ճանաչում են:**

Այո, Հայաստանում ճանաչում են Երուսաղեմի Հայ Պատրիարքի իրավասությունը և այն կարևոր դեր և նշանակալի իրավասություններ ունի Հայ Առաքելական Եկեղեցու ընդհանուր հարցերում, սակայն Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի հոգևոր ուղղակի իրավասությունը տարածվում է միայն վերոնշյալ երկրների հայերի վրա:

## **Մեր օրերում Հին Երուսաղեմի բնակչությունը կազմում է 40 հազար, սակայն քաղաքի մեկ վեցերորդ մասը կազմող հայկական տարածքում ապրում է 500 հայ: Իսրայելի մյուս քաղաքներում հայեր ապրում են:**

Իսրայելի հայերին կարող ենք բաժանել երեք խմբի: Առաջին խումբը Երուսաղեմ է եկել մինչև 1915-ի ցեղասպանությունը: Նրանց անվանում ենք «քաղաքացիներ»: Նրանք ունեն իրենց ապրելաձևն ու բարբառը: Նրանք ապրում են Հայոց Թաղամասում՝ Հայոց վանքից դուրս:

Հետո եկան 1915-ի ցեղասպանությունը վերապրած գաղթականներ: Երբ 1917 թ. անգլիացիները Երուսաղեմը գրավեցին Օսմանյան Թուրքիայից, Հալեպի ու դրա շուրջ հաստատված մոտ ութ հազար հայ գաղթականներ եկան Երուսաղեմ և ապաստան խնդրեցին Երուսաղեմի Հայ Պատրիարքից: Պատրիարքը նրանց խնդրանքը չէր կարող մերժել: Վանքում ուխտավորներին տեղավորելու համար 1000 սենյակ կար: Դրանք երկու ուխտավորի համար նախատեսված փոքրիկ սենյակներ էին, որոնց մեջ ստիպված գաղթականների մի ամբողջ ընտանիք հաստատվեց: Նրանց երրորդ կամ գուցե չորրորդ սերունդները դեռևս շարունակում են ապրել վանքում:

Երրորդ խումբն էլ Խորհրդային Միության փլուզումից հետո Իսրայել եկած հայ ներգաղթյալներն են, որոնք՝ Իսրայելի «Վերադարձի օրենք»ի համաձայն, ընտանիքի անդամներից մեկի հրեա լինելու ուխտագրված օգուտով պայմանավորված, Իսրայելի քաղաքացի են դարձել: Իսրայելի քաղաքացիություն ստանալու համար բավական էր ներգաղթած հայի նույնիսկ տատիկի հրեա լինելը:

Բացի Հին Երուսաղեմից, հայերն ապրում են Բեյթ Հանինայում, գերմանական թաղամասում, Բեթլեհեմում, Հայֆայում ու Յաֆայում: Հայֆայում 1915-ից առաջ հայկական համայնք չի եղել: Այդ քաղաքում հայկական համայնքը ձևավորվել է ցեղասպանության վերապրողներով: Իսկ Խորհրդային Միության փլուզումից հետո եկածները հաստատվել են հիմնականում Փեթախ Թիբվա, Բատ-Յամ, Թել Ավիվ, Յաֆա քաղաքներում: Իսրայելում ընդհանուր առմամբ ութ հազարանոց հայ համայնք է ապրում:

## **Այդ հատվածների միջև խոսակցականում լեզվական տարբերություն կա՞:**

Մինչ 1915-ը Երուսաղեմում ապրած հայերը խոսում էին իրենց բարբառով: Նրանք առօրյա խոսակցության մեջ շատ են օգտագործել արաբերեն: Հարավ-արևելյան Անատոլիայից և Կիլիկիայից եկած գաղթականները խոսում էին թուրքերեն, որոշ դեպքերում նույնիսկ հայերեն դժվարանում էին խոսել: Խորհրդային Միության փլուզումից հետո եկած հայերը խոսում են արևելահայերեն, իսկ Խորհրդային Միության մյուս երկրներից եկած հայերը՝ հիմնականում ռուսերեն:

1929-ին թ. հայ գաղթականների երեխաների կրթական կարիքները հոգալու համար Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանը հիմնել է «Մրբոց Թարգմանաց» անունով վարժարան, որտեղ հայերի բոլոր հատվածների երեխաները իրենց կրթությունը ստանում են արևմտահայերենով: Ներկայումս համայնքի բոլոր անդամները խոսում են արևմտահայերեն:

## **Ի՞նչ ունեցած տվյալներով 1948-ից առաջ այս հողերում ապրել են 35 հազար հայ, իսկ դուք խոսում եք 8 հազարի մասին: Սա շատ լուրջ տարբերություն է, այնպես չէ՞:**

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո 1946 և 1947 թթ. Սփյուռքից դեպի Հայաստան ներգաղթի մեծ ալիք է սկսվել: Խորհրդային իշխանությունները կազմակերպել էին սփյուռքահայերի ներգաղթ դեպի Սովետական Հայաստան: Իսրայելում Յաֆա և Հայֆա քաղաքներում ապրող Հայ գաղթականները ևս միացել են ներգաղթին՝ իրենց զավակներով ու թոռներով: Պաղեստինից ներգաղթող հայերի թիվը հասել է 5 հազարի: Այն ժամանակվա Հայ Պատրիարքը նույնիսկ գնացել է Հայֆա և ճանապարհել Հայաստան ներգաղթողներին: 1948-ին Յաֆա քաղաքում ապրող մեծ թվով հայեր պատերազմի պատճառով լքել են այս հողերը, կրկին հեղ վերադառնալու հույսով, և ժամանակավորապես հաստատվել են Հորդանանում, Լիբանանում և Սուրիայում: Նշենք նաև, որ 1948-ից հետո իսրայելա-արաբական պատերազմները իրենց բացասական ազդեցությունն են ունեցել հայերի թվաքանակի վրա:

## **Երուսաղեմի հայերը հիմնականում որ մասնագիտությամբ են զբաղվում: Ոսկերչությամբ զբաղվողները շա՞տ են:**

Ամենատարածված մասնագիտությունը խեցեգործությունն է: 17 և 18-րդ դարերում Քուրսիայից այս հողեր խեցեգործության արվեստը հայերն են բերել: Նույնիսկ Քուրսիայում այդ մասնագիտությունը սկսողներն ու այն արվեստի վերածողները հայերն են եղել: Մեր օրերում առևտրի տարբեր ոլորտներում և հատկապես ոսկերչության մեջ առաջնային դիրք են գրավում հայերը: Ասում են, որ Երուսաղեմում 1915-ից հետո ամենալավ դերակները, կոշկակարներն ու ժամագործները հայերն են եղել: Սակայն նոր սերունդը համապարաններում է կրթություն ստանում: Շատ տարանդալոր բժիշկներ, ճարտարապետներ ու ինժեներներ կան: Ճիշտ կլինի ասել՝ հայերը գործունեություն են ծավալում բոլոր ոլորտներում:

## **Ես լսել եմ, որ հին Երուսաղեմում արաբներն ու հրեաները իրենց խանութները վարձակալությամբ տալիս կամ վաճառում են միայն իրենց հավատակիցներին: Եթե դա ճիշտ է, հայերը դրանից չեն տուժվո՞ւմ:**

Հայտնի է, որ հայերն իրենց մասնագիտությունների մեջ լավ են: Հայերը խնդիր չունեն ոչ հանախորդ, ոչ էլ խանութ գտնելու հարցում: Հայերը վարձակալում են թե՛ Հայոց Պատրիարքարանին պատկանող և թե՛ օտարների խանութները: Բացի այդ, հայերը չեն խառնվում հրեա-արաբ հակամարտությանը: Օրինակ, Միոնի դարպասի մոտ, որտեղով թե՛ տեղացի և թե՛ գրեսաշրջիկ շատ հրեաներ են անցնում, հայերը խանութներ ունեն և հրեաները՝ առանց խտրականության, առևտուր են անում հայերի խանութներից:

## **Հրեաների ու արաբների հակամարտությունը հայերի վրա ազդո՞ւմ է:**

Մենք քաղաքականությամբ չենք զբաղվում: Հայոց Պատրիարքության առաքելությունը սուրբ վայրերում Հայ Եկեղեցու իրավունքների, սրբավայրերի պահպանությունն է, կրոնական արարողությունների անցկացումն ու Սուրբ Երկիր ուխտագնացություններ կազմակերպելն է: Խաղաղությունն ապահովում է, որպեսզի այստեղ մենք մեր առաքելությունը իրականացնենք ավելի հեշտ ու հանգիստ: Սակայն մենք այլ խնդիրներ ունենք: Երբ մենք մեր կրոնական զգեստով շրջում ենք, ծայրահեղ կրոնական հրեաները վիրավորում են մեզ: Երբեմն մեր վրա թողոլ ու քար նետողներ են լինում: Դա ինձ համար ստորօրինակ է, քանի որ նույնիսկ Թուրքիայում հրեաները, հույները, հայերն ու մյուս ազգային փոքրամասնություններն իրենց պաշտոնական արարողություններին իրենց տարազով են մասնակցում: Իսրայելում նման վիրավորական քայլեր անողները մարզինալ փոքրամասնություն են՝ անշուշտ: Իրականում աշխարհիկ հրեաները նման պահվածքը անընդունելի են համարում ու դատապարտում են:

## Երուսաղեմում այդքան քիչ թվաքանակի բնակչություն ունենալով՝ այդքան շատ սուրբ վայրերի խնամքն ու ծախսերն ինչպե՞ս եք հոգում:

1853 թվականին Օսմանյան Կայսրության ու Յարական Ռուսաստանի միջև ծագեց Դրիմի պատերազմը, որը տևեց երեք տարի: Այդ պատերազմը բացասաբար ազդեց թե՛ Սուրբ Երկրի բնակչության, թե՛ ռուսների և թե՛ օսմանցիների վրա: Մինչև Դրիմի պատերազմը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանը իր առաքելությունը իրականացնում էր հայ ուխտավորների նվիրատվությունների շնորհիվ: Սակայն վերոհիշյալ պատերազմի տարիներին Երուսաղեմ ուխտավորներ չկարողացան գալ: Ըստ հայ պատմիչների՝ Պատրիարքարանի այդ ժամանակվա գանձարանում մնացած գումարը բավական էր միայն սոխ գնելու համար: Միաբնությունը երկու տարի գոյատևեց սոխի ապուրով: Օրվա Հայ Պատրիարք Հովհաննես Իզմիրցին, ով շատ իմաստուն և հեռատես առաջնորդ էր, մտածեց, որ՝ եթե երեք տարի տևող պատերազմում հնարավոր եղավ գոյատևել սոխի ապուրով, ապա ավելի երկար տևող պատերազմում հնարավոր պիտի չլինի ապահովել նույնիսկ սոխով ապուրը: Այդ պատճառով էլ Հովհաննես Պատրիարքը որդեգրեց բողոքովին տարբեր տնտեսական կառավարման քաղաքականություն: Նա որոշեց հայ ուխտավորների նվիրատվությունների միջոցով անշարժ կալվածքներ գնել: Հովհաննես Պատրիարքը կալվածքներ գնեց հիմնականում Երուսաղեմի պարիսպներից դուրս, որոնք ավելի էժան էին: Մինչև 1860-1870 թթ. ոչ ոք Երուսաղեմի պարիսպներից դուրս չէր ապրում: 1890-ից հետո Երուսաղեմի բնակչության թվի ավելացումը բերեց պարիսպներից դուրս տարածքների արժեքի բարձրացման: Հայոց Պատրիարքարանին պատկանող կալվածքներում շինարարական աշխատանքներ սկսվեցին, և, այդ տարբեր նշանակության շինությունները տրվեցին վարձակալության: Այդ ժամանակվանից մինչև հիմա Հայոց Պատրիարքարանը հետևում է նույն տնտեսական կառավարման քաղաքականությանը: Կարճ ասած, տնտեսական տեսանկյունից խնդիր չունենք:

## Դուք ձեզ իսրայելցի՞, թե՞ պաղեստինցի եք ներկայացնում:

Մենք մեզ նախ հայ, հետո որպես երուսաղեմցի ենք ներկայացնում: Բերթեհեմում բնակվող հայն էլ իրեն Բերթեհեմի հայ է ներկայացնում:

## Դուք փոքր համայնք եք, ձեր ավանդույթներն ու սովորությունները պահպանելու խնդիր ունե՞ք:

Առհասարակ, լեզուն, մշակույթն ու ավանդույթները պահպանելու երեք հիմնական տարրեր կան՝ եկեղեցին, դպրոցը և ընտանիքը: Եկեղեցին իր պարտականությունը կատարում է՝ տալով համայնքի բոլոր անդամներին կրոնական դաստիարակություն: Նրանք հայկական վարժարանում սովորում են կրոն, հաճախում են եկեղեցի, ինչպես նաև մասնակցում են Սուրբ Գրքի սերտողության դասերի:

Հայոց Թաղում գործում է ամենօրյա հայկական դպրոց 1929 թվականից: Համայնքի յուրաքանչյուր մանուկ վարժարան է մտնում երեք տարեկանից և այնտեղ է անցկացնում 15 տարի՝ ստանալով մանկապարտեզի, նախակրթարանի և երկրորդական դպրոցի կրթություն: Դպրոցը, համայնքի անդամներին կրթություն տալուն զուգահեռ, փոխանցում է նաև հայկական ավանդույթներն ու լեզուն, հաղորդակից դարձնում հայ մշակույթին: Այլ կերպ ասած, 200 աշակերտ ունեցող վարժարանը ավանդույթների ու սովորությունների պահպանման առումով իր պարտականությունը կատարում է իրովին:

Երուսաղեմի հայ ընտանիքներն էլ կապված են հայկական ավանդույթներին: Աշխարհագրականորեն հայերի մեկուսացված լինելը և մեր ապրած «գետտոյանման» ներփակ կյանքը կարևոր և դրական դեր են խաղում մեր լեզվի, ավանդույթների և արժեքների պահպանման գործում:

Ավելին, նոր տեխնոլոգիաների դարաշրջանում ապրելով, ամեն հայ ընտանիքում Հայաստանի հեռուստատեսության 10 տարբեր ալիքներ են դիտում: Սոցմեդիան իր դրական ազդեցությունն է

ունենում: Համայնքի երիտասարդները իրենց հայրենակիցների հետ հայերենով են հաղորդակցվում: Այս բոլորը, անկասկած, օգնում են համայնքի անդամներին պահպանելու և փոխանցելու հայ լեզուն և մշակույթը:

## Վերջերս կյանիքց հեռացած Խաղաղության Նոբելյան մրցանակ ստացած Ծիմոն Պերեսը 2001 թվականին, երբ ԱԳ նախարար էր, ասել էր, որ 1915-ի հայերի ողբերգությունն ու Հոլոքոստը հավասար բաներ չեն: Հիմա էլ նախագահ Ռուվեն Աիվին էլ տեղահանությունը որպես զանգվածային կոտորածներ բնութագրեց: Այս հարցում ձեր տեսակետը ո՞րն է:

Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու համար շատ ջանքեր գործադրած անձանցից մեկն է Ռուվեն Աիվինը: Երբ պարոն Աիվինը պատգամավոր էր ու Քնեսետի Խոսնակ, այդ թեմայով Քնեսետում կազմակերպված քննարկումներին մասնակցելու համար հրավիրել էր նաև Երուսաղեմի Հայ Պատրիարքին: Ես էլ եմ մասնակցել Քնեսետի այդ նիստերին: Նա՛ պարոն Աիվինը անձամբ էր նիստերը նախագահում: Իսկ երբ ընտրվեց Իսրայելի նախագահ, մեր մեջ հույս արթնացավ, որ Հայոց ցեղասպանությունը շուտով կճանաչվի Իսրայելի կողմից: Սակայն, նախագահ դառնալուց հետո, պարոն Աիվինը հայերի հետ տեղի ունեցածները սկսեց նկարագրել բառախաղերով՝ կոչելով այն զանգվածային կոտորածներ և ոչ ցեղասպանություն: Պարզ է, որ նախագահն ստիպված է դիմում այդ բառախաղերին, որովհետև պետական քաղաքականությունը այդպես է պահանջում: Իսրայելը կարևորություն է տալիս Թուրքիայի հետ հարաբերություններին և չի ուզում վնասել Թուրքիայի հետ ունեցած իր տնտեսական, ռազմական, աշխարհաքաղաքական և այլ տեսակի շահերը: Մենք, որպես հայ համայնք, այլևս երբեք չենք պահանջելու Իսրայելից ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Հայոց ցեղասպանության ճանաչումը Իսրայելի և հրեա ժողովրդի բարոյական պարտականությունն է, և ճանաչման պահանջը պետք է գա Իսրայելի հասարակության կողմից:

## Ինչպե՞ս է Թուրքիայի հայ համայնքի հետ ձեր հարաբերությունները:

Թուրքիայի Հայոց Պատրիարքության հետ շատ լավ հարաբերություններ ունենք, թե՛ համայնքային և թե՛ ներերկրացական հարաբերությունների տեսանկյունից: Երուսաղեմի Հայ Պատրիարքը հուլիսի 15-ի հեղաշրջման փորձի ժամանակ Ստամբուլում էր և Երուսաղեմ վերադառնալու համար օդանավակայան էր գնում: Երբ հասել էր կամուրջին, հասկանալով որ չի կարող շարունակել ճանապարհը, հետ էր վերադարձել Պոլստ պատրիարքարան:

Տոներին փոխադարձ այցելություններ են տեղի ունենում: Օսմանյան Կայսրության ժամանակաշրջանում Պոլստ պատրիարքները և հայ ամիրաները ամեն հարցում, հատկապես սուրբ վայրերի պահպանման հետ կապված, շատ են աջակցել Երուսաղեմի Հայ Պատրիարքին: Մեր ամբողջ պատմության ընթացքում պատրիարքարանների միջև հարաբերությունները չեն փոխվել:

## Ճանաչությունը Պատրիարք Նուրիան Մանուկյանի հետ

Պատրիարքը Մրբազանը մեզ դիմավորեց ցերեկային լույսով լավ լուսավորված, պատերին նախկին պատրիարքների նկարներով զարդարված ընդարձակ սրահում: Նկարներում ամեն պատրիարք ներկայացված է Պատրիարքության և համայնքի համար արված կարևոր գործերի ու հաջողությունների պատկերներով: Օրինակ 1833 թվականին տպագրությունը Երուսաղեմ բերած Չաքարիա պատրիարքը նկարված է ձեռքին գիրք բռնած, Հովհաննես պատրիարքը նկարում ներկայացված է Երուսաղեմի պարիսպների հետևում զանվող հայկական կալվածքներով:

Պատրիարք Նուրիան Մանուկյանը, առողջական վիճակի պատճառով, վաղ ժամի գնաց հանգստանալու, իսկ այդ ընթացքում ուրքի վրա խոսակցության ժամանակ հետաքրքրվեց Թուրքիայի վիճակով ու Հրանտ Դիքի դատավարությանը:

Պատրիարք Մրբազանը ապահովեց մեր շրջագայությունը հին քաղաքի Հայկական Թաղամասում երևանցի Դավիթ անունով մի երիտասարդի ուղեկցությամբ:

## Մտերիմներս ասում էին՝ ձեր երազանքն իրականացավ. 5 տարի առաջ Հայաստան տեղափոխված կանադահայ ընտանիքը չի գղջում



Թամարա Քարասաքայանն ամուսնու եւ երկու մանկահասակ երեխաների հետ Կանադայից Հայաստան է տեղափոխվել 5 տարի առաջ: Հայաստանում ոչ մի ազգական չունեցող այս ընտանիքն այստեղ բնակվելու մասին երազում էր դեռեւս 2000-ական թվականներից, թեւս Կանադայում էին ծնվել եւ Հայաստան ընդամենը մի քանի անգամ էին եկել, այն էլ հյուրի կարգավիճակով: «Ինքս 4 անգամ Հայաստան եկել եմ, առաջինը՝ 1989թ.-ին, ես հենց այդ ժամանակ սիրահարվեցի Հայաստանին, հետո ամուսնուս հետ եկանք արդեն 2001թ.-ին, սերս ամրապնդվեց: Կանադա վերադառնալուց հետո անընդհատ ասում էի՝ մի օր Հայաստան եմ տեղափոխվելու, բայց դա երազանք էր, չէի պատկերացնում՝ այդ օրը երբ է լինելու: Այնուհետև 2 անգամ էլ ամուսնուս հետ եկանք՝ երեխաներին կնքելու համար: Իսկ Հայաստան տեղափոխվելու որոշումն արագ ենք կայացրել. 2010թ. հոկտեմբերին որոշեցինք, 2011թ. հունիսին եկանք Երեւան: Մեզ ճանաչողները զարմացան, իսկ մտերիմներն ասացին՝ ձեր երազանքն իրականացավ»,- պատմում է Թամարան:



Թամարան նշում է՝ Կանադայում ինքն ու ամուսինը լավ աշխատանք ունեին, տուն, մեքենա, մի խոսքով, այն ամենն ինչ պետք է երկու երեխաներին բարեկեցիկ կյանք ապահովելու համար, սակայն որոշում են՝ երեխաների ապագան ամեն դեպքում

Հայաստանում կառուցել: 43-ամյա կինն ընդգծում է՝ Հայաստանում ապահով է, երեխաներին ամեն օր կարելի է թատրոն կամ օպերա տանել, մինչդեռ Կանադայում նախ շատ թանկ է, երկրորդ՝ 3 կամ 6 ամիսը մեկ էր հայկական թատրոն լինում, ապրելու հաճույք կա, ընտանեկան եւ ընկերական հարուստ կյանք. «Դժվարություններ բոլոր տեղերում էլ կան, մենք որոշեցինք հենց այստեղ հաղթահարել դրանք: Երբ իջանք օդանավից, գործի վերաբերյալ մտավախություն կար, ինտեգրվելու վախ կամ մտահոգություն չկար, միայն մտածում էինք՝ երեխաները կկարողանան լիարժեք կրթություն ստանալ, բժշկական օգնություն: Բայց հիմա որ երեխաներին հարցնում ենք՝ կուզեք վերադառնալ Կանադա, միանշանակ բացասական պատասխան են տալիս»:

Հինգ տարիների ընթացքում ընտանիքը շատ դժվարությունների է հանդիպել, այսօր այդ ամենի մասին Թամարան ժպիտով է խոսում, նշում է՝ դժվարություններն իրենց կոփել են, 5 տարում 15 տարվա կյանքի փորձառություն են ձեռք բերել, եթե Կանադայում մնային, այս փորձը ձեռք չէին բերի: Թե ինչ է Հայաստանին պակասում, մանկավարժ Թամարան պատասխանում է՝ մարդու իրավունքներ, սոցիալական ծառայություններ, կրթություն, բժշկական օգնություն, հաշմանդամություն ունեցող անձանց եւ տարեցների ուղղված աջակցություն:

«Հայաստանում մեծ խնդիր է նաեւ գործազրկությունը, աղքատությունը, կոռուպցիան, որն իհարկե ամբողջ աշխարհում կա, բայց քանի որ Հայաստանը փոքր երկիր է, այն աչքիդ առաջ է, ամեն օր հանդիպում ես: Մրտիս մեջ մի փոքր ցավ կա, թե ինչու պետք է իմ երկրում նման բաներ լինեն, երանի սա լինել, երանի դա լինել, երանիները շատ են: Հայաստանը սոցիալական ծառայության կարիք ունի: Շատ կուզենայի նաեւ, որ սպիտաքահայերը տարբեր տեսակի ներդրումներ անեն Հայաստանում, խոսքը միայն ֆինանսական օգնության մասին չէ»,- ասում է նա:

Թամարան իր փոքրիկ ներդրումը Հայաստանում կատարում է հետեւյալ կերպ. բացել է ուսումնական կենտրոն, որտեղ անգլերեն եւ ֆրանսերեն է սովորեցնում նոր մեթոդներով: Թամարայի խոսքով՝ երեխաներին պետք է սովորեցնել լեզուն պրակտիկայի մեջ, ոչ թե ստիպել անգիր անել: Միևնույն ժամանակ, ըստ երկարամյա փորձ ունեցող մանկավարժի, երեխան պետք է հաճույքով սովորի, իսկ դրա համար հատուկ խաղեր են հարկավոր: «Հայաստանյան դպրոցների մեթոդները սովետական են, իհարկե, կարդայն ու թելադրություն պետք է լինի, սակայն ուսուցման ձեւը պետք է փոխվի: Ես միշտ ասում եմ, որ իմ մրցակիցը «գուզլն» է, քանի որ երեխային ավելի շատ համացանցն է գրավում, քան դպրոցը, հետեւաբար պետք է այնպես անել, որ երեխային գրավես քո մեթոդներով, խաղերով: Պետք է նաեւ երեխայի հոգեբանությունը հասկանալ»,- ասում է նա:

Երբ հասցնում ես, թե ինչ կրեերի Կանադայից Հայաստան, Թամարան երկար մտածում է եւ նշում երկու բան՝ օրինակաւորություն եւ կրթության նկատմամբ «դրայվ»: Կարոտով է հիշում, թե Կանադայում ինչպես են երիտասարդները ձգտում լավ կրթություն ստանալ, ինչը Հայաստանում չկա:

«Ինձ հենց այս փաստն է մտահոգում ամենաշատը, թե իմ երեխաներն այս պայմաններում ինչ կրթություն կստանան, ինչ մասնագետներ կդառնան: Եթե Հայաստանը չփոխվի, ստիպված պետք է դուրս գնան»,- վերջում նշում է Թամարան:

## Գրիգոր Չոհրապից մինչև Հրանտ Դինք. հարյուրամյա մենություն

Դինքի սպանությունից որոշ ժամանակ անց՝ 2007 թ. փետրվարի 16-ին, «Ակոս»-ի պուբլիկացիաներից Օշին Չիլինգիրը՝ Հրանտ Դինքի մտերիմ ընկերը, հողված է հրապարակում, որտեղ Հրանտ Դինքին համեմատում է Միությունն և առաջադիմություն կուսակցության կողմից սպանված մտավորականներից փաստարան, գրող և պատգամավոր Գրիգոր Չոհրապի հետ: Հողվածը, որոշ իմաստով,

ոչ վաղ անցյալի պատմության վերլուծություն–խրատ է: «Ակոսի» 10-րդ տարեկիցին նվիրված համարում կրկին տպագրված այս հոդվածը ներկայացնում ենք Akunq.net–ի թարգմանությամբ:

Մոտ 100 տարի անց Հրանտ Դինքն արժանացավ Գրիգոր Չոհրապի ճակատագրին: Այս երկու մտավորականների առաքելության, գաղափարների և գործունեության նմանությունը շժմեցուցիչ է: Առավել զարմանալի է նրանց բնավորության նմանությունը՝ զգացմունքային, ուրախ, անվախ, ամբողջովին անկեղծ:

Ամեն անգամ, երբ հիշում եմ Գրիգոր Չոհրապին, մշտապես աչքերիս առաջ է գալիս Միջագետքի այդ անձայրածիր հարթավայրը: 1915 թ. հուլիս: Ձիավոր զինվորների խմբի հսկողությամբ արքայալեռի մի խումբ ծանր-ծանր քայլում է այս հարթավայրի վրա, փոշու ամպը ուղեկցում է քարավանին:

Քարավանը հոգևած, լուռ և սարսափած է: Տապը բազմապատկում է այս վախը, մարդուն գրկում է բանականությունից, մահը գերիշխում է մտքին ու բանականությանը: Իրավիճակը կարելի է արտահայտել Նազրմ Հիքմեթի գլուխգործոդ համարվող Շելյա Բերրեդդիին դեստանից վերցված հետևյալ տողերով.

Տապը տաք էր

Տապը ծայրն արյունոտ կույր դանակ էր...

Միջագետքի հարթավայրով առաջ ընթացող այս քարավանից փրկվածներն իրենց ողջ կյանքում չմոռացան Ստամբուլի պատգամավոր Գրիգոր Չոհրապի արյունարբու սպանությունը: Ո՛չ ատրճանակ, ո՛չ սուր և ո՛չ էլ ծայրն արյունոտ կույր դանակ: Չոհրապին սպանեցին՝ քարերով գլուխը ջախջախելով: Միություն և առաջադիմություն կուսակցությունը, նկատի ունենալով, որ գոհը մտավորական է, Չոհրապի համար արժան էր համարել սպանության ամենարյունարբու և անմարդկային ձևը:

Գրիգոր Չոհրապի մարդասպանի՝ Չերքեզ Ահմեդի երեխաներին և թոռներին, որպես ժառանգություն, մնացել է այս սպանության պատմությունը: Իսկ Չոհրապից մնացել են իր ապրած ժամանակաշրջանի մասին վկայող պատվավոր մտավորականի հոգևոր արժեքները:

1915 թ. ուղիղ 92 տարի անց արևոտ հունվարյան մի օր Ստամբուլի արտում, օրը ցերեկով, բոլորի աչքի առաջ սպանվեց մեկ այլ հայ մտավորական՝ Հրանտ Դինքը: Հանցագործը Չերքեզ Ահմեդի հոգևոր ժառանգ 17-ամյա Օզյուն Սամաթն էր: Այս երկու հանցագործության որոշում կայացնողը նույն ոճրագործության ցանցն էր՝ Միություն և առաջադիմության կուսակցության երակը: Ինչպես և Գրիգոր Չոհրապից, այնպես էլ Հրանտ Դինքից մնացել են իր ապրած ժամանակի մասին վկայող անվախ, պատվավոր և նրբակատ մտավորականի հոգևոր արժեքները: Տեսնում ենք, որ 20-րդ դարի առաջին տասնամյակում սպանված Չոհրապից մինչև Դինք ձգվող արժեքները միմյանց լրացնում են, նման են իրար: Թույլ տվեք քննել այս հոգևոր արժեքների առանցքային կետերը:

Չոհրապի և Հրանտ Դինքի ինքնությունը երեք տարրերի սինթեզ է: Միմյանց լրացնող այս տարրերից առաջինը համայնքի խնդիրներին ունկնդիր լինելու առանձնահատկությունն է, որը բնորոշ է երկուսին էլ:

Կարծես այս երկու մտավորականից յուրաքանչյուրը Մուրթ Գրիգոր Լուսավորիչն է, որը տարված էր իր համայնքում լուսավորություն տարածելու առաքելությամբ: Չոհրապը Օսմանյան կայսրության ժողովուրդների խճանկարը կազմող հիմնաքարերից մեկի՝ հայերի ներկայացուցիչն էր և պատվով էր կատարել իր ստանձնած պարտավորությունը տարբեր միջավայրերում: Մոտ մեկ դար անց նույն առաքելությունն ստանձնում է Հրանտ Դինքը: Ժամանակի ընթացքում, ոչ իր կամքով, դառնում է համայնքի աշխարհիկ ներկայացուցիչն ու առաջնորդը:

Չոհրապը կառավարման, կրթական, կրոնական, արվեստի և էթիկայի բնագավառում պայքարում էր, որպեսզի փոխվեն այն պայմանները, որոնցում հայտնվել էր իր համայնքը: Լավատեսությունը նրա գաղափարախոսության և գործունեության հիմնական մղիչ ուժն էր:

Մտավորապես մեկ դար հետո Հրանտը պայքար էր մղում նույն խնդիրների դեմ: Նա իր ուսերին էր վերցրել համայնքի

հարյուրամյա մեռությունն ու գոյության հիմնական խնդիրները: Մի կողմից պայքարում էր հայկական ինքնությանն առնչվող խնդիրների դեմ, մյուս կողմից էլ գնում էր թալանված համայնքի անշարժ գույքերի հետքերով:

Երկու մտավորականի այս անձնական հատկանիշները կարելի է նկատել համայնքային հասարակական և քաղաքական միջոցառումների ժամանակ, ինչպես նաև հոդվածներում և ստեղծագործություններում ընդգծված հասարակական և քննադատական, իրատեսական դիրքորոշման մեջ:

Գրիգոր Չոհրապի ինքնության մյուս հիմնական տարրը օսմանյան մտավորականի կեցվածքն էր: Ընտրվել էր հայ համայնքի տեղական խորհրդի անդամ, Օսմանյան խորհրդարանի երեք նստաշրջանի պատգամավոր էր: Ձերբակալվել ու բանտարկվել էր բռնատիրության դեմ արտահայտվելու պատճառով:

Հրանտ Դինքը ներկայացված չէր ո՛չ համայնքի ղեկավար պաշտոններում և ո՛չ էլ խորհրդարանում: Իր պատմական առաքելությունը կյանքի էր կոչել՝ «Ակոս» թերթը քաղաքացիական հարթակի վերածելով: Բռնատիրության, չարաշահումների և հակաժողովրդավարական կիրառումների դեմ պայքարի պատճառով կյանքի տարբեր ժամանակներում ձերբակալվել, բանտարկվել և կտտանքների էր ենթարկվել:

Օսմանյան կայսրության անկման ժամանակաշրջանում, որպես օսմանյան մտավորական, Գրիգոր Չոհրապի որդեգրած դիրքորոշումը ցույց է տալիս, որ նա շրջահայաց քաղաքական գործիչ էր: Չոհրապն այն կարծիքին էր, որ հայ համայնքի և կայսրության խնդիրները չի կարելի իրարից անկախ քննել:

Եթե հաշվի չառնենք տարբեր պարագաները, ապա այս հարցում Հրանտի դիրքորոշումը գրեթե համընկնում է Չոհրապի դիրքորոշման հետ: Նա նույնպես իրարից չէր առանձնացնում Թուրքիայի և համայնքի խնդիրները: Օրինակ՝ պնդում էր, որ հայ համայնքի համար ամենաիդեալական լուծումը ընկած է Թուրքիայի ժողովրդականացման հիմքում:

Հրանտը կարծում էր, որ համայնքի խնդիրները լուծում կստանան ժողովրդավարական Թուրքիայում, իսկ վերջինիս՝ ԵՄ ինտեգրումն էլ կարագացնի այս գործընթացը:

Եթե անդրադառնանք Չոհրապի քաղաքական ինքնությանն ու գաղափարներին, ապա կտեսնենք, որ նա ազատական և ազատատենչ ուղի էր բռնել, փորձում էր հեռու մնալ Միություն և առաջադիմության կուսակցությունից, որը ձգտում էր վերջ դնել ավանդական բռնատիրական օսմանյան ղեկավար ավանդույթներին և հաստատել բռնապարտյան կառավարման համակարգ: Չոհրապը սկզբնական շրջանում աջակցում էր Միության և առաջադիմության կուսակցությանը: Երկրորդ սահմանադրական շրջանի հաստատած մասնակի ազատական մթնոլորտում ստեղծված Ահրար (Լիբերալներ) կուսակցությունն իր գաղափարներին ավելի մոտ էր: Յուրացրել էր այս կուսակցության նպատակը՝ այն է ազատական հասարակություն ստեղծել: Այդ իսկ պատճառով պաշտպանում էր ոչ թե կենտրոնացման, այլ թագածառանգ Սաբահաթինի սպակետորոնացման գաղափարը: Գաղափարները, որոնք Չոհրապը պաշտպանում էր օսմանյան խորհրդարանում, կյանքի կոչվեցին միայն հանրապետության տարիներին՝ 1961 թ. սահմանադրությամբ: Չոհրապը բարձրացնում էր այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կենտրոնական կառավարող ուժի բևեռացումը, աշխատավոր դասի պայմանագրի և գործադուլի իրավունքը, հասարակության բոլոր խավերի և շերտերի համար հավասար ժողովրդավարական և ազատական իրավունքները, օսմանյան հասարակությունը կազմող տարատեսակ էթնիկ խմբերի միջև հավասարությունը, դարեր շարունակ գյուղացիների շապկին ծանրացած գյուղատնտեսական հարկերի թեթևացումը, կանանց նոր իրավունքների ճանաչումը և այլն:

Հրանտը ևս, առնվազն Չոհրապի չափ, լավ հռետոր էր: Անհերքելի է հեռուստածրագրերում, սեմինարներին, գիտաժողովների և նմանատիպ այլ միջոցառումների ժամանակ, ինչպես նաև հոդվածներում ճշմարտությունը բարձրաձայնելու նրա





վիճակի ստեղծագործություններին ծանոթանում են դեռևս դպրոցից՝ քանզի դրանք ընդգրկված են պարտադիր ուսումնական ծրագրերում: - Ժամանակակից դասականներից ոչ մեկի ստեղծագործությունները նրա ստեղծագործությունների նման սիրված չեն և ժողովրդականություն չեն վայելում:

Փարսիներ բարոյական և հասարակական խնդիրներ արծարծող պոետ է: Նա տարրական պարագաների՝ կենդանիների՝ թռչունների՝ թռչի և ասեղի՝ ցորենի ու ռապի հատիկի միջոցով լավագույնս նկարագրում է կեղեքվածների և ջրափորների վիճակն ու նրանց խնդիրները: «- Սաբայից մինչև Նիսն» գրքի հեղինակը գրում է © «Նա չի գրում անձնական ցանկությունների՝ կանացի սիրո և խառնվածքի մասին» փիլիսոփայական ուղղություններից զաղափար չունի և չի ձգտում քարոզել կամ հերքել որևէ ուղղություն՝ այլ ցանկանում է իր բանաստեղծության և տաղանդի միջոցով բարեփոխել բարոյականությունն ու հասարակությունը»:

Փարսիներ սպրտեց ընդամենը երեսունհինգ տարի՝ սակայն համարվեց Ֆորուդ Ֆառոքիսգադի և Միմին Բեհբահանիից առաջ եղած իրանցի ամենամեծ և տաղանդավոր բանաստեղծուհին: Համարձակորեն կարելի է ասել՝ որ նրա ստեղծագործություններում չկա զաղափարների կրկնություն՝ ինչն ուրիշների մոտ սկսվել էր դեռևս նրանից տասնյակ տարիներ առաջ:

## Թռչչի երազանք

Թռչելու իդձով աղավնու մի ձագ  
Բացեց թևերը մի օր համարձակ,  
Ճյուղից-ճյուղ թռավ, որ հասնի պուրակ՝  
Տանիքից թռավ մինչև ամփի ափ:  
Մակայն այդ ճամփան շատ երկար թվաց,  
Ամեն ինչ մթնեց աչքերի առաջ,  
Ահ ու սարսափից տեղում քարացավ,  
Հոգնած ու տանջված կես ճամփին մնաց:  
Մերթ մտամոլոր չորս կողմն էր նայում,  
Մեկ էլ գլուխը թևի տակ առնում՝  
Ոչ եղածի հետ կարող էր հաշտվել,  
Ոչ էլ կարող էր դեպի ետ թռչել:  
Չէր հասկանում, թե ինչ եղավ իր հետ՝  
Տան ճանապարհը կորցրել էր անհետ:  
Երեկոն իջավ, քաղցած էր, ծարավ  
Եվ նույնիսկ քունը աչքերից փախավ:  
Թուլացած ընկավ, վախից կծկված.  
- Մայրիկ ջան, ո՞ր ես,- ողջ ուժով ճչաց:  
Մոտակա ծառից մայրն այսպես խոսեց.  
- Մեծամտության վերջը դա է հենց,  
Մեծամիտները ընկնում են այդպես:  
Թռչելու համար դու դեռ շատ փոքր ես  
Համբերություն ու խելք պիտի ձեռք բերես:  
Թռչել քեզ համար դեռ վաղ է, դժվար,  
Սկանակները միշտ ընկնում են վար:  
Ժամանակը կտա համարձակություն,  
Ջանքն ու եռանդը՝ թևեր ու փետուր:  
Դեռ սիրտդ թույլ է, մարմինդ՝ տկար  
Ճակատագրի խաղերը՝ ներկա,  
Դու դեռ չես ելել փողոց ու կտուր,  
Չես տեսել վանդակում տանջվելը իզուր՝  
Երեխաների հաճույքի համար:  
Տեսա մտքերով փորձ ձեռք չես բերի,  
Չես կարող կյանքում դու առաջ քայլել,  
Թե չունես պաշար գիտելիքների:  
Կյանքի դասերը պետք է լավ սերտել՝  
Նախ ամուր կանգնել ոտքերի վրա,  
Ապա թռչելու մասին մտածել:  
Անհար է առանց թևերի թռչել,  
Ճախբերուց բացի կա նաև ընկնել:

## Դամբանական

Այժմ սև հողն է բարձր բանաստեղծի,  
Ով բարձր էր գրական անդաստանում  
Եվ քաղցր էր իր խոսքն ու սիրելի,  
Թեև քաղցրություն չհաշակեց կյանքում:  
Խոսքերով հարուստ այնքան ու բառերով, սակայն  
Հանգուցյալին տրվող աղոթք ու Յասին<sup>1</sup> է մուրում,  
Թող բարեկամները միշտ հիշեն նրան.  
Տխուր է այն սիրտը, որ չունի բարեկամ,  
Աչքի մեջ հողը շատ է տառապալի,  
Իսկ քարը կրծքին ծանր է անտանելի:  
Այս մահիճի տեսքից նա՝ դասեր կանոնի  
Ով ճիշտը տեսնելու ունակ աչք ունի:  
Ով էլ որ լինես, որտեղից էլ գաս  
Մա է լինելու կայանդ վերջին:  
Մարդը, որքան էլ ծով լինի անտակ,  
Անճարակ է դառնում այս սահմանին:  
Լուռ հանձնվելն է լուծումը միակ,  
Հնազանդվելը պատգամին վերին:  
Ծնել, սպանել և հանձնել հողին՝  
Հնազույն ավանդույթն է աշխարհի,  
Այս տանջարանում նա է երջանիկ,  
Ով ամոքել է կյանքում գեթ մեկին:

\*\*\*

Հոգևոր մի այր հարցրեց իր որդուն.  
-Գիտե՞ս ինչ է նշանակում մահմեդական լինել.  
Կյանքի բանալի է, բարեպաշտություն,  
Ազնվություն է, չվնասել, մարդկանց ծառայել:  
-Այդ բնորոշմամբ ,-տղան ասաց,-մեր քաղաքում  
Մի մահմեդական կա միայն, եւ հայ է նա էլ:

\*\*\*\*\*

## Ակնարկ Հայ Ժողովրդի հայրենադարձությանը

19-20-րդ դարերում

Գր. Էդիկ Բաղդասարյան



Երևանի բերդի գրավումը

Պարսկական բանակները նորից ավերեցին հայկական տասնյակ գյուղեր, հազարավոր հայեր սրի քաշվեցին, իսկ շատերն էլ գերվեցին: Պարսկական ավերածությունների ու ոճրագործությունների մասին է վկայել Վ. Պոտտոն<sup>2</sup>. «... 1826 թվականի ամռանը, երբ պարսկական ուժերը անսպասելիորեն ներխուժեցին մեր սահմանները եւ ամպրոպը նախ ճայթեց անպաշտպան հայ բնակչության գլխին... գյուղերն ամայացրին,

<sup>1</sup> Դուրանի սուրաներից, որը հաճախ ընթերցվում է մահամերձ հիվանդի սնարին:  
<sup>2</sup> - Հայ Ժողովրդի Պատմություն, Հ. 5, էջ 139:

երեխաների ու կանանց մեծ մասը տանջամահության ենթարկեցին, հարյուրավոր ընտանիքներ գերության քշեցին»:

Շիրակում Հասան խանի կատարած շարագործությունների, հայկական գյուղերի ավերման, բնակչության գանգվածային գերեվարության ու ոչնչացման ցնցող պատկերները սրտի կակիծով ու խորը ցասումով է պատկերել Խաչատուր Աբովյանն (1805-1848) իր «Վերք Հայաստանի» վեպում. «... Ինչ որ գեղցոնց հայն էր Աստված հեռու տանի: Շատի տավարը հանդումը մնաց, մալը շոլումը, ոչխարը սարումը:... Ա՛խ ո՛ր մեկն ասեմ, սիրտս արին ա դառնում, ձեռներս դող ընկնում, աչքերս սեւանում: Երանի նրան, որ էսպես բան ո՛չ տեսել, լսել ա, ո՛չ էլ կտեսնի, կլսի. բայց մեր ողորմելի ազգը՝ հազար անգամ ա տեսել, լսել, քաշել: Քար չկա մեր երկրումը, որ Հայի արնով ներկված չի»<sup>3</sup>: Ապա, նա շարունակում է. «էս ժամանակին էր հունիսին 1825-ին որ արինակեր Հասան խանը, սարգարի փոքր ախպերը՝ որ հազար անմեղ գլուխ կերել, հազար տուն քանդել, քաղաք, գեղ ավերել...»<sup>4</sup>: Իսկ հայոց գերեվարության մասին, գրել է նա.



Հայագրի գեներալ Մադաթով

«էսպես էին քոչում մեր խեղճ, ողորմելի խալխը, շունքի Ղզըբաշն իմացել էր, կամ ինքն էլ ուզում Ռսի հետ կռիվ բաց անի, ուզում էր՝ որ թե երկիրն առնեն, խալխն էլա չի կորցնի, որ տանեն Թեհրան, իրանց ծառա շինեն. յա Թուրքացենեն, յա հողի հետ հավասար անեն: Ա՛խ, հոգիս դուս ա գալիս, ընչի՞ հին դարդերս էլի նորոգեցի, ընչի՞ էս բանին ձեռք տվի»<sup>5</sup>:



Սակայն պարսկական խաներն անկարող եղան ընկճելու հայ ժողովրդի ազատագրական ոգին: Ամենուրեք կազմակերպելով աշխարհազորային ջոկատներ ու միանալով ռուսական սահմանապահ զորքերին, հայերը հերոսաբար մարտնչում էին թշնամու բանակների դեմ:



Գեներալ Պասկեիչ

«Աղալարները մեծավորի դուռն ու շեմը էնպես էին բռնել՝ որ մեկ հայի չէին էլ թողնում՝ որ շունչ էլա հանի: էլ Փամբակու հայերը Պարսից խորամանկությունը լավ իմանալով եւ իրանահայ քաշած դառն օրերը միտք բերելով՝ ամեն տեղ պատրաստություն էին տեսել: Պարնի գեղը, Գյումրի՝ որը բերդ ուներ, պատերը շինել, մեջն էին մտել: Խլղարաքիլիսեն բերդ ու էր շունենալով՝ սելեր ու գուլթան իրար վրա էր դրել, սանգար կապել, ունեցած-չունեցած էնտեղ դայիմացրել՝ գեղարենքն էլ իրանց մեջ առել, ինչ հին ժամանակից թուր, թվանք ունեին՝ հավաքել...»<sup>6</sup>:

Պատերազմի առաջին շրջափուլում (1826 թ. հուլիս-օգոստոս) Կովկասյան կորպուսի հրամանատարությունը հարկադրված եղավ դիմել ակտիվ պաշտպանության, մինչև Ռուսաստանից կատանար լրացուցիչ ուժեր հակահարձակման անցնելու համար: Հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու նպատակով, ռուսական սահմանապահ կազմակերպությունները բնակիչներից կազմված աշխարհազորային ջոկատների օգնությամբ դիմում են ռազմաստրատեգիական կարեւորություններ կայացնող բերդերի ու անցումների պաշտպանությունը:

<sup>3</sup> - Խաչատուր Աբովյան, «Վերք Հայաստանի», Երեւան 1959, էջ 98-99.  
<sup>4</sup> - Նույն տեղում, էջ 101:  
<sup>5</sup> - Նույն տեղում էջ 100:

<sup>6</sup> - Նույն տեղում, էջ 102:

Այգապիսի կարեւոր նշանակութիւն ունեցող ամբողջութիւն էր Շուշիի բերդը: Տեղի ուսակական կայսրը (բաղկացած 1700 զինվորից) եւ շրջակայքի 22 հայկական գյուղերից նրան օգնութեան եկած 1500 աշխարհազորայիններ ձեռնամուխ եղան Շուշիի հերոսական պաշտպանութեան: Ավելի քան վեց շաբաթ բերդը պաշարվեց Աբբաս Միրզայի մեծաքանակ բանակի անընդմեջ հարձակումներից: Գեներալ Երմոլովին ներկայացրած իր զեկուցագրերից մեկում, Շուշիի բերդապահ կայսրի պետ գնդապետ Ռեուտը գրել է. « Բերդը պաշտպանող հայերի վերաբերյալ պարտքս եմ համարում բացատրել, որ նրանց ծառայութիւնը արժանի է ուշադրութեան, որովհետեւ նրանք բոլորը գործում էին գերազանց քաջութեամբ, դիմացան բազմաթիվ գրոհների, ետ մղեցին թշնամուն խոշոր կորուստներով, տանում էին պարենի պակասը եւ բնավ չէին մտածում բերդը հանձնելու մասին, թեեւ վրա էր հասել կատարյալ սովը»<sup>7</sup>:

Եթէ Շուշի բերդի պաշտպանութիւնը փակեց Աբբաս Միրզայի բանակի ճանապարհը Ղարաբաղից դեպի Կովկասի վարչական կենտրոնը՝ Թիֆլիս, ապա նույն խնդիրը մյուս ճակատում հաջողությամբ կատարեցին Շիրակի եւ Լոռի-Փամբակի ուսակական կայսրները եւ նրանց օգնութեան եկած հայ աշխարհազորային ջոկատները՝ Երեւանի սարգարի եւ նրա եղբոր՝ Հասան խանի զորքերի դեմ մղած համատեղ պաշտպանական մարտերում: Լոռի-Փամբակ եւ Շամշաղի-Խազախի պաշտպանական մարտերում աչքի ընկավ Գրիգոր Մանուշարյանի 500 հեծյալներից կազմված աշխարհազորային ջոկատը:

1826 թ. օգոստոսի վերջերին Կովկասյան հատուկ կողոպտւող Ռուսաստանից օգնական ուժեր ստացավ, ուղարկվեցին նաեւ մի շարք գեներալներ ու բարձրաստիճան սպաներ: Զգալիորեն փոխվեց կովող ուժերի հարաբերակցութիւնը, որը Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար գեներալ-ադյուտանտ Ա. Երմոլովին եւ նրա օգնական հայազգի գեներալ-լեյտենանտ Վալերիան (Ռոստոմ) Մադաթովին<sup>8</sup> հրաման տվեց հարձակուժ սկսել թշնամու դեմ: Ռուսական մի զորագունդ, կազմված 2000 զինվորներից, գեներալ Վ. Մադաթովի հրամանատարութեամբ, 1826 թ. սեպտեմբերի 3-ին Շամքուր գետի ափին ջախջախեց Ամիրխանի հրամանատարութեամբ գործող պարսկական 10 հազարանոց բանակը եւ ետ գրավեց Ելիսավետպոլը (Գանձակը): Աբբաս-Միրզան շուրջ 25 հազարանոց բանակով Քյուլաիկ-Ղաչից շարժվեց Գանձակ, նպատակ ունենալով ջախջախել ուսակական կովկասյան զորքի գլխավոր ուժերը եւ առաջանալ դեպի Թիֆլիս: Գանձակի մոտ գեներալ Պասկևիչի զորաբանակը, սեպտեմբերի 13-ին արշուձակի ճակատամարտում ջախջախեց Աբբաս-Միրզայի բանակը, Ռազմի դաշտում թողնելով մոտ 2000 սպանված, պարսկական բանակը փախուստի դիմեց: Ռուսներն այդ ճակատամարտում վերջրին ավելի քան 1000 գերի, գրավեցին երկու թնդանոթ, չորս զինադրոշ եւ այլ ուսակական մարտի տեսակի զենքեր:

Նույն ժամանակաշրջանում Փամբակում, Շիրակում եւ Ապարանում հողթևական դուրս եկավ Գեներալ-Մայոր Գենիս Դավիդովի զորագունդը: Չնայած պարսկական բանակի ուժերի գերիշխանութիւնը, Կովկասյան կորպուսին հաջողվեց 1826 թ. աշնան վերջերին Գյուլիստանի պայմանագրով ճանաչված Անդրկովկասի ուսակական տիրապետութեան սահմանները լիովին մաքրել պարսկական բանակներից: 1826թ. աշնանը գեներալներ

Երմոլովի, Մադաթովի, Պասկևիչի, Գենիս Դավիդովի զորաբանակների կազմում անմուտց խիզախութեամբ օրինակներ ցույց տվեցին հայ, վրաց եւ այլ աշխարհազորային ջոկատները: Սրանցից մեկն էր երգրուցի քաջակորով երիտասարդ Մարտիրոս Վեքիլյանի հեծյալ ջոկատը, որը մտնում էր Գ. Դավիդովի զորագնդի մեջ (1826 – 1827 թթ. մարտերում):



Հայկական կամավորական զոււարտակներից մեկի զինանշանը, 1827

1826 թ. Շամքուրի նշանավոր ճակատամարտում գեներալ-լեյտենանտ Վ. Մադաթովի զորաբանակում բազմաթիվ հայ աշխարհազորայիններ աչքի ընկան իրենց անձնագոհութեամբ եւ հերոսութեամբ: Շիրակում ու Փամբակում, Զանգեզուրում ու Ղարաբաղում եւ այլուր, պարսիկների դեմ անձնագոհ կերպով կռվում էին նաեւ շատ հայ կանայք, օրինակ՝ գեղջիկուհի Մանուշակը (որը Հասան խանի հրոսակախմբի դեմ հերոսաբար զոհվեց), հայ գեղջիկուհի Հաթայի (1826թ դարաբաղի կռիվներում): **(Շար. 2)**

\*\*\*\*\*

**Իտալական Արկո քաղաքում Դանիել Վարուժանի բանաստեղծություններն ու Կոմիտասի երաժշտությունն են հնչել**



Հունվարի 15-ին իտալական Արկո քաղաքում կայացել է Դանիել Վարուժանի պոեզիայի երեկոն, հաղորդում է La Voce del Trentino պարբերականը: Վարուժանի պոեզիան աշխարհով մեկ սիրված հայերի համար հիշողություն եւ խորհրդանիշ դարձավ: «Վարելի է փորձել ոչնչացնել մի ողջ ժողովուրդ, բայց բավական է մեկ մարդ, ընդամենը մեկ խոսք, որպեսզի ամբողջը վերածնվի», – հայտարարել են վարողները: Վարուժանի բանաստեղծությունների հետ հնչել են նաեւ ժողովրդական պատմություններ եւ կատակներ՝ հայկական բանահյուսություն, որը նա ուզում էր հավաքել, սակայն չհասցրեց: Կատարվել են նաեւ հայ կոմպոզիտորների երաժշտությունը Կոմիտասի «Կռունկ»-ն ու Արամ Խաչատրյանի «Մուսերով պարը», նաեւ ժամանակակից կատարողների իտալացի կիթառահար Պինո Դանիելի եւ հայ երաժիշտ Արտո թունիզբոյաջանի ստեղծագործությունները: Բեմադրությունը հեղինակել էին Տրենտո քաղաքի Բոնպորտի կոնսերվատորիան, Sezione di Riva del Garda կամավորների կազմակերպությունն ու Տրենտոյի Հանուն իտալալոլայան եւ մարդու իրավունքների ֆորումը:

<sup>7</sup> - Հայ ժողովրդի Պատմութիւն, Հ. 5, էջ 140:  
<sup>8</sup> - Գեներալ-լեյտենանտ ( 大佐 ) Վալերիան (Ռոստոմ) Մադաթովը, ծնվել է Ղարաբաղում, Վարանդայի Ավետարանոց (Չանխաչի) գյուղում: Նա աչքի ընկավ 1712թ. պատերազմում (փոխղեկարպետի 大佐 աստիճանով) իսկ 1813-1814թ. արտասահմանյան արշավանքից վերադարձավ Գեներալ-Մայորի ( 大佐 ) աստիճանով:

# چکیده کتاب تاریخ آرتساخ (قره باغ)

(۱۱)


نگارش: دکتر ادیک باغداساریان

## تقسیمات اداری و مناطق مسکونی

### منطقه مارتونی

دارای وسعت ۰/۸ هزار کیلومتر مربع، بخشی از ولایت قدیمی واراندا را تشکیل می‌دهد. قدیمی ترین درخت در پهنه شوروی سابق به سن ۲۰۱۰ سال در این منطقه واقع است. دارای ۳۵۳ بنای تاریخی-معماری ارمنی است که قدیمیترین آنها وانک آماراس می‌باشد که در ۲۰ کیلومتری جنوب غربی شهر مارتونی واقع است. این وانک به قدمت وانک اچمیادزین است و در سده چهارم میلادی بدست گریگور روشنگر و سپس نوه‌اش اسقف گریگوریس بنا شده و مدفن شخص اخیر در همین مکان واقع است. در این منطقه تعداد زیادی کلیسا، وانک، قلعه، برج و بارو از زمان‌های قدیم باقی مانده است. جمعیت منطقه در سال ۱۹۸۷ بالغ بر ۲۵/۴ نفر بود. که ۹۰٪ آنها ارمنی بودند مرکز این منطقه شهر مارتونی (از سال ۱۹۹۳ مونه آبرد) دارای جمعیت ۶/۵ هزار نفری است و تا سال ۱۹۲۵ خوناشن نام داشت. در این منطقه ۴۰ روستا و شهرک وجود دارد. جدول زیر اطلاعات مختصری ارائه می‌دهد:

نام	سال بنا	کلیسا	جمعیت ۱۹۸۷	شرکت در جنگ دوم	تعداد کشته (جنگ دوم)	توضیحات
۱- شهر مارتونی			۶۵۰۰	۲۱۶	۸۰	بنام مستعار آلکساندرمیناسیان (مارتونی) از ۱۹۲۵ اینگونه نامگذاری شد.
۲- چارتار	۴-م.	آمناپرکیچ ۱۷۸۷	۳۸۹۵	۱۰۰۰	۵۰۰	سده ۱۹ مدرسه
۳- برداشن (قرقالا)	قدیمی	آستوازاین و غیره	۱۷۱۱	۴۵۰	۱۸۰	مدرسه ۱۸۷۳، موزه تاریخ
۴- گیشی	قدیمی	-	۱۳۱۳	۳۷۰	۱۸۳	مدرسه ۱۸۸۸
۵- سس (SOS)	قدمت ۳۰۰ سال	آماراس در جنوب سس	۹۷۹	-	۱۳۸	مدرسه ۱۹۰۸
۶- هریهر	سده ۴-۵ م.	گریگوریس مقدس ۱۶۶۷-۷۶	۶۱۰	۲۰۰	۸۹	مدرسه ۱۹۰۸
۷- کرت (kert)	اوایل سده ۱۷ م.	گورگ ۱۹ م.	۶۰۸	۲۷۰	۱۱۵	مدرسه ۱۹۲۴
۸- کارهونج	سده‌های ۷-۶ م.	-	۲۲۱	۵۷	۳۰	مدرسه
۹- ماچکالاشن	فعالی ۱۹۲۳	-	۶۷۱	۱۳۲	۵۱	مدرسه ۱۹۲۳
۱۰- زواتغ	قدیمی	کارمیر دهه ۱۸۹۵	۱۴۰	۱۲۶	۶۸	مدرسه ۱۸۷۳
۱۱- خرخان	۱۸ م.	۱۹۱۰ ویران	۸۴	۱۳۷	۶۷	-
۱۲- تاغواراد	باستانی، فعلی ۱۱ م و سده ۱۹	بردهوج	۱۱۹۶	۶۷۰	۲۳۴	مدرسه ۱۹۲۳
۱۳- زارداناشن	-	-	۹۰	-	-	-
۱۴- شخر	-	وارتان مقدس	۳۳۶	۱۳۰	۵۶	مدرسه
۱۵- سختوراشن	-	درخت سرو ۲۰۱۰ ساله	۴۳	۲۴۳	۱۳۱	-
۱۶- کارمیر شوکا	-	-	-	-	-	مدرسه ۱۹۲۷
۱۷- سارگاشن	قدیمی	-	۲۳۵	۲۱۴	۷۳	مدرسه
۱۸- کلخوزاشن	قدیمی	آستوازاین	۳۷۱	۲۲۵	۱۰۶	مدرسه پیش از دوران شوروی
۱۹- مسمنا	۱۶-۱۵ م.	شونسکا	۷۴	۸۵	۴۴	"
۲۰- قاواخان	فعالی ۱۸ م.	آستوازاین ۱۸۷۱	۱۴۱	۱۴۵	۸۹	مدرسه ۱۸۷۳
۲۱- خنوشیناک	قدیمی	آستوازاین ۱۸۵۵	۸۱۰	۲۱۰	۱۱۶	مدرسه ۱۹۰۵
۲۲- ننگی	قدیمی فعلی ۱۶ م.	وانک گریگور روشنگر سده ۱۹ وانک یخراهوغ سده ۷	۴۶۴	۲۳۰	۱۵۰	مدرسه ۱۸۹۰



## ماهنامه لویس - رویه ۱

۲۳- هاغورتی	قدیمی	آستوازان ین	۳۱۳	۳۵۰	۱۵۲	درخت ۵۰۰ ساله مدرسه ۱۸۷۳
۲۴- موشکاپات	قدیمی	معبد وارتان سپهسالار کلیسا ۱۸م.	۸۲۷	۲۷۲	۱۲۷	مدرسه مختلط ۱۹۰۶
۲۵- اسپیتاکاشن	-	-	۳۷۸	-	-	مدرسه
۲۶- کاغاردسی	قدیمی	تارگمانچا تس	۳۰۱	۴۶۰	۱۲۳	مدرسه ۱۸۷۳
۲۷- پاراواتومب	قدیمی	کلیسا و کلیسای کوچک ۱۸۱۱	۱۵۳	۱۰۸	۴۶	مدرسه
۲۸- آشان	قدیمی	آستوازان ین	۵۷۶	۴۸۰	۱۰۶	مدرسه ۱۸۷۳
۲۹- نورشن	-	هوانس مقدس	۴۴۲	۱۴۴	۸۸	مدرسه مختلط ۱۹۰۸
۳۰- هانتسی گیوغ	قدیمی (۵م.)	آستوازان ین	۹۹۵	-	-	مدرسه ۱۸۷۰
۳۱- امیشچان	قدمت ۵۰۰ ساله	-	۱۳۱	۱۲۵	۴۸	مدرسه
۳۲- آودور	دهه ۱۷۴۰	آستوازان ین	۱۲۲	۱۱۲	۷۲	مدرسه ۱۹۰۶
۳۳- میورشن	قدیمی سنگ‌های قبر سده ۱۳-۱۲م.	آستوازان ین ۱۸م.	۱۸۷	۱۵۶	۸۲	مدرسه ده ۱۸۷۰

غیر از روستاهای ارمنی نامبرده روستاهای امیرالار، خوماوند، قرداغلو و مغانلو نیز وجود دارند که آذری نشین بودند.

### منطقه هادروت

دارای وسعت ۰/۷ هزار کیلومتر مربع و پوشیده از جنگل است. پهنه هادروت با قلمرو ملیک نشین دیزاک تطابق دارد. بلندترین نقطه آن قله کوه دیزاپایل (۲۴۸۰ متر) می‌باشد. پرستشگاه "اسپیتاک" زیارتگاه قدیمی است. در این منطقه ۴۲ روستا وجود دارد. مرکز آن شهرک هادروت است. تعداد ۴۸۶ اثر تاریخی در این منطقه باقی است. مهمترین آنها وانک گوئیچ یا کنش (ktesh سده ۱۳ م.) در دامنه کوه توغاسار، وانک اُخته درنی (oxto drni) (سده ۷ م.) و غیره هستند. جدول زیر اطلاعات مختصری درباره مناطق مسکونی می‌دهد:

نام	سال بنا	کلیسا و سال بنا	جمعیت	شرکت کننده در جنگ دوم	کشته‌ها	توضیحات
۱- هادروت	قدیمی (دوران پیش از میلاد)	-	۲۲۲۹ ۶	-	-	درخت چنار ۸۰۰ ساله
۲- متس تاغلار	سده ۱۰م.	آمناپرکیچ ۱۸۴۶	۱۵۹۵	۶۲۰	۲۹۷	مدرسه ۱۸۷۵
۳- هین تاغلار	قدیمی	-	۱۹۸	۲۲۰	۱۰۰	مدرسه سده ۱۹
۴- توغ	قبل از سده ۱۷۳۶ م.۷	هوانس مقدس	۱۴۲۱	۵۳۰	۲۲۰۰	دژ مستحکمی بوده است. مدرسه ۱۸۷۳
۵- تومی	سده ۵.	کلیسای کارمیر سده ۱۰ م.	۸۴۷	۴۰۰	۲۰۰	آثار سده ۱۸-۵ باقی است. مدرسه ۱۹۰۳
۶- آزوخ	قدیمی	آستوازان ۱۷۸۴	۷۰۵	۱۷۲	۹۹	مدرسه مختلط ۱۸۹۵
۷- تراختیک (دراختیک)	م. ۱۶	کلیسای نارکاتسی	۲۴۲	۱۲۰	۶۰	مدرسه
۸- خدسابرد	قدیمی	کلیسا ۱۸۳۶	۱۵۴	۱۵۵	۸۴	مدرسه ۱۸۸۰

ماهنامه لويس - رويه ۲

نام	سال بنا	کلیسا و سال بنا	جمعیت	شرکت کننده در جنگ دوم	کشته‌ها	توضیحات
۹- خانزاور	قدیمی	هوانس مقدس ۶۹۹ م.	۱۵۰	۹۱	۴۸	مدرسه ۱۹۰۸
۱۰- آراکیال	۱۸م.	آستوازاین ۱۷۴۵	۲۵۳	۳۶۰	۹۶	مدرسه ۱۸۹۰
۱۱- بانازور	-	آستوازاین ۱۸۵۸	۲۱۸	۲۲۹	۱۴۴	مدرسه ۱۸۷۳
۱۲- کوچیک	۱۸م.	هاروتیون مقدس ۱۷۴۱	۸۹	۷۰	۳۶	مدرسه
۱۳- تاغاسر	سده ۱۰م.	آستوازاین سده ۱۷م.	۵۰۲	۱۸۱	۹۴	مدرسه
۱۴- ادیللو	سده ۱۷م.	کلیسا ۱۶۷۱	۴۹۰	بنای یادبود وجود دارد		مدرسه
۱۵- آراپاگیادوک	۱۸م.	-	۳۳	۷۲	۳۵	مدرسه ۱۹۲۱
۱۶- آقیولاغ	۱۹۲۸	-	۲۷۰	۱۲۸	۶۴	مدرسه
۱۷- بلوتان	۱۶م.	استپانوس مقدس	۱۴۹	۹۰	۴۵	مدرسه
۱۸- خیرمانجوغ	-	-	۴۶	۹۰	۴۵	نامش ترجمه کلمه ارمنی کالاتغ است.
۱۹- هاخولو	۱۹م.	-	۵۸۵	-	-	مدرسه ۱۹۱۳
۲۰- موخرنس	۴م.	سارکیس مقدس	۳۱۱	۱۸۴	۶۳	مدرسه
۲۱- ماماتازور	-	میناس مقدس سده ۱۷م.	۲۳۲	۱۰۹	۳۵	مدرسه، پل سده ۱۳
۲۲- ملیک جانلو	-	-	۵۶	۱۰۵	۵۲	کتابخانه، پاشگاه
۲۳- دولاتار	۱۴م.	-	۳۰۸	۱۰۱	۸۹	مدرسه
۲۴- میولاکادار	۱۶م.	کلیسا ۱۸۶۴	۶۸	۱۰۱	۶۴	مدرسه
۲۵- تسامزور	۱۶م.	آستوازاین کلیسا ۱۸۶۴	۶۸	۱۰۱	۶۴	مدرسه
۲۶- هااکاو	۱۷م.	آستوازاین ۱۶۲۱	۱۲۸	-	-	مدرسه
۲۷- تاغوت	۱۲م.	هوانس مقدس ۱۸۳۶	۱۹۸	۱۳۴	۵۱	مدرسه
۲۸- کمرکوچ (کارمرا کوچ)	قدیمی	استپانوس مقدس سده ۱۳	۳۸	-	-	-
۲۹- شاغاخ (ساریشن)	قدیمی	استپانوس مقدس سده ۱۳م.	۳۸	-	-	-
۳۰- کاراگلوخ	-	-	۹۶	-	-	مدرسه ابتدایی
۳۱- تسور tsor	قدیمی	کلیساهای لوساپر کوچ ۱۳-۱۵م. آمتا پر کوچ ۱۰م.	۷۷	-	-	مدرسه
۳۲- جیلان	قبل از سده ۱۸	آستوازاین ۱۸م.	۲۰	-	-	مدرسه
۳۳- پتروساشن	قدیمی	استپانوس مقدس ۱۲م.	۱۴	-	-	دژ توماس ۹م.
۳۴- وانک	قدیمی	وانک اسپیتاک خاچ (سده ۱۳-۱۲)	۱۴۱	-	-	مدرسه
۳۵- نوراشن	-	-	۹۰	-	-	-
۳۶- زاگوری	قدیمی	زاگواوانک ۱۲م.	۱۱۵	-	-	-

بجز از روستاهای یاد شده چند روستای دیگر نیز وجود دارند: دودوگچی، چیراگوس، ادیشان، تانک، سوسالخ، سالاکیاتین، دو روستای اخیر قبلا "آذری نشین بودند.

# Լույս են տեսել

## Էդիկ Բաղդասարյանի նոր գրքերը

-ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ը 10 ՀԱՏՈՐՈՎ

-ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ը 7 հատորով

-Հայ-պարսիկ դարավոր բարեկամությունը –(Պարսկերեն) دوستی دیرینه ایرانیان و ارمنیان

-ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ը՝

(պարսկերեն) 2 ՀԱՏՈՐՈՎ – جلد اول و دوم تاریخ ارمنیان ایران

-Աղվանք, Աղբրեջան, Ոճրագործություն եւ Ծավալապաշտություն

(Պարսկերեն) اران، آذربایجان، جنایت و توسعه طلبی

-Հայ Գրականության Պատմություն 3 հատորով(Պարսկերեն) تاریخ ادبیات ارمنی در ۳ جلد

-Հայկական հարցը, հնագույն շրջանից մինչև մեր օրերը, 2 հատորով (Հայերեն)

-Շահնամն եւ հայկական աղբյուրները(Պարսկերեն) شاهنامه و منابع ارمنی

-Կոմիտասը եւ Հայ դասական երաժշտության ձևավորումը (Պարսկերեն)

کومیتاس و شکل گیری موسیقی کلاسیک ارمنی

-Գիքորը, անգլերեն, 2014, اثر هوانسی تومانیان برگردان انگلیسی، تورونتو، 2014

-Հողվածների ժողովածու, Հատեր Ա,Բ- Պարսկերեն

گزیده مقاله های فارسی ادیک باغداساریان، جلد ۱ و ۲، تورونتو، 2014

-Հողվածների ժողովածու, Հատեր Գ, Հայերեն

گزیده مقاله های ارمنی ادیک باغداساریان، جلد سوم، تورونتو، 2014

-Հայ գրականության ընտրանի (Անգլերեն եւ պարսկերեն) Տորոնտո, 2014.

گزیده نثر و نظم ادبیات ارمنی، برگردان فارسی و انگلیسی – ادیک باغداساریان، تورونتو 2014

-Ակնարկ Պարսկերենի Ուղղագրության, (Պարսկերեն) Տորոնտո, 2014.

نگاهی بر شیوه نگارش فارسی – ادیک باغداساریان، تورونتو 2014

-Թարգմանության մասին (Պարսկերեն), Տորոնտո, 2014

نگاهی بر فن ترجمه، فارسی – ادیک باغداساریان، تورونتو 2014

-Հայոց ցեղասպանության Պատմություն, (Պարսկերեն), Տորոնտո, 2014

تاریخ نژادکشی ارمنیان، فارسی – ادیک باغداساریان، تورونتو 2014

-Հայկական Հարցի Մանիֆեստ , Տորոնտո 2014

-Իրանահայ Համայնքի Ամբողջական Համառոտ Պատմություն, 2 հատորով, հատոր 1 և 2, Տորոնտո, 2015:

-Անանիա Շիրակացի, Մաթեմատիկա, Պարսկերենի թարգմանեց Էդիկ Բաղդասարյանը, Տորոնտո, 2015:

Anania Shirakatsi, Mathematics, translated into Persian by Edic Baghdasarian, Toronto, 2015.

آنانیا شیراکاتسی دانشمند سده ۷ میلادی، ریاضیات، ترجمه ادیک باغداساریان، تورونتو 1394.

-Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն, Պարսկերենի թարգմանեց Էդիկ Բաղդասարյանը, Տորոնտո, 2015:

Anania Shirakatsi, Cosmography, translated into Persian by Edic Baghdasarian, Toronto, 2015.

آنانیا شیراکاتسی دانشمند سده ۷ میلادی، کیهانشناسی، ترجمه ادیک باغداساریان، تورونتو 1394.

-History of Mathematics in Armenia, in English, by Edic Baghdasarian (Ed. Germanic), Toronto, 2015

Մաթեմատիկան Հայաստանում (Անգլերեն), աշխատասիրեց Էդիկ Բաղդասարյանը (Էդ. Գերմանիկ), Տորոնտո, 2015

-Դավադրությունը Հայ Ժողովրդի Պատմության մեջ, Տորոնտո, Կանադա, 2016

-The Armenian Question Manifesto (in English) Toronto 2016

Edic Baghdasarian, The History of the Armenians in Iran, Two volumes, Vol. 1-2, in English, Toronto, 2016.

-Aran, Azerbaijan, Crime and expansionism, Toronto, 2016

تورونتو 1395 – فارسی جمهوری آراوات – تورونتو 1395

Հայկական ընտանիք, պատմա-ազգագրական ակնարկ, Տորոնտո, 2016, The Armenian Family throughout the history,

خانواده ارمنی در درازنای تاریخ، تورونتو 2016، Toronto, 2016,